



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

355.2  
4-30

15861

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Յ Ա Ղ Ա Գ Ս

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԵԱՆ,

ԲԱՐՁՐԱԳՈՅՆՍ ՀԱՍՏԱՏԵԱԼ

Ի 1 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1874.



Թ Է Ո Դ Ո Ս Ի Ա

1874

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

355.2

4-30

Յ Ա Ղ Ա Գ Ս

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԵԱՆ,

և

ԲԱՐՁՐԱԳՈՅՆՍ ՀԱՍՏԱՏԵԱԼ

Ի 1 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1874.



ԹԵՈՒՄՍԻԱ

596  
1874  
355.2



1874

2009

2070



6974

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ

Զինուորական պարտաւորութեան վրայ ելած  
Կայսերական նոր Մանիֆէստը եւ Կարգադրու-  
թիւնը ամէն մարդ պարտական է եւ կցանկայ  
տեղով գիտնալ: Այս Կարգադրութեան ռուսե-  
րէն բնագրին բիւրաւոր օրինակները արդէն  
տարածուած են Ռուսաստանի ամէն կողմերը .  
բայց որովհետեւ մեր ազգայնոց մէջ խիստ շատ  
անձինք կան՝ որ ռուսերէնը պարզ չեն հասկը-  
նար, ահա նոցա իրաւացի բաղձանքը կատարելու  
մտքով՝ կիրատարակեմք առաջիկայ հայերէն  
Թարգմանութիւնը՝ որքան կարելի է բաց ոճով՝  
եւ ամենայն զգուշաւոր ձեռնութեամբ:

Дозволено Цензурою. С. Петербургъ, 23 Марта 1874 г.

ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՄԱՆԻՖԷՍՏԻ Ի 1 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1874.

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ՄԵՔ ԱՂԵՔՍԱՆԳԻ ԵՐԿՐՈՐԳ,

ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ

ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍՏՅ,

ՔՍԿՍԻՈՐ ԼԵՀԱՍՏԱՆԻ, ԻՇԽԱՆ ՁԻՆԼԱՆՏԻՈՅ

ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ.

Յայտ առնեմք ամենայն հաւատարիմ հպատա-  
կաց ՄԵՐՈՅ.

Անդադար հող եւ ինձամբ ունենալով ՄԵՐ  
Կայսերութեան օգտին վրայ, եւ ջանալով  
մէկմէկէ լաւ կարգադրութիւններ անել ա-  
նոր մէջ, չէինք կարող ուշադրութիւն չը-  
դարձընել այն կերպին վրայ՝ որով մինչեւ  
ցայժմ՝ կկատարուէր զինուորական պարտա-



Լորութիւնը : Մինչեւ ցայժմ ի գործ դրուած  
 օրէնքներուն նայելով՝ այս պարտաւորու-  
 թիւնը դրուած էր միայն քաղաքական ու  
 գիւղական վիճակի անձանց վրայ, եւ ուստի  
 հպատակաց երեւելի մէկ մասը գուրս կմնար  
 այն պարտականութենէն՝ որ պէտք է ամե-  
 նուն համար միակերպ սրբազան պարտք  
 մի լինի : Այսպիսի կարգը զանազան պարա-  
 գաներով խառնուած, չէր յարմարեր թա-  
 գաւորական կառավարութեան արդէն փո-  
 փոխուած հանգամանքին, ուստի եւ չէր կըր-  
 նար այժմու պատերազմական պահանջմունք-  
 ները լիով կատարել : Վերջի ժամանակնե-  
 րուս անցքերը յայտնապէս ցուցուցին՝ թէ  
 տէրութեանց ոյժը զինուորաց բազմութեան  
 կամ սակաւութեանը վրայ միայն չէ, հապա-  
 մանաւանդ զինուորականաց բարոյական եւ  
 մտաւորական յատկութեանցը վրայ է : Եւ  
 այս յատկութիւնները այն ատեն միայն գե-  
 րագոյն աստիճանի կատարելութեան կհաս-  
 նին՝ երբոր հայրենեաց պաշտպանութեան  
 գործը կլինի ժողովրդեան հասարակաց գործ,  
 երբոր ամէնքն ալ՝ ինչ կօչմանէ եւ վիճակէ  
 եւս լինին՝ կմիաբանին այս սրբազան գործը  
 կատարելու :

Անպատճառ հարկաւոր ճանչնալով վերա-  
 նորոգել Կայսերութեան զինուորական զօ-  
 րութեանց կերպը՝ ժամանակիս փորձերուն  
 համեմատ, ՄեՔ 1870 տարւոյն մէջ հրամայե-  
 ցինք Պատերազմի Ոստիկանին որ ձեռք զար-  
 նէ շարագրելու այնպիսի կանոններ որ աւե-  
 լի յարմար լինին ՄեՔ զինուորաց պակաս-  
 ները լրացնելու, զինուորական պարտաւո-  
 րութեան տակ ձգելով ընդհանրապէս ամե-  
 նայն վիճակի մարդիկը :

Փորձով գիտէինք որ ՄեՔ հպատակները  
 պատրաստ են իրենք զիրենք զոհելու հայ-  
 րենեաց . այս նոցա պատրաստականութիւնը  
 մտահոյսութիւն տուաւ ՄեՁի հաւատալու՝ թէ  
 ՄեՔ կօչման ձայնը Ռուսաց սրտերուն մէջ  
 յօժարակամ արձագանգ պիտի գտնէ : Չխա-  
 բուեցանք ՄեՔ յայտմ մասին . ՄեՔ քաջակո-  
 րով ազնուականները եւ զինուորագրութեան  
 տակ չընկնող ուրիշ վիճակներու անձինքը  
 քանի քանի անգամ յայտարարութիւններ  
 անելով հասկըցուցին ՄեՁի իրենց ցնծալից  
 բազմանքը՝ որ մնացեալ ժողովրդեան հետ  
 մասնակից լինին զինուորական ծառայու-  
 թեան պարտքին ծանրութիւնը վերցնելու  
 ՄեՔ այն յայտարարութիւններն ընդու-



Նեցանք ուրախական զգացմամբ պարծանաց, եւ ջերմեռանդ երախտագլխութեամբ առ Նախախնամութիւնն Աստուծոյ՝ որ տուեր է Մեզի արքունական գաւազան այնպիսի ժողովրդեան վրայ՝ յորում հայրենասիրութիւնը եւ անձնանուիրութիւնը ամենայն վիճակի մարդկանց յատկութիւնն է, եւ կտակաւանդ ժառանգութեան պէս որդւոց որդի կանցնի:

Որպէս զի զինուորական պարտաւորութեան նոր կանոնադրութիւնը շարագրուի վերոյիշեալ գլխաւոր սկզբանց վրայ, այնուհետեւ առանձին յանձնաժողով որոշուեցաւ զանազան կառավարչական տեղեաց պաշտօնեաներէն եւ ուրիշ այնպիսի անձինքներէ կազմուած, որ այս մասին համար պէտք եղած տեղեկութիւնները լիով ունէին: Յանձնաժողովոյն շարագրած, եւ յետ մանրամասն դատաքննութեան կայսերական Խորհրդարանէն սրբագրուած կարգադրութիւնը բոլորովին յարմար է Մե՛ր մտքին: Այս հիմնական սկզբունքէն առնելով՝ թէ կայսերական գահուն եւ հայրենեաց պաշտպանութիւնը սրբազան պարտականութիւն մի է ամենայն ռուս հպատակի, այս կարգադրու-

թիւնը զինուորական պարտաւորութիւնը կատարելու կհրաւիրէ բոլոր արական սեռի անձինքը՝ առանց թոյլատրելու դրամական փրկանք եւ կամ յօժարակամ փոխանակութիւն: Նոր օրէնքին զօրութիւնը պիտի չտարածուի միայն Խաղախաց երկրին ընակիչներուն, որ զինուորական ծառայութիւնը արդէն կկատարեն՝ անոր համար դրուած կարգադրութեամբ, նմանապէս պիտի չտարածուի մէկ քանի այլասերունդ ժողովրդոց Անդրկովկասեան երկրին եւ ուրիշներու՝ որ յիշատակուած են Մե՛ր առ կառավարիչ Մենաթն տուած հրովարտակին մէջ, եւս եւ ուրիշ հեռաւոր տեղերու վրայ, որոց համար առանձին կանոններ պիտի հրատարակուին: Յետ այսպիսի բացառութեանց եւ քանի մի առժամանակեայ արտօնութեանց՝ որ այն հրովարտակին մէջ նշանակուած են, կայսերութեան եւ Ահհաստանի թագաւորութեան արական սեռի ժողովուրդը 20 տարեկան հասակին հասնելէն ետեւ վիճակ հանելու պարտական պիտի լինի. այն վիճակով պիտի որոշուի՝ ընդ ամենայն մէկ անգամ միայն՝ թէ ո՞վ պարտական է երթալ ներգործական ծառայութեան, եւ ո՞վ ազատ



կմնայ անկից: Յամաքային զօրաց մէջ մըտ-  
նողներուն համար թէպէտ որոշուած է 18  
տարուան ծառայութեան ընդհանուր ժամա-  
գրութիւնը, բայց վեց տարի անցնելէն ե-  
տեւ, եւ եթէ կարելի է անկից ալ առաջ,  
նօրա պիտի արձըկուին ու դառնան իրենց  
տները, պարտական լինելով հաւաքուիլ գալ  
գրօշակի տակ՝ երբօր տէրութիւնը հրաւի-  
րէ, միայն կարգէ դուրս պատերազմական  
կարեւորութիւն պատահած ժամանակները:  
Ծովային զինուորութեան մէջ մտնողներուն,  
նմանապէս այն զօրաց մէջ գրուողներուն որ  
հեռաւոր տեղեր կգտնուին, առանձին ժա-  
մանակներ որոշուած են ծառայութեան հա-  
մար: Այն երիտասարդաց ու պատանեաց  
համար որ դպրոցներու մէջ ուսում կառ-  
նուն, եւս եւ սկզբնական դպրոցներու մէջ,  
զինուորաց կարգին մէջ մնալու պարտակա-  
նութեան ժամանակը՝ խաղաղութեան ատեն  
շատ կհամառօտուի, նայելով նոցա առած  
կրթութեան աստիճանին ու տեսակին. բաց  
յայնմանէ ուրիշ երեւելի թեթեւութիւն-  
ներ ալ կտրրուին նոցա:

Այս հիմանց վրայ շարագրուած զինուո-  
րական պարտաւորութեան կարգադրութիւ-

նը հաստատելով, եւ Մե՛ր հպատակները հրա-  
ւիրելով՝ յանուն հայրենեաց՝ որ պատուա-  
կան է յաչս ամենեցուն՝ ի ջերմեռանդ կա-  
տարումն իրենց վրայ դրուող պարտականու-  
թեանց, Մե՛ր դիտաւորութիւն չունիմք ետ  
կենալու այն սկզբունքներէն՝ որոց անխոտոր  
կերպով հետեւած եմք բոլոր Մե՛ր թագաւո-  
րութեան ժամանակին: Մե՛ր չեմք փնտռեր,  
ինչպէս որ մինչեւ ցայժմ եւս չեմք փն-  
տած, զինուորական փառաց ցոլքը, եւ  
Մե՛զի յԱստուծոյ պարգեւեալ լաւագոյն մա-  
սըն եւ վիճակ կհամարիմք առաջնօրգել  
Ռուսաստանի ի մեծութիւն՝ ճանապարհաւ  
խաղաղաւէտ յառաջագիմութեան, եւ կա-  
տարելագործութեամբ ներքին ամենատեսակ  
բարելաւութեանց: Մեծազօր զինուորու-  
թեան մը կարգադրութիւնը ոչ պիտի դադ-  
րեցընէ եւ ոչ ետ պիտի ձգէ այս կատարե-  
լագործութիւնը. ընդհակառակն պիտի ա-  
պահովէ անոր կանոնաւոր եւ անընդհատ  
ընթացքը, հաստատելով տէրութեան ան-  
վտանգ ապահովութիւնը, եւ հեռու պահե-  
լով անոր հանգստութիւնը խանգարող ո՛ր  
եւ իցէ թշնամութենէ, Իսկ այն մեծամեծ  
արտօնութիւնները որ կպարգեւին այժմ



ուսումը եւ կրթութիւնն առած երիտասարդաց, նոր տեսակ գործիք թող լինին Մեթոդովրդեան մէջ ճշմարիտ լուսաւորութիւնը տարածելու. վասն զի զայն կտեսնեմք Մեթ Տիմն եւ առհաւատչեայ ապագայ երջանկութեան նորա:

Տոեալ ի Սանքթ-Փեթերպուրկ, ի 1 աւուր յունուարի, յամի ծննդեան Քրիստոսի հազար ութ հարիւր եօթանասուն եւ չորս, եւ ի Թագաւորութեան ՄեթոՅ լիննետասներորդի:

Ի քնագրին Նորին Կայսերական Մեծութեան իսկական ձեռամբն ստորագրեալ է,

Ա.Ղ.Ե.ՔԱՆԿԻՐ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ Ա.Ռ. ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱԹՆ.

Հաստատելով յայտմ աւուր զինուորական պարտաւորութեան նոր Կարգադրութիւնն, կհրամայեմք,

Ա. ի գործ պնել այս Կարգադրութիւնը բովանդակ Կայսերութեան եւ Լեհաստանի Թագաւորութեան մէջ, չտարածելով ոորազօրութիւնը միայն,

1) Խաղախներու երկրին զինուորական բրնակիչներուն վրայ, որ արդէն զինուորական պարտաւորութիւնը կկատարեն ըստ առանձին կարգադրութեան, եւ

2) ի ներքոյ նշանակուած տեղերուն եւ ժողովրդոց, որոց համար այն պարտաւորութիւնը կատարելու կարգն ու կանոնը պիտի դրուի յետոյ առանձին կարգադրութեամբք՝ տեղական յատկութեանց համեմատ. որք են սորա. ա) Անդրկովկասեան երկիր, Թուրքաստան, Ծովեղբերեայ եւ Ամուրեան նահանգները, Եագութեան նահանգին Սուեանեքոլիմսք, Վերխոյեանսք եւ Վիլիւսք շրջանակ-



ները, ենխէյսքի կուսակալութեան Թուռու-  
խան եւ Պողոզան բաժինները, Թոմսքի կու-  
սակալութեան Թողուրեան բաժինը եւ շրը-  
ջանակները, եւ Թոպուքի կուսակալութեան  
Պեռեզովեան եւ Սուրղութեան շրջանակները,  
եւ բ) Հիւսիսային Կովկասու, Աժտէրխանի  
կուսակալութեան, Թուռլայ եւ Ուրալ նա-  
հանգաց, եւ արեւմտեան ու արեւելեան Սի-  
պիի ամէն կուսակալութեանց եւ նահան-  
գաց այն այլասեռ ընակիչները՝ որ մինչեւ  
ցայժմ զինուորական պարտաւորութեան տակ  
ձգուած չեն՝ ոչ անձամբ եւ ոչ փողով. նմա-  
նապէս Սամոյետները՝ որ կընակին Արքան-  
կէի կուսակալութեան Մեզենսք գաւառին  
մէջ:

Բ. Պաշխրոնները ու Թէփթեարները զի-  
նուորական պարտաւորութիւնը կատարելու  
կոչելով՝ ազատել զանոնք վաթսնական քո-  
փէկ գլխադրամ վճարելու առանձին տուր-  
քէն որ դրուած էր իրենց վրայ մայիսի 14-ին  
1865-ին հրատարակուած կանոնով:

Գ. Զինուորական պարտաւորութենէ ազատ  
մնալու արտօնութիւնը պահել, հանդերձ  
այն արու զաւակներով որ աշխարհք եկած  
են իրենց գաղթականութեան ժամանակը,

ա) Բանի որ կենդանի են, այն Ռուսնաքները՝  
որ Ռուսաստան եկած են 1854-ին. օտար եր-  
կրէ եկողները որ տեղաւորուած են կալուա-  
ծատեարց երկիրներու վրայ, եւ ընդունած  
են Ռուսաց հպատակութիւնը ի վերայ հի-  
ման կարծեաց Կայսերական Խորհրդարանին  
զոր Մեթ հաստատած եմք ի 18 Դեկտեմբերի  
1861. Չեհերը (Պոհեմիացիք) որ գաղթական  
եկած են հարաւային արեւմտեան Ռուսաս-  
տոն, որոց վրայ տարածուած են այն ամե-  
նայն իրաւունքներն ու արտօնութիւնները՝  
զորս տուած է Կայսերական Խորհրդարանին  
վերոյիշեալ կարծիքը. այն օտար երկիրնե-  
րու ժողովուրդները՝ որ 1872-ին յունուարի  
1-էն առաջ՝ եկած ընակած են Լեհաստանի  
Թագաւորութեան մէջ, ընդունելով Ռուսաց  
հպատակութիւնը. եւ վերջապէս այն ռուս  
գաղթականները՝ որ ներքին կուսակալու-  
թիւններէն եկած ու տեղաւորուած են ար-  
քունական երկիրներու վրայ նովոկէորկիեւսք  
ամրոցին քով: — բ) Յընթաց 20 ամաց՝ իրենց  
գաղթականութեան ժամանակին, այն Մեհնոնիթ-  
ները որ նոր գաղթականներով եկած ընա-  
կած են՝ ըստ կանոնաց 19-ին նոյեմբերի 1851  
ամի՝ Կայսերութեան մէջ. նմանապէս այն



Մենոնիթները որ տեղաւորուած են երկրա-  
տէրերու հողերուն վրայ եւ ընդունած են  
Ռուսաց հպատակութիւն, համեմատ կարծեաց  
կայսերական Խորհրդարանին՝ զոր Մեթ հաս-  
տատած եմք ի 18 Դեկտեմբերի 1861.—գ) Յըն-  
քացս 20 սարոյ, հաշուելով մարտի 31-էն 1860,  
Վլատիկաւկաս քաղաքին այն բնակիչները՝  
որ անոր քաղաքացի գրուած են այս հրո-  
վարտակիս հրատարակուելէն առաջ, եւ Ա.  
նախա ու Նովոռոսիյոք քաղաքներուն բնա-  
կիչները, որ այժմ՝ գետափնեայ Թէմրիւք  
քաղաքին բնակիչ կհամրուին. եւ դ) Յընքացս  
6 սարոյ՝ այս հրովարտակիս հրատարակուած օրէն  
հաշուելով, այն ամենայն Մենոնիթները որ  
կայսերութեան մէջ բնակած են, եւ իրա-  
ւունք պիտի չունենան վայելելու յօգուա-  
ծոյս ք պարբերութեանը մէջ նշանակուած  
արտօնութիւնը :

Դ. Այն անձինքներն որ կհաստանի Թա-  
ղաւորութեան եւ արեւմտեան երկրին մէջ  
ելած վերջին խռովութեան ժամանակը ըս-  
պանուած են՝ հաւատարիմ մնալով կայսե-  
րական գահին եւ օրինաց, նոցա ընտանեաց  
մէջէն զինուորական պարտաւորութենէ ա-  
զատ թողուլ իւրաքանչիւր այնպիսի ազգա-

տոհմէ երեք հոգի, նշանակելով այն ազատ  
մնացողներուն մէջ՝ մեռնողին նախ օրդիբը,  
եւ ապա անոր հարազատ թուները :

Ե. Զինուորական պարտաւորութենէ ա-  
զատ թողուլ այն անձինքը որ մինչեւ այս  
հրովարտակիս ելած օրը ծառայութեան մէջ  
գտնուելով Վարշաւի ու Վեներայի, Վարշաւի  
ու Պրոմպէրկի, Վարշաւի ու Թէրէսիօլի եր-  
կաթուղիներուն եւ Լոծինի գործատան ճա-  
նապարհին վրայ, իրաւունք ունին ազատ մը-  
նալն ի զինուորագրութենէ ըստ 13 յօդուա-  
ծոյ կանոնաց՝ որ գրուած էին Մեթ յունիսի  
26-ին (յուլիսի 8-ին) 1868-ին հանած Մանի-  
ֆէսթին հետ՝ կհհաստանի Թագաւորութեան  
մէջ լինելու զինուորագրութեան համար,  
թէ որ վիճակի մարդիկ եւ ինչ անձինք  
ազատ են զինուորագրութեան պարտաւո-  
րութենէն :

Զ. Զինուորական պարտաւորութեան կար-  
գադրութիւնը ի գործ գրուելէն ետեւ, ա-  
ռաջին հինգ զօրաթողովոց ատենը հրաման  
տալ որ այն անձինքը՝ որոց ընտանիքը կիւ-  
տիական կամ արուեստական վիայութիւննե-  
րու նայելով՝ կբանեցընեն առեւտրական,



գործարանական կամ արուեստական տներ, նոցա զինուորական ծառայութեան վիճակ հանելէն ետեւ յետաձգել՝ այսինքն ուշացընել՝ անոնց զինուորութեան մտնելը մինչեւ չորս տարի. բայց այս բանէս դուրս լինին այն տեղերը՝ որոց մէջ մանր աւուտուր կլինի ոգելից ըմպելիքներու (Կարգ. ընկ. յոդ. 301, ըստ յաւելումսոյ 1869 ամի, եւ ծանօթութիւն), թէպէտ եւ այն անձինքը գտնուին այնպիսի հօր կամ պապու քով՝ որ կարող են աշխատիլ եւ ունին եղբայրներ, բայց տասնըվեց տարեկանէն պակաս հասակով. այս յետաձգութիւնները զինուորական ծառայութեան ժամագրեալ ատեններուն մէջ չհաշուել, ոչ ներգործականին եւ ոչ պահետի:

Է. Կոչողական թաղերը ձեւացընելը ըստ կանոնաց՝ որ ցուցուած են զինուորական պարտաւորութեան կարգադրութեանը 67 եւ հետագայ յօդուածներուն մէջ, վերջացընել ամէն տեղ երեք ամսուան մէջ՝ հաշուելով այս հրովարտակիս իւրաքանչիւր կուսակալութեան մէջ ընդունուած օրէն:

Ը. Այն անձինքը որ զինուորական պարտաւորութեան նոր կանոնադրութեանը հա-

մեմատ՝ ենթարկուած են առաջին զօրափողովոյն, այսինքն որոց ծննդեան 20 տարին լրացած է 1873 տարւոյն մէջ, անոնց նշանակել կէս տարուան ժամանակ՝ այս հրովարտակիս հրատարակուած օրէն հաշուելով, որպէս զի յայտարարութիւն տան կոչողական թաղերուն մէջ գրուելու համար՝ ըստ 98 եւ 96 յօդուածոց նոյն կարգադրութեան:

Թ. Ազատագորաց (ախալցենիե) ծառայութեանը կոչուելու ենթակայ համարիլ, բաց ի այն անձինքներէն որ ենթակայ են անոր ըստ 10 եւ 154 յօդուածոց կարգադրութեան զինուորական պարտաւորութեան, մինչեւ քառասնամեայ հասակը, զանոնք ամէնքը՝ որ զինուորական ծառայութեան մէջ չեն գրանուիր, դուրս հանելով միայն հրովարտակիս Դ եւ Ե յօդուածներուն մէջ նշանակուածները, որոնք յունուարի 1-ին 1874-ին 21 տարեկանէն վեր են. նմանապէս զանոնք որ այժմ զինուորական ծառայութեան մէջ կը գտնուին, որք այն ծառայութեանէն պիտի արձրկուին՝ դեռ 40 տարին չհասած:

Ճ. Այն քրտաւորակիս որ ծանուցուած է Մեր Մանրիկութեանը նախնայորէրի 22-ին 1873-ին





յունուարի 15-էն մինչեւ 15 Փետրուարի 1874, կատարել ըստ կանոնաց՝ որ դրուած են այն Մանիֆէսթին մէջ: Իսկ այն պարաքի մնացորդները որ պիտի մնան զինուորագրական թաղերու վրայ, եւ ընդհանրապէս բոլոր պակասորդները կամ առնելիքները, այն զօրաժողովին կատարուելէն ետեւ՝ հաշիւներէն դուրս ձգել:

ԺԱ. Հաշուի առնուած այն զինուորագրական անդորրագիրներուն (վիթրակցիա) մասին՝ որ կրնան մնալ մէկուն մէկալին ձեռքը, նախընթաց յօդուածին մէջ նշանակուած 1874-ի զօրաժողովին կատարուելէն ետեւ, պահել հետագայ կանոնները.

ա) Այն անդորրագրերը պէտք է ներկայացուին՝ ոչ անադան քան թէ հոկտեմբերի 1-ին 1874-ին՝ զինուորական պարտաւորութեան համար բացուած՝ գաւառական, շրջանակային եւ քաղաքական ատեանները՝ ըստ պատկանելոյն, եւ անոնք պարտական են կամ փոխել այն անդորրագրերը նոր ձեւով ելած անդորրագրերու, եւ կամ անոնց վրայ մակագրութիւն անել՝ անդորրագրին ներկայացուցմանը համար:

բ) Ո՛ր եւ իցէ անդորրագիր որ ներկայանայ գաւառական, շրջանակային կամ քաղաքական ատեան մը, կգրուի յանուն մէկ անձի մը միայն՝ ըստ ցանկութեան անոր տիրոջը, եւ այնուհետեւ չկրնար ուրիշ փոխանցուիլ կամ օտարի ձեռք անցնիլ:

գ) Անդորրագրերը պիտի ընդունուին հաշուի դրուելու՝ երբոր զինուորական պարտաւորութիւն կատարելու կոչումն լինի՝ միայն այն անձին համար՝ որոյ անունովը գրուած է անդորրագիրը, կամ թէ նորա եղբորը, ազգականին կամ խորթ եղբորը, կամ արեւակցին կամ հարազատին, եւ կամ հօրեղբօր կամ մօրեղբօրըդուոյն:

դ) Այն անդորրագրերը որ վերոյիշեալ որոշուած ժամանակին չեն ներկայացած՝ փոխելու համար, իրենց ոյժը կկորսընեն.

ե) Անդորրագիր ունեցողը կարո՞յ ներկայացընել զայն Տէրութեան Գանձատանը, եւ ընդունիլ չորս հարիւր ութսուն հիւսիս եւ

զ) Անդորրագրերը գնելուն կարգը եւ ժամագրութիւնները պիտի որոշէ ելեւմտից



Ոստիկանը՝ յետ ստուգելուն ժողովրդեան մէջ  
պտըտող անդորրագրերուն թիւը :

Կառավարիչ Սենաթը պարտական է այս  
հրովարտակիս կատարմանը համար պէտք  
եղած կարգադրութիւնը անել :

Ի ընագրին նորին Կայսերական Մեծուծեան իսկական  
ձեռամբն ստորագրեալ է,

ԱՂԵՐՍՍԱՆԴՐ.

Է Ս. Փեթերպուրկ,  
1 յունուարի 1874.



Ի ընագրին նորին Կայսերական  
Մեծուծեան իսկական ձեռամբն  
գրեալ է,  
« Ըստ այսմ կատարեցի » :

Ի Ս. Փեթերպուրկ,  
է 1 Յունուարի 1874.



## ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅԱՂԱԳՍ

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Տէրութեան գահուն եւ հայրենեաց պաշտ-  
պանութիւնը սրբազան պարտականութիւն է իւ-  
րաքանչիւր ռուս հպատակի : Ժողովրդեան արա-  
կան սեռը՝ առանց ամենեւին վիճակի խտրու-  
թեան՝ կընկնի զինուորական պարտաւորութեան  
տակ ( 1 ) :

2. Զինուորական պարտաւորութենէ ստրկով

( 1 ) Военская повинность.



ազատելու եւ յօժարակամ անձի մը հետ փոխուելու հրաման չկայ :

3. Այն էրեկամարդիկը որ 15 տարեկանէն վեր են, կրնան Ռուսաց հպատակութենէ արձրկուիլ այն ատեն միայն՝ երբոր բոլորովին կատարեն իրենց զինուորական պարտաւորութիւնը, կամ թէ երբոր այնպիսի վիճակ (1) մը հանեն՝ որ կազատէ զիրենք հաստատուն զինուորաց կարգին մէջ ծառայելէն :

4. Եթէ մէկը Կայսերութեան այնպիսի տեղերը անցնի բնակելու, ուր որ զինուորական պարտաւորութիւնը կկատարուի առանձին կանոնադրութեանց համեմատ, — եթէ այն անձը 15 տարեկանէն վեր է, այս պարտաւորութիւնը պիտի կատարէ ըստ հասարակ կարգին :

5. Տէրութեան զինուորական ոյժը կազմուած է հաստատուն զօրքէ (2) եւ ազատազօրքէ (3) : Այս ազատազօրքը կկանչուի միայն պատերազմի ժամանակ կարգէ դուրս պարագաներու մէջ :

6. Հաստատուն զինուորական զօրութիւնը կկազմուի ցամաքային ու ծովային զօրքերէ :

7. Ցամաքային հաստատուն զօրք կազմողներն են  
ա) այն զօրքը որ ամէն տարի կամբողջանայ՝ բովանդակ Կայսերութեան մէջէն զօրաժողով (4) անելով :

բ) պահեստի զօրք (1), որոյ նպատակն է ամբողջութիւն տալ զինուորական ուժին, եւ կբաղկանայ այն մարդիկներէն որ արձրկուած են՝ առանց վերջացընելու ամբողջ ծառայութեան համար որոշուած ժամանակը :

գ) Խազախ զօրքեր, — եւ

դ) այն զօրքերը որ այլասերունդ (2) անձինքներէ կբաղկանան :

8. Ծովային զօրքերը կբաղկանան ներգործական ծառայութեան մէջ գտնուողներէն եւ պաքստի զինուորներէ :

9. Ցամաքային եւ ծովային զօրքերը ամբողջացընելու համար պէտք եղած մարդկանց թիւը կսահմանուի ամէն տարի օրէնսդրական կարգով՝ Պատերազմի Ոստիկանին (3) առաջարկութեամբը, եւ Կայսերական հրովարտակով կծանուցուի Կառավարիչ Սենատին :

10. Իւրաքանչիւր կոչման (4) ժամանակ զինուորական ծառայութեան մտնելը կորոշուի վիճակով, որ մէկ անգամ միայն կհանուի մարդուն բոլոր կենացը մէջ. այն անձինքը որ իրենց հանած վիճակին թուահամարովը հաստատուն զօրաց կարգը մտնելու չեն, կանցնին ազատազօրաց կարգը :

(1) жеребий. — (2) постоянные войска. — (3) ополчение.  
— (4) наборъ.

(1) запасъ. — (2) вноходецъ. — (3) Военный Министръ.  
— (4) призывъ.



11. Վիճակի կկանչուի ամէն տարի ժողովըրդեան մէկ հասակը կամ տարիքը միայն, այսինքն այն երիտասարդները որ զօրաժողովի ատեն՝ նոյն տարւոյն յունուարի 1-ին իրենց *fuusli surhin* լման արած են :

12. Այն անձինքը որ ուսման կողմանէ սահմանեալ պայմանները կկատարեն, հրաման կուրենան զինուորական պարտաւորութեան մէջ մտնել՝ առանց վիճակ հանելու, այլ իբրեւ կամաւոր զինուորներ (1), ըստ կանոնաց որ բացատրուած են Կարգադրութեանս ժի գլխոյն մէջ:

13. Ոչ վիճակ հանելու կընդունուին եւ ոչ ծառայութեան մտնելու կառնուին անոնք՝ որ զրկուած են վիճակի ամէն իրաւունքներէն (2) կամ թէ ամէն մասնաւոր իրաւունքներէ ու արտօնութիւններէ, թէ՛ անձնական լինին այն իրաւունքները եւ թէ՛ իրենց վիճակին սեպհական :

14. Զինուորական պարտաւորութիւնը կատարելու համար իւրաքանչիւր տարի լինելու կոչումը եւ վիճակով զինուորական ծառայութեան մէջ մտնելը կլինի նոյեմբերի 1-էն մինչեւ դեկտեմբերի 15, իսկ Սիպիրի մէջ հոկտեմբերի 15-էն մինչեւ դեկտեմբերի 31.

(<sup>1</sup>) вольноопредѣляющійся. — (<sup>2</sup>) всѣхъ правъ состоянія.

15. Ծովային ներգործական զօրքերուն (1) պակասը լեցընելու համար կմտնեն,

1) Անոնք որ զինուորական պարտաւորութիւնը կատարելու կկոչուին այն տեղերը՝ որ նշանակուած են ծովային զօրաց սահմանեալ թիւը ամբողջացընելու. ասոնց մէջ այն անձինքը որ չեն ընդունուիլ ծովային զօրաց մէջ, կդառնան ի ծառայութիւն ցամաքային զօրաց.

2) Զինուորական պարտաւորութիւնը կատարելու համար Կայսերութեան ամէն տեղերէն կանչուածներուն մէջէն, ա) անոնք որ իբրեւ նաւաստի (2) պտըտած են մեծ կամ միջակ նաւերու վրայ՝ գոնէ մէկ ծովային ճամբորդութեան մէջ՝ անմիջապէս զօրաժողովէն առաջ. բ) անոնք որ գոնէ մէկ ծովային ճամբորդութեան մէջ ծառայեր են՝ զօրաժողովէն անմիջապէս առաջ՝ իբրեւ մեքինագործ (3) կամ կրակ վառող (4) շոգենաւերու վրայ. նմանապէս անոնք որ գոնէ մէկ տարի գոր-

(<sup>1</sup>) дѣйствующія команды флота. — (<sup>2</sup>) матросъ. — (<sup>3</sup>) машинистъ. — (<sup>4</sup>) кочегаръ.



ծաւոր եղած են շոգենաւի մերենա-  
 ներ շինող գործատուներու մէջ .  
 գ) նաւերու հիւսերը (*s/hrk*), նաւ-  
 նորագողները (*գաղափարահի*) եւ խաւ-  
 կին շինողները, եթէ ծովային զօր-  
 քերը ամբողջացնելու համար որո-  
 շուած թաղերուն մէջ անոնց թիւը  
 պակաս երեւնայ. եւ դ) ըստ կոչման  
 ծովային զինուոր գրուողները, այս-  
 ինքն անոնք որ բաղձանք ցուցուցեր  
 են ծովային զօրաց մէջ ծառայելու .  
 միայն թէ անոնց ի ծառայութիւն  
 ընդունուելուն սահման պիտի դրուի  
 այն թիւը՝ զոր ամէն տարի կորոշէ  
 ծովային ոստիկանարանը (1):

16. Ծովային զօրքերը ամբողջացնելու համար  
 որոշուած այն տեղերուն (յօդ. 15, պարբ. 1) ցու-  
 ցակագրութիւնը, որոց բնակիչները՝ իրենց պա-  
 րապմանցը նայելով՝ ուրիշներէն աւելի յարմար  
 են ծովային զինուորութեան, կկազմուի ըստ  
 համաձայն կարծեաց Ծովային, Պատերազմական  
 եւ ներքին Գործոց Ոստիկաններուն: Այս ցու-  
 ցակագրութիւնը յետ Բարձրագոյն հաստատու-  
 թեան կհրատարակուի ի տեղեկութիւն հասա-  
 րակաց:

(1) Морское министерство.

Գ Լ ՈՒ Ի Բ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԶՕՐԱՅ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ ՈՐՈՇՈՒԱԾ  
 ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ, ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԶՕՐԳ.

17. Յամաքային զօրաց ծառայութեան ընդ-  
 հանուր ժամանակը (1), երբոր վիճակով մտած  
 են ծառայութեան, կսահմանուի *սաւերիկը* *սարի-*  
*որոցմէ վեց սարի* ներգործական ծառայութեան  
 (2), եւ *իւր սարի* պահեստի (3): Այս կանոնէս  
 բացառութիւն կլինի այն մարդկանց համար որ  
 թուրքաստանի զինուորական շրջանակին (4) զօ-  
 րացը մէջ կմտնեն, նոյնպէս եւ այն զօրաց մէջ  
 որ կգտնուին Սեմիփալաթիւնեան, Զապայքալեան,  
 Եագուութեան, Ամուրեան եւ Ծովեզերեայ նահան-  
 գաց (5) մէջ: Նոցա համար զինուորական ծա-  
 ռայութեան ընդհանուր ժամանակ կորոշուի  
*սաւր սարի*. որոցմէ *եօրր սարի* պարտական են  
 նոքա մնալ ի ներգործական ծառայութեան, եւ  
*երեք սարի* ի պահեստի:

18. Ծովային զօրաց ծառայութեան ընդհանուր

(1) срокъ.—(2) действительная служба.—(3) запасъ.  
 — (4) округъ.—(5) Приморскія области.



ժամանակ լինշանակուի *saur saurի*. եօրը *saurիև* ի ներգործական ծառայութեան եւ *krtsf saurիև* ի պահեստի :

19. Այն անձանց ծառայութեան ժամանակը՝ որ զինուորութեան մտած են վիճակով, կհամարուի, ա) ընդհանուր կոչման ժամանակ (յօդ. 14) մտնողներուն կոչմանէն վերջը եկող յունուարի 1-էն, եւ բ) տարւոյն ուրիշ մէկ ժամանակը մըտնողներուն համար (բաց ի վարը նշանակուածներէն (յօդ. 219), նոցա զօրաց կարգը մտած ամսէն ետեւ եկող ամսոյն առաջին օրէն :

20. Նախընթաց 17 եւ 18 յօդուածներուն մէջ նշանակուած ծառայութեան ժամանակները սահմանուած են յատկապէս խաղաղութեան միջոցի համար. իսկ պատերազմի ատեն անոնք որ կգըտնուին ցամաքային եւ ծովային զօրաց մէջ՝ պարտական են ի ծառայութեան մնալու մինչեւ ո՛րքան ժամանակ որ պահանջէ տէրութեան պէտքը:

21. Պատերազմի եւ ծովային Ոստիկանարաններուն տրուած է իրաւունք ըստ պատկանելոյն արձըկելու ի պահեստ ցամաքային եւ ծովային ստորին կարգի զինուորականները. ե՞ծէ կարելի լինի նաեւ 17 եւ 18 յօդուածներուն մէջ ներգործական ծառայութեան համար որոշուած ժամանակները վերջացընելէն առաջ: Նոյնպէս պատերազմական եւ ծովային իշխանութեանց պա-

հուած է ստորին կարգի զինուորականները (1) արձըկելու իրաւունքը նոցա ծառայութեան բոլոր ժամանակին մէջ՝ ժամանակաւոր արձակուրդներով (2)՝ մինչեւ մէկ տարի ժամադրութեամբ:

22. Ծովային զինուորները ի պահեստ արձըկելու կողմանէ հետագայ առանձին կանոնները կպահուին.

ա) Ծովային զօրաց ի պահեստ արձըկուիլը կլինի ընդհանրապէս արշաւանքէն (3) վերջը, բայց ոչ յառաջ քան զհիկտեմբեր ամիսը:

բ) Այն զինուորականները որ կգտնուին պատերազմական նաւերու վրայ՝ դրսի երկիրներ նաւագնացութիւն անելով, ներգործական ծառայութեան ժամանակը վերջացընելէն ետեւ կրնան արձըկուիլ ի պահեստ՝ ե՞ծէ իրենք իրենցմէ այդ բանին բաղձանք ցուցնեն, անմիջապէս նաւուն Ռուսաստանի նաւահանգիստներէն մէկը հասնելէն ետեւ: Իսկ ե՞ծէ խիստ յարգելի պատճառներ գտնուին, նաւուն նաւապետը կա-

(1) нижние чины войскъ. — (2) временный отпускъ.  
— (3) кампанія.



րող է ցանկացողները արձրել ի պահեստ նաեւ դրսի երկիրներու նաւահանգիստներէն. բայց այնպիսի ժամանակ արձրկողները կդառնան Ռուսաստան իրենց ծախքովը :

գ) Այն ժամանակը՝ զոր ծովային զինուորները կանցընեն ի ներգործական ծառայութեան՝ անոր համար որոշուած ժամադրութենէն աւելի, ի պահեստի մնալու համար որոշուած ժամանակին կրկինը կը համրուի: Իսկ այն ծովային զինուորները՝ որ անպատճառ հարկադրուած են մնալու ի ծառայութեան՝ խաղաղութեան ժամանակ՝ այն հասարակաց ժամադրութենէն աւելի որ դրուած է ի ներգործական ծառայութեան եւ ի պահեստի մնալու համար, իրաւունք կունենան՝ ժամադրութենէն աւելի ծառայողաց հաւասար. իսկ որոնք որ չեն կամենար այն իրաւունքները վայելել, կրկին ռոճիկ կստանան՝ բոլոր արտաքոյ կարգի ծառայութեան միջոցին համար:

23. Պահեստի զօրքերը կկոչուին ի ներգործական ծառայութիւն՝ երբոր անպատճառ հարկա-

ւոր լինի զօրաց կազմութիւնը ամբողջացընել: Նոցա կոչումը կկատարուի կառավարիչ Սենս-թին տրուող Բարձրագոյն հրովարտակներով: Այն միջոցին որ ի պահեստի կգտնուին զինուորները, կրնան կոչուիլ Պատերազմական կամ Ծովային Ոստիկանարանէն ըստ պատկանելոյն՝ կրթութեան ժողվուելու, բայց երկու անգամ յընթացս բոլոր պահեստի ժամանակին, եւ իւրաքանչիւր անգամ *վեց շաբաթուան* համար միայն:

24. Պահեստէ ի ծառայութիւն կոչուելէն ազատ են այն անձինքը որ կգտնուին տէրութեան քաղաքական պաշտօններու մէջ, կամ այնպիսի հասարակաց ծառայութեանց մէջ՝ որ նշանակուած են առանձին ցուցակով: Այս ցուցակը կմատուցուի ի Բարձրագոյն հաստատութիւն՝ Ոստիկանաց ժողովին (1) ձեռքովը:

ԳԼՈՒԽ Գ.

ՉԻՏՈՒՈՐԱԿԱՆՍՅ ԵՒ Ի ՊԱՆԵՍԻ ԳՏՆՈՒՈՂ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆԵՐՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

25. Ներգործական ծառայութեան մէջ գըտնուող զինուորները այն միջոցին անկորուստ

(1) Комитетъ Министровъ.



կպահեն իրենց վիճակին բոլոր անձնական եւ ստացուածքի իրաւունքները, միայն թէ յօրինաց սահմանեալ կարեւոր բացառութիւններով: Հարկատու վիճակի (1) անձինքը դարձեալ այն հասարակութեանց մէջ կ'իյնան, որոց մէջ որ կ'գտնուէին ծառայութեան մտած ժամանակները, միանգամայն կ'վայելեն այն իրաւունքները որ նշանակուած են վիճակաց վրայ (2) դրուած օրէնքներուն մէջ (*յաւել. ի յօդ. 423, ծանօթ. ըստ յաւել. 1868 աւի*):

26. Հարկատու վիճակի անձինք ներգործական ծառայութեան միջոցին ազատ կ'լինին այն ամենայն գլխադրամներէն (3) որ կառնուին յօգուտ տէրութեան, երկրական կառավարութեան (4) եւ հասարակաց, նմանապէս ազատ կ'լինին՝ իրենք միայն՝ նաեւ նիւթական պարտաւորութիւններէ (5): Իսկ իրենց ունեցած ստացուածքներուն կողմանէ՝ այն անձինքը պարտական են վճարել տուրքերը եւ ուրիշ հարկերը, եւս եւ այն ստացուածոց համար պահանջուած ուրիշ պարտաւորութիւնները կատարել ըստ հասարակ կարգի:

(1) податное сословіе.—(2) о состояніяхъ.—(3) подушный сборъ.—(4) земская управа.—(5) натуральная повинность.

27. Ի պահեստի գտնուողները ընդհանուր օրինաց տակ կ'մնան, եւ ըստ հասարակ կարգի կ'վայելեն՝ թէ՛ իրենց վիճակին սեպիական եղած իրաւունքները, եւ թէ՛ զանոնք որ ձեռք բերած են ծառայութեան ժամանակ. բայց անոնց համար առանձին կանոններ ալ կան որ օրէնսդրական կարգաւ սահմանուած են պահեստի զօրաց համար:

28. Պահեստի զինուորականաց հրաման կ'լինի տէրութեան քաղաքական եւ հասարակաց պաշտօններուն մէջ մտնելու, նմանապէս ուրիշ տեսակ աշխատութիւն ընտրելու՝ պահելով ընդհանուր օրինաց սահմանած կանոնները: Միայն թէ քաղաքական պաշտօններու մէջ բարձրանալը իրաւունք չտար այն անձանց՝ նորէն զօրաց մէջ մտած ատենները՝ այն աստիճանը կամ կոչումը ունենալու որ աւելի բարձր է՝ քան թէ ինչ որ կ'ունենան ներգործական զինուորական ծառայութենէ արձրկուած ժամանակները:

29. Այն պահեստի զինուորականները որ Տէրութեան քաղաքական ծառայութենէ ի զինուորութիւն կանչուած են, կ'պահեն իրենց ծառայութեան պաշտօնը, եւ իրաւունք ունին նորէն անոր մէջ մտնելու՝ երբոր զինուորական կարգէն արձրկուին:

30. Յանցանք եւ մեղապարտութիւն պատահած ժամանակը՝ պահեստի զինուորականները



քաղաքական իշխանութեան գլխապարտութեան դատաստանի (1) տակ կմնան, բաց ի հետագայ դիպուածներէն. ա) երբոր ի ներգործական ծառայութիւն կամ ի զինուորական կրթութիւն (2) կոչուած ատենները չեն ներկայացած. բ) երբոր յանցանքը կամ մեղապարտութիւնը եղած է այն կոչմանց միջոցին. եւ գ) երբոր զինուորական բարեկարգութեան եւ զինուորական աստիճանաց յարգութեան (3) դէմ գործածուած է յանցանքը՝ զինուորական ձեւի հագուստով (4) գտնուած ժամանակին: Այսպիսի դիպուածոց մէջ պահեստի զինուորականները զինուորական դատաստանի տակ կընկնին:

31. Ի պահեստի գտնուող անձինքը կվայելեն այն արտօնութիւնը՝ որ նշանակուած է 26 յօդուածին մէջ. որով ազատ կլինին մարդագլուխ առնուած դրամահարկէ եւ ուրիշ տուրքերէ, ու այն նիւթական պարտաւորութիւններէն՝ զորս պէտք էր անձամբ կատարէին, ի պահեստ գըրուած ժամանակներէն մինչեւ ամբողջ մէկ տարի: Նոքա երբոր պահեստէն կանչուին զօրաց մէջ, վերոյիշեալ արտօնութիւնը կվայելեն նոյնպէս մէկ տարի՝ հաշուելով ծառայութենէ արձրկուած ժամանակներէն:

(<sup>1</sup>) уголовный судъ.—(<sup>2</sup>) учебный сборъ.—(<sup>3</sup>) воинское чиновочитаніе.—(<sup>4</sup>) форменная военная одежда.

### ԳԼՈՒԽ Գ.

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԶԿՅՈՂ ԱՆՁԻՆՔ, ՆՄԱՆԱՊԷՍ ՆՈՅԱ ԵՒ ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆՑ ԸՆՏԱՆԵՍՅՐ ՎՐԱՅ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԽՆԱՄՔ.

32. Ի ներգործական ծառայութեան կամ ի պահեստի գտնուողները եթէ յանկարծ բոլորովին անյարմար տեսնուին՝ հիւանդութեան կամ խեղանդամութեան (1) պատճառաւ՝ Թէ՛ շարքի եւ Թէ՛ շարքէ դուրս ծառայութեան, բոլորովին կարճըկուին ծառայութենէ, պահեստի զօրաց ցուցակներէն դուրս կձգուին, եւ վկայական կընդունին որ զինուորական պարտաւորութիւնը կատարած են (յօդ. 160, պարբ. 1): Բայց այն անձինքը որ զինուորական ծառայութենէ արձրկուած են՝ իրենց առած վէրքերուն համար, հրաման կունենան պահեստի զօրաց կարգը անցնելու՝ եթէ այս բաղձանքը ունենան:

33. Ստորին աստիճանի զինուորականք, որ ներգործական ծառայութեան մէջ գտնուած ատեննին անյարմար եղած են այն ծառայութիւնը առաջ տանելու, նմանապէս պահեստի

(<sup>1</sup>) увѣчыє.



գօրաց ստորին կարգի զինուորականները՝ որ անդամոց խեղուծիւն մը առած են զինուորական կրթութեան ժամանակ, եթէ կարողութիւն չունենան անձամբ աշխատելու եւ կամ ապրուստ ֆարելու, ազգականներ ալ չունենան որ կամենան իրենց վրայ առնուլ զանոնք պահելը, կընդունին Տէրութեան գանձէն ամիսը *երեք* ըուկիսկ նորա որ կարօտ կ'անջցուին օտարի օգնականութեան՝ կտեղաւորուին հիւանդանոցներու եւ ուրիշ բարեգործական տեղերու մէջ. եւ եթէ անոնց մէջ ազատ տեղ չգտնուի, կըյանձնուին հաւատարիմ անձանց խնամոցը, եւ Տէրութեան գանձէն կվճարուի այնպիսոյն *վեց* ըուկի ամիսը, եւ ոչ աւելի:

34. Պատերազմի մէջ սպանուած կամ առանց լուրի կորսուած, կամ կուռոյ ժամանակ առնուած վէրքերէն մեռած զինուորներուն ընտանիքը կհոգացուին ըստ կանոնաց առանձին Կարգադրութեան որ անոնց համար դրուած է:

35. Պատերազմի ժամանակ ի ներգործական ծառայութիւն կանչուած պահեստի զօրաց ընտանիքը կհոգացուին երկրական կառավարութենէն, նմանապէս այն քաղաքական եւ գիւղական հասարակութիւններէն՝ որոց մէջ որ կգտնուին ընտանիքը: Այն հասարակութեանց՝ որ չեն կրնար իրենց փողովը հոգալ կարօտ ըն-

տանեաց ապրուստը, հարկաւոր նպաստը կտրուի Տէրութեան գանձէն:

*Ծանօթութիւն.* — Այնպիսի ընտանեաց հոգացողութեան միջոցները, եւ այս նիւթիս կողմանէ երկրական կառավարութեան եւ քաղաքական ու գիւղական հասարակութեանց մէջ բաժնուելու պարտականութիւնները, նմանապէս Տէրութեան գանձէն տրուելու նպաստներուն որքանութիւնը եւ ծախքը առանձին կանոններով պիտի սահմանուին:

ԳԼՈՒԽ Ե.

Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ա Կ Ա Ն Ա Չ Ա Տ Ա Չ Օ Ր Ք (1).

36. Թագաւորական ազատազօրքը (յօդ. 5) կկազմուի բովանդակ արական սեռի ժողովըրդականներէն՝ որ հաստատուն զօրաց կարգը չեն մտած, բայց կարող են զէնք բանեցընելու, կոչման հասակէն (յօդ. 11) մինչեւ քառասուն տարեկան հասակը բաղառութեամբ (այսինքն՝ քառասներորդ տարին ալ մէկտեղ առնելով): Ազատազօրաց մէջ կանչուելէն չեն ազատիք մինչեւ այն տարիքը՝ նաեւ այն անձինքն որ արձրկուած են ցամաքային ու ծովային զօրաց պահեստէն:

(1) Государственное ополчение.

3969  
1088  
38/35



37. Քառասուն տարեկանէն վեր եղող ան-  
ձանց արգելք չկայ ազատագորաց մէջ գրուելու,  
եթէ իրենք յատկապէս անոր բաղձանք ցուցնեն:

38. Ազատագորքը բաղկացնող անձինքը կա-  
նուանուին (ռուսերէն) *нирѣшѣ* (1), եւ երկու  
կարգ կբաժնուին: Առաջին կարգը որոշուած է  
Թէ՛ ազատագորաց խումբերը կազմելու եւ Թէ՛  
հաստատուն զօրաց ոյժը աւելցնելու եւ Թիւը  
լեցնելու համար՝ երբոր անոնց պահեստի զի-  
նուորները պակասին կամ բաւական չլինին.  
այն առաջին կարգին մէջ կհամրուին չորս  
կրտսերագոյն հասակները, այսինքն այն ան-  
ձինքը որ գրուած են ազատագորաց մէջ (յօդ.  
154) վերջին չորս կոչմանց ժամանակ. իսկ եր-  
կրորդ կարգին մէջ՝ որ միայն ազատագորաց  
խումբերը կազմելու համար է՝ կհամրուին բո-  
լոր մնացեալ հասակները:

39. Թագաւորական ազատագորքը կկանչուի  
Կայսերական Մանիֆէստներով: Ռաժնիքներուն  
առաջին կարգը, երբոր հարկ լինի կանչել զայն՝  
հաստատուն զօրաց ոյժը աւելցնելու համար,  
կընայ կոչուիլ նաեւ Կայսերական հրովարտակ-  
ներով առ Կառավարիչ Սենատն:

40. Թագաւորական ազատագորքը կարծրկուի՝  
երբոր պատերազմը վերջանայ, կամ անկից ալ ա-

(1) *ратнѣкъ.*

ռաջ՝ եթէ հարկաւոր չլինի: Նմանապէս հար-  
կաւորութիւնը անցնելէն ետեւ կարծրկուին ա-  
ռաջին կարգի ռաժնիքները՝ որ կանչուած էին  
հաստատուն զօրաց ոյժը աւելցնելու համար:

41. Ծառայութեան մտնող ազատագորքին ըն-  
տանեացը հոգացողութեան ու խնամոց պարտ-  
քը կըբրուի երկրական կառավարութեան եւ  
քաղաքական ու գիւղական հասարակութեանց  
վրայ՝ ըստ առանձին կանոնաց: Իսկ պատե-  
րազմի մէջ կորած կամ կռուոյ ժամանակ առ-  
նուած վէրքերէն մեռած ռաժնիքներուն ըն-  
տանիքը կհոգացուին զինուորական պաշտօնէից  
ընտանեացը հաւասար կերպով (յօդ. 34):

## ԳԼՈՒԽ Զ.

ԲԱՅԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ, ՅԱՏԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՐՏՕ-  
ՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ  
ԿԱՏԱՐՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ.

*Ա. Մարմնական սրկիստրեանց հանար բացառու-  
թիւններ (1) ու յեսսագորթիւններ (2).*

42. Վիճակով (յօդ. 10) զընուորական ծա-  
ռայութեան մտնելու անձանց մէջ այն ծառայ-

(1) *взыатіе.* — (2) *отрочка.*



ուծենէն կազատին նոքա՝ որ մարմնական պակասութիւններու կամ հիւանդութեանց պատճառաւ բոլորովին անյարմար են զինուորական ծառայութեան. բայց այս կանոնէս դուրս կմընան անոնք որ կամաւորապէս իրենց անդամները կտրած են (յօդ. 218), որք դարձեալ զօրաց կարգը կանցընեն:

43. Վիճակով զինուորական ծառայութեան առնուելու համար ամենէն փոքր հասակի չափը սահմանուած է *երկու արշին ու երկուս ու կես վերջօք*: Իսկ այն մարմնական պակասութիւններն ու հիւանդութիւնները որ արգելք կլինին ի ծառայութիւն ընդունուելու, նմանապէս զինուորական պարտաւորութեան համար որոշուած պաշտօնարաններուն (1) տրուած հրահանգը՝ թէ ի՞նչ կարգով պիտի տան վկայականները վիճակ հանող անձանց, առանձին ցուցակներով կհրատարակուին՝ ներքին գործոց եւ Պատերազմի եւ Ծովային զօրաց Ոստիկաններէն, յետ նոցա իրարու հետ համաձայնութեանը եւ յետ նախընթաց քննութեան վերոյիշեալ առարկայից ի Խորհրդարանի բժշկաց (2):

44. Այն անձինքը որ զինուորական ծառայութեան համար բաւական ուժեղ չեն երեւար,

կամ թէ այնպիսի հիւանդութիւններով բռնուած են որ բոլորովին ծառայութենէ ազատող պակասութիւններ չեն ճանչցուիր, նմանապէս այն անձինքը որ շտկուած չեն իրենց քիչ ժամանակ առաջ քաշած հիւանդութիւններէն, անոնց ի ծառայութիւն մտնելը կըյետաձգուի (այսինքն կուշացուի) մինչեւ մէկ տարի: Իսկ տարին անցնելէն ետեւ եթէ տեսնուի որ նոքա դարձեալ տկար են, կնշանակուին ի ծառայութիւն անոր յաջորդ տարւոյն համար, եթէ պիտանի երեւնան. ապա թէ ոչ, վկայական կտրուի նոցա թէ ազատ են ի ծառայութենէ (յօդ. 160, պարբ. 1):

*Բ. Ընտանեկան հսկարանաց պրսճառու արտանորիւններ.*

45. Ընտանեկան հանգամանաց նայելով՝ երեք կարգ արտօնութիւններ կսահմանուին.

*Առաջին կարգին մեջ են*, ա) մէկ հատիկ որդին՝ որ կարողութիւն ունի աշխատանքի, եւ հայրը անկարող է աշխատիլ, կամ մայրը այրի է. բ) մէկ հատիկ՝ աշխատութեան կարողութիւն ունեցող եղբայր՝ երբոր մէկ քանի եղբայր կամ քոյր ունի որք ի հօրէ եւ ի մօրէ -

(1) присутствія по военной повинности. — (2) медицинскій совѣтъ.



գ) մէկ հատիկ՝ աշխատութեան կարողութիւն ունեցող թոռ՝ երբոր պապը կամ մամը աշխատիլ կրցող որդի չունին. եւ դ) մէկ հատիկ որդի բոլոր ընտանեաց մէջ, թէեւ հայրը կարողութիւն ունենայ աշխատելու:

*Երկրորդ կարգին մեջ եւ*, մէկ հատիկ աշխատիլ կրցող որդին, երբոր հայրը նոյնպէս կարող է աշխատիլ, բայց եղբարքը տասնըութը տարեկանէն վար են:

*Երրորդ կարգի մեջ եւ* այն անձինքը որ տարիքին կողմանէ անմիջապէս այն եղբոր ետեւէն կուգան որ կանչուած է արդէն ու կգտնուի ներգործական ծառայութեան մէջ, կամ այնպիսի ծառայութեան մէջ մեռած է:

*Ծառայութիւն 1.* Հոգեզաւակները, որ որդեգրուած են մինչեւ իրենց տասը տարեկան հասակը, եւ խորթ զաւակները՝ որոց խորթ հայրը կամ խորթ մայրը որդիք չունին, հարազատ որդիք կհամարուին:

*Ծառայութիւն 2.* Մահմետական օրէնքը դաւանող ընտանեաց մէջ, որոց հրաման տրուած է բազմակնութեան, մի եւ նոյն հօր ամէն որդիքն ալ անխտիր հարազատ կը համարուին, եւ մէկ հատիկ որդի կձանջցուի նա միայն որ բոլոր հօրենական սերունդին մէջ մէկ հատիկ է:

46. Աշխատութեան կարողութիւն ունեցող կհամարուին ընտանեաց մէջ անոնք որ *սասնը-տրիւն* մինչեւ *շիսուն հինգ* տարեկան են: Ասոնցմէ դուրս են, ա) անոնք որ ամենեւին կարողու-

թիւն չունին աշխատելու՝ խեղութեան կամ հիւանդութեան պատճառաւ. բ) անոնք որ արտորուած են. գ) անոնք որ երեք տարիէն աւելի ժամանակ է որ յայտնի չէ ո՛ր եղածն էր. եւ դ) անոնք որ ներգործական ծառայութեան մէջ են ստորին զինուորական պաշտօններով ի կարգս ցամաքային կամ ծովային զօրաց:

47. Նոքա որ ընտանեկան հանգամանաց պատճառաւ իրաւունք ունին արտօնութեան, կրնան նշանակուիլ ի ծառայութիւն այն կարգով՝ որ դրուած է այս կարգադրութեան 146 ու 152 յօդուածներուն մէջ, բայց միայն այն ատեն՝ երբոր զօրաժողովը րացընելու համար բաւական չլինին վիճակով կանչուած միւս մարդիկը:

48. Այն անձինքը որ առաջին կամ երկրորդ կարգի (յօդ. 45) արտօնութեան իրաւունքը ունին, կգրկուին այն իրաւունքէն՝ եթէ ըստ վկայութեան իրենց հօրը կամ մօրը, իրենց պապուն կամ մամուն, իրենց ընտանիքը նայելու պահպանելու չեն աշխատիր:

49. Եթէ մէկ ընտանիքէ մը՝ որ բաղկացած է ի հօրէ կամ այրի մօրէ տղոցմով, կամ ի պապէ կամ մամէ թոռներով, կամ թէ մեծ եղբորէ՝ դեռահասակ որբերով, պակասի ո՛ր եւ իցէ պատճառաւ՝ ընտանեաց այն անդամը որ մի միայն կարողութիւն ունէր աշխատելու, այնպիսի ընտանեաց անդամներէն ի ծառայութեան



գանուողներէն մէկը, ընտանեաց գլխաւորին ընտրութեանը համեմատ, կարճրկուի զինուորական ծառայութենէ, բայց ոչ պատերազմի ժամանակ, եւ ոչ կրթութեան կանչուած միջոցին:

50. Եթէ վիճակ հանելու մ' նակից եղած են մի եւ նոյն ժամանակ երկու հարազատ եղբարք՝ որ ծնած են նոյն տարին, եւ երկուքն ալ վիճակին ցուցուցած Թուահամարներուն զօրութեամբը պարտական են զինուորական ծառայութեան երթալու, անոնցմէ ո՛րն որ մեծագոյն թիւը հանած է՝ ազատագորաց կարգը կանցնի: Սակայն այնպիսի եղբարց հրաման կտրրուի իրենց վիճակներուն Թուահամարները իրարու մէջ փոխելու:

51. Եւրաքանչիւր ընտանեաց մէջ՝ այն անդամը որ ըստ վիճակին պարտական է զինուոր երթալու, կամ արդէն զինուորական ծառայութեան մէջ է, անոր հարազատ եղբայրը կամ խորթ եղբայրը, կամ թէ արեւնակիցը կամ մէկ մօրէ եղբայրը կամ թէ նաեւ հօրեղբօր որդին՝ կրնայ ինքնայօժար կամօք միւսին տեղը բռնել, եթէ միայն միւսին տեղը բռնել ուզողը ինքը ոչ ենթակայ է կոչման, եւ ոչ պահեստի զօրաց կարգն է, եւ տարիքը ոչ քսանէն պակաս է եւ ոչ քսանվեցէն աւելի: Ուրիշի տեղը բռնողը պարտական է թէ՛ զօրաց կարգին մէջ եւ թէ՛ ի

պահեստի, ճառայել բոլոր սահմանեալ ժամանակները. իսկ նա՛ որոյ տեղը ուրիշը բռնեց, զօրաց կարգէն արձրկուելով՝ ազատագորաց կարգը կանցնի:

Գ. Մտացուածոց պատճառաւ (1) եղած յետաձգութիւններ.

52. Ստացուածոց եւ տանուտէրական գործոց (2) կարգադրութեանը համար հրաման կլինի յետաձգել կամ ժամանակ տալ, բայց ոչ *երկու տարիէն* աւելի, զինուորական ծառայութեան մտնելու այն մարդկանց՝ որ անձամբ կկառավարեն իրենց սեպիական անշարժ կայքը, կամ թէ իրենց յատուկ առեւտրական, գործարանական կամ արուեստական տեղը. բայց այնպիսի տեղերուն կարգէն դուրս կհամարուին անոնք որ ոգելից ըմպելիքներու մանրամասն առուտուրը (3) կանեն (*Կարգադ. ընդ. յօդ. 301, ըստ յաւել. 1869 աւի, եւ ծանօթութիւն առ այն*): Այսպիսի յետաձգութիւնները ծառայութեան ընդհանուր ժամանակին մէջ չեն հաշուիր:

(1) по имущественному положению. — (2) хозяйственные дела. — (3) раздробительная продажа крепких напитков.



7. Ուսման պատճառաւ տրուելու յեւսագութիւններ  
ու արտոնութիւններ.

53. Այն ուսումնարանաց աշակերտները որ նշանակուած են Կարգադրութեանս Յաւելուածին մէջ, կկանչուին կատարելու զինուորական պարտաւորութիւնը՝ երբոր հասնին անոր համար սահմանեալ հասակին (յօդ. 11), ուրիշներուն հաւասար. քայց որպէս զի կարենան իրենց ուսումը աւարտել, նոցա հանած վիճակին զօրութեամբը զինուորական ծառայութեան մտնելը, եթէ իրենք ցանկան՝ կըլետածգուի, այսինքն կուշացուի,

1) միևնչեւ քսակներէն սարեկան հասակը՝ եթէ կտուրին երկրորդ կարգի ուսումնարանաց մէջ, կամ աշակերտ են Կայսերական Տեմարանին գեղարուեստից, Մոսկուայի նկարչութեան, քանդակագործութեան եւ ճարտարապետութեան դպրոցին, Փետերպուրկի եւ Մոսկուայի Կայսերական երաժշտական Ռուսաց ընկերութեան կրթարաններուն (1), եւ վարժապետական ուսումնարանաց, սե-

(1) консерваторія.

մինարիայից եւ դպրոցաց (սեւ Յաւելուայս յօդուածոյ):

2) միևնչեւ քսակ չորս սարեկան հասակը, եթէ աշակերտ են հոգեւոր դպրոցաց կամ սեմինարիայից Ռուսաց, Լուսաւորչական Հայոց եւ հռովմէական կաթոլիկաց, նմանապէս ուսանող են զանազան դպրոցաց նաւուղութեան:

3) միևնչեւ քսակ հինգ սարեկան հասակը, եթէ այնպիսի աշակերտ են Մոսկուայի դպրոցին նկարչութեան, քանդակագործութեան եւ ճարտարապետութեան՝ որ 22 տարեկան չեղած՝ արժանացեր են արծրութեամբի, եւ իրենց գեղարուեստական ուսումը դպրոցին մէջ կշարունակեն. նմանապէս Փետերպուրկի ու Մոսկուայի Կայսերական կրթարանաց երաժշտական ընկերութեան Ռուսաց՝ երգեցողութեան դասարանին այն աշակերտները որ 22 տարեկան հասակէն առաջ հարցաքննուած են յաջողութեամբ, եւ իրենց ուսումը կշարունակեն կրթարանին մէջ:

4) միևնչեւ քսակ եօրը սարեկան հասակը, առաջին կարգի ուսումնա-



րանաց մէջ ուսանողներէն անոնք՝ որք ընտրած են համալսարանական ընթացքը աւարտելէն ետքը պատրաստուելու վարժապետական պաշտօններու. նմանապէս Փեթերպուրկի եւ Մոսկուայի Կայսերական կրթարանաց երաժշտական ընկերութեան Ռուսաց այն աշակերտները որ 22 տարեկան հասակին հասնելէն առաջ՝ արժանացած են վկայականի, եւ իրենց գեղարուեստական ուսմունքը կշարունակեն կրթարանին մէջ, եւ

5) *միևնչեւ քսան ուրը սարեկան հասակը*, այն աշակերտք հոգեւոր ձեմարանաց ուղղափառաց եւ հռովմէական կաթողիկաց, որ ընտրուած են համալսարանական ընթացքը աւարտելէն ետեւ պատրաստուելու վարժապետական պաշտօններու, եւ այն աշակերտք Կայսերական ձեմարանին գեղարուեստքը՝ որ դեռ իրենց 22 տարեկան հասակին չհասած՝ արժանի եղեր են արծրութէ մետալի, եւ կշարունակեն իրենց գեղարուեստական կրթութիւնը ձեմարանին մէջ:

54. Նախընթաց 53 յօդուածին մէջ նշանակուած ուսումնարաններուն ամենայն աշակերտ-

ները իրաւունք ունին ծանուցանելու, բայց վիճակի կանչուելէն անպատճառ *երկու ամիս* սուաջ, թէ կցանկան կատարել զինուորական պարտաւորութիւնը՝ ինքնակամ ի զինուորութիւն գրուողներուն իրաւունքներովը: Այս ծանուցումն անողները վիճակ հանելէն ազատուելով՝ վերոյիշեալ յետաձգութիւնները կընդունին՝ որպէս զի կարենան ուսման ընթացքը աւարտել:

55. Այն անձինքը որ յաջողութեամբ աւարտած են իրենց ընթացքը ուղղափառաց (Ռուսաց) հոգեւոր ձեմարաններու եւ սեմինարիաներու մէջ, կընդունին՝ ընթացքը աւարտելէն ետեւ՝ մէկտարի ժամանակ որ մտնեն հոգեւորական կոչման մէջ, որով ազատ կմնան զինուորական պարտաւորութենէ (յօդ. 62):

56. Այն անձինքը որ հասած են ուսման հետագայ աստիճաններուն, երբոր վիճակաւ մըտնեն զինուորութեան մէջ, նոցա ծառայութեան ժամանակները կհամառօտուին առաջիկայ հիմանց վրայ.

1) Համալսարանաց եւ ուրիշ առաջին կարգի ուսումնարանաց մէջ ընթացք կատարողները, եւ կամ այն ընթացքին համեմատ հարցաքննութիւն բռնողները, կմնան ներգործա-



կան ծառայութեան մէջ *վեց ամիս*, եւ պահեստի զօրաց մէջ *սասնըջորս սարի եւ վեց ամիս* :

2) Կիմնագիւաներու կամ Արդիւնական դպրոցներու (1) վեց դասարանաց ընթացքը, կամ հոգեւոր Սեմինարիաներուն երկրորդ դասարանինը, կամ թէ ուրիշ երկրորդ կարգի ուսումնարանաց ընթացքը աւարտողները, նմանապէս անոնց ծրագրին համեմատ հարցաքննութիւն բռնողները, կմնան ներգործական ծառայութեան մէջ *մեկ սարի ու վեց ամիս*, եւ պահեստի զօրաց մէջ *սասնըջորս սարի ու վեց ամիս* :

3) Երրորդ կարգի ուսումնարանաց ընթացքը աւարտողները, կամ հարցաքննութեամբ վկայեալները՝ թէ գիտեն այն ուսմունքը, կմնան ներգործական ծառայութեան մէջ *երեք սարի*, եւ պահեստի զօրաց մէջ *սասնըջորս սարի*, եւ

4) Որոնք որ վկայական ունին՝ թէ սովրած են ժողովրդական սկզբը-

(1) реальное училище.

նական դպրոցաց (1) այն ընթացքը որ սահմանեալ է 1864-ին յուլ. 14-ին ելած Կարգադրութեամբը, կամ թէ միւս չորրորդ կարգի ուսումնարանաց ընթացքը, կմնան, ա) երբոր ամէն տեսակ զինուորաց կարգը նշանակուին (բաց ի վարը թ պարբ. մէջ յիշուածներէն) — ներգործական ծառայութեան մէջ *չորս սարի*, եւ պահեստի զօրաց մէջ *սասնըջորս սարի*, եւ բ) երբոր նշանակուին այն զօրաց մէջ՝ որ դասաւորուած են թուրքատանի զինուորական շրջանակին մէջ, եւ Սեմիփալաթիսեան, Չապայքալեան, Եագութեան, Ամուրեան եւ Մովզելրեայ նահանգաց մէջ. նմանապէս երբոր նշանակուին Մովային զինուորութեան, կմնան ի ներգործական ծառայութեան *վեց սարի*, եւ ի պահեստի ցամաքային կամ ծովային զօրաց *չորս սարի* :

*Մակորոքիւն.* — Զորրորդ կարգի դպրոցներուն ընթացքը սովրած լինելուն վկայականները, յետ պարտուպատշաճ ստորգումեան ըստ առանձին կանոնաց կազմելոց Ազգային Լուսաւորութեան Ոստիկանարանէն, հանդերձ

(1) начальное народное училище.



համաձայնութեամբ ընդ Ոստիկանարանին Պատերազմի եւ ընդ Դ բաժնի Սեպհական Դիւանի նորին կայսերական Սեծութեան, կտրրութիւն գաւառական դպրոցներու Խորհրդարաններէն. իսկ ուր որ գաւառական դպրոց չկայ, դպրոցներու մանկավարժական խորհրդարաններէն (1) :

57. Այն անձինքը որ ազգու ռուս չեն եւ կը սովորին ժողովրդական դպրոցներուն մէջ, եւ կամ այնպիսի ուսումնարանաց մէջ՝ յորս աշակերտները պարտաւորեալ չեն ռուսերէն լեզուն ուսանելու, նորա որպէս զի իրաւունք ստանան ուսման պատճառաւ ծառայութեան ժամանակին համառօտուելուն (յօդ. 56), պարտական են՝ բաց ի դպրոցներուն ընթացքը գիտնալէն, համարձակ եւ հասկընարով կարգալ ու յստակ կերպով գիր գրել ռուսերէն: Այս կողմանէ պէտք եղած վկայականները կրնան տրուիլ Ազգային Լուսաւորութեան Ոստիկանարանին իշխանութեանը ներքեւ գտնուող ամենայն արքունի ուսումնարանաց մանկավարժական խորհրդարաններէն:

58. Եթէ վիճակով մտնեն ի զինուորական ծառայութիւն այն անձինքը որ նշանակուած են 56 յօդուածին 1 ու 2 պարբերութեանց մէջ (բաց ի բժիշկներէն, անասնաբոյժերէն (2) ու դեղագործներէն (3) որ զինուորական պարտաւորու-

(1) педагогические совѣты. — (2) ветеринаръ. —  
3) фармацевтъ.

ծիւնը կկատարեն իրենց սեպհական արհեստներուն կոչմանը մէջ), կգրուին այն պաշտօններուն ու գործակատարութեանց որ զինուորական շարքի մէջ չեն կատարուիր, բայց այս պայմանաւ միայն՝ որ իրենք ալ անոր պիտի յօժարին: Իսկ այն անձանց մէջէն նորա՝ որ մարմնական պակասութեանց կամ հիւանդոտ կազմուածքի պատճառաւ կարողութիւն չեն ունենար ծառայել զինուորական շարքի մէջ, բոլորովին կազատին ի ծառայութենէ:

59. Այն անձանց՝ որ նշանակուած են 56 յօդուածին 1 եւ 2 պարբերութեանցը մէջ, հրաման կտրրուի, 1) զինուորութեան մէջ մտնել՝ ուսման ընթացքը կամ հարցաքննութիւնը աւարտելէն ետեւ, առանց սպասելու ժամանակին՝ յորում պիտի լինին կոչմունք ի զինուորութիւն (յօդ. 14). այնպիսի ատեն նոցա ծառայութեան ժամանակը կհամրուի այն կանոնով՝ որ նշանակուած է 19 յօդուածին 2 պարբերութեանը մէջ: 2) մտնել զօրաց այս կամ այն մասերուն մէջ՝ ըստ իւրեանց ընտրողութեան, բայց այսու պայմանաւ՝ որ այնպիսի անձանց ընդհանուր թիւը զօրաց իւրաքանչիւր մասին մէջ աւելի չլինի քան զայն չափը՝ որ որոշուած է Պատերազմի Ոստիկանարանէն:

60. Այն անձինքներէն որ պէտք է կոչուին ծովային զօրքը ամբողջացընելու համար որոշուած տեղերէն (յօդ. 15, պարբ. 1, եւ յօդ. 16),



Երիտասարդները որ նշանակուած են 56 յօդուածին 1, 2 եւ 3 պարբերութեանցը մէջ, դուրս հանելով միայն ծովային ուսումնարանաց-մէջ ընթացք աւարտողները, չեն մտներ ի ծառայութիւն ծովային զինուորութեան՝ առանց իրենց անձնական յօժարութեանը, հապա ցամաքային զինուոր կը դառնան: Այն անձինքը իրենց յօժարութեամբը ծովային զինուորութեան մէջ որ մտնեն, պարտական են մնալ *երեք տարի* ի ներգործական ծառայութեան, եւ *եօրը տարի* ի պահեստի:

61. Հետագայ անձինքը երբոր վիճակաւ մըտնեն ծովային զօրաց մէջ, նոցա ծառայութեան ժամանակները այսպէս կսահմանուին.

1) Որոնք որ հարցաքննութեամբ ստացած են հեռաւոր կամ ծովափնեայ (1) նաւագնացութեան նաւապետ (*շիփիկո*) անունը, կամ թէ հեռաւոր նաւագնացութեան նաւուղիղ (*շքիւռնակ*) անունը, կմնան ներգործական ծառայութեան մէջ *երկու տարի*, եւ ի պահեստի *որը տարի*:

2) Որոնք որ հարցաքննութեամբ՝ ծովափնեայ նաւագնացութեան նաւուղիղ ասուելու կոչումը կստանան,

(1) каботажное плавание.

կմնան ի ներգործական ծառայութեան *երեք տարի*, եւ ի պահեստի *եօրը տարի*:

Ե. Կոչման եւ պարսպանաց տեսակի նպաստուած սրտող արտօնութիւններ.

62. Ազատ կմնան զինուորական պարտաւորութենէ,

1) Սրբազնագործ պաշտօնեայք ամենայն քրիստոնէական դաւանութեանց, եւ

2) Ուղղափառ Ռուսաց դպիրք՝ որ աւարտած են ուսման ընթացքը հոգեւոր ֆեմարանաց եւ Սեմինարիայից կամ հոգեւոր ուսումնարանաց մէջ: Բայց նոքա որ դպրութիւնը կձրգեն՝ զինուորական ծառայութենէ այն պաշտօնին պատճառաւ ազատուածներուն ժամանակէն հաշուելով՝ դեռ *վեց տարի* չանցած, կպարտաւորին զինուորական ծառայութիւնը կատարելու, մնալով ի ներգործական ծառայութեան եւ ի պահեստի այնքան ժամանակ՝ որքան որ կպատկանի



իրենց առած ուսմանը. իսկ որոնք որ եկեղեցւոյ ծառայելը ձգած են *վեց տարին* անցնելէն ետեւ, նոքա ուղղակի պահեստի զօրաց կարգը կդրուին՝ մինչեւ իրենց *երեսուն ու վեց* տարեկան հասակը :

63. Հետագայ անձինքը եթէ այնպիսի վիճակ հանեն՝ որով կհարկադրին հաստատուն զօրաց կարգը մտնել, ազատ կմնան ներգործական ծառայութենէ խաղաղութեան ժամանակ, եւ պահեստի զօրաց մէջ կհամարուին *սասնընթից տարի*:

1) Որոնք որ ունին աստիճան բժշկութեան (1), Մագիստրոսի (կամ վարժապետի) անասնաբուժութեան կամ դեղագործութեան (2), կամ անասնաբուժի, եթէ պարտական չեն ծառայել զինուորական իշխանութեան ներքեւը ըստ կանոնաց այն ուսումնարանաց՝ որոց մէջ առած են իրենց ուսումը :

2) Կայսերական Տեմարանին գեղարուեստից սաները, որ Ռուսաստանէն դուրս յուղարկուած են տէրութեան ծախքով՝ իրենց արուեստը կատարելագործելու համար, եւ

(<sup>1</sup>) докторъ медицинны. — (<sup>2</sup>) магистръ ветеринарныхъ наукъ или фармаціи.

3) Ուսումնարանաց մէջ դաս տուողները, թէ՛ այն ուսումնարանաց որ յիշատակուած են 53 յօդուածին Ցաւելուածին մէջ, եւ թէ ընդհանրապէս Տէրութեան ամէն ուսումնարանաց՝ որ այն Ցաւելուածին մէջ չեն նշանակուած, երբոր վարժապետները կսովբեցնեն այն դպրոցներուն կանոնացը համեմատ դաս տրուելու առարկաները, նմանապէս Տէրութենէն կարգեալ դաստիարակները կամ վերակացուները (1). Եւ Տէրութենէն կարգեալ նոցա օգնականները այն ուսումնարանաց մէջ՝ որ Տէրութիւնը կպահէ, կամ որոց կանոնները հաստատուած են Տէրութենէն: Բայց պահեստի զօրաց մէջ համրուած ժամանակէն մինչեւ վեց տարի վերոյիշեալ անձինքը պարտական են ամէն տարի ներկայացնել զինուորական պարտաւորութեան համար որոշուած պաշտօնարանը իրենց գլխաւորներէն վկայական՝ թէ իրենք ետ չեն կեցած իրենց կոչմանը պահանջած պարապմունքէն. իսկ որոնք որ այն պարապմունքը

(<sup>1</sup>) воспитатель.



դադրեցուցեր են նշանակեալ ժամանակէն առաջ, ներգործական ծառայութեան կկանչուին՝ իրենց ուսումնականութեան աստիճանին պահանջած ժամանակին համեմատ:

*Ծանօթութիւն.* Նաւահղութեան դպրոցներու դասատուները եթէ այն անձանց կարգէն չեն՝ որ նշանակուած են ծովային զօրքը ամբողջացնելու, կգրուին ծովային պահեստի զօրաց մէջ *տասր տարուակ* ժամադրութեամբ:

64. Ազատ են ի ներգործական ծառայութենէ խաղաղութեան ժամանակ, եւ ծովային պահեստի զօրաց կարգը կանցնին *տասր տարուակ* ժամադրութեամբ, հետագայ անձինքը, եթէ վիճակ հանեն՝ ծառայութեան մէջ մտնելու պարտաւորող:

1) Հեռաւոր կամ ծովափնեայ նաւագնացութեան նաւապետներն ու նաւուղիղները, եւ մեքենագործ Ֆարտարները որ նաւերու մեքենան կկառավարեն, եթէ այն անձինքը նոյնպիսի պաշտօններու մէջ կգտնուին ծովային առեւտրական այն նաւերուն վրայ՝ որոց դրօշակը Ռուսաց դրօշակ է, եւ

2) Լոցմանները եւ լոցմանի աշակերտները (1) որ ըստ օրինաց իրա-

ւունք ունին այն պաշտօններուն:

Բայց նշանակեալ անձանց մէջէն (պարբ. 1 եւ 2) նոքա որ տասը տարուան ժամադրութեան միջոցին մէկ նաւորդութենէ աւելի չեն կատարած իրենց պաշտօնին պահանջած պարտքերը, կկանչուին ի ներգործական ծառայութիւն ծովային զօրաց մէջ *տասր տարի* ժամանակով. միայն թէ անոր վրայ կհամրուի նաեւ այն ժամանակը որ անցուցած են իրենց պաշտօնին սեպիական պարտաւորութիւնները կատարելու:

65. Ծովային զօրաց մէջ ներգործական ծառայութիւն ընելու այն ժամանակները՝ որ սահմանուած են 18 յօդուածին մէջ, եւ 56 յօդուածին 4-րդ պարբերութեանը մէջ, կհամառօտուին՝ անոր համեմատ մեծցընելով ի պահեստի ծովային զօրաց գտնուելու տարիներուն թիւը.

1) Անոնք որ գոնէ երկու նաւագնացութեան մէջ ծառայել են իբրեւ նաւաստի (*մարտու*) ընդարձակ եւ հեռաւոր Ֆամբորդութեան նաւերու վրայ, եւ կամ իբրեւ մեքենագործ՝ շոգեհանաւերու վրայ, նոցա ծառայութիւնը կհամառօտուի *տասր տարուակ*. եւ

2) Անոնք որ գոնէ երկու նաւա-

(1) лоцманы и лоцманские ученики.



գնացուծիւն կատարեր են՝ իբրեւ նա-  
ւաստի՝ փոքր ծովագնացուծեան մէջ  
ու ծովափնեայ նաւերու վրայ, կամ  
իբրեւ կրակ վառող շոգենաւերու վը-  
րայ, նոցա ծառայութիւնը կհամառո-  
տուի միկ *սարուսն* :

66. Որոնք որ կծառայեն իբրեւ նաւաստի  
Ռուսաց ծովային առեւտրական նաւատորմի  
վրայ (1), նմանապէս իբրեւ մեքենագործ կամ  
կրակ վառող ամենատեսակ առեւտրական շոգե-  
նաւերու վրայ, նոցա վիճակով զինուորական  
ծառայութեան մտնելը կյետաձգուի խաղաղու-  
ծեան ժամանակ, մինչեւ որ իրենց ըրած դաշ-  
նադրութիւնց ժամադրութիւնը լրանայ, բայց  
ոչ երբէք *յասն հինգ արեկիսն հասակին* անդին :  
Այն ժամանակը որ այսպիսի անձինք անցուցած  
են առեւտրական նաւերու վրայ՝ վիճակը հանե-  
լէն ետեւ ու ծառայութեան մտնելէն առաջ կը-  
համրուի նոցա համար այն ժամանակին վրայ՝  
որ սահմանուած է ծովային զօրաց պահեստին  
մէջ մնալու, առանձնական ծառայութեան եր-  
կու տարին հաշուելով ի պահեստի ծովային զօ-  
րաց մնալու համար մէկ տարի :

(1) мореходный русский торговый флотъ.

## ԳԼՈՒԽ Է.

ԿՈՉՈՂԱԿԱՆ ԹԱՂԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

67. Զինուորական պարտաւորութեան կատա-  
րումը ի գործ դնելու համար կոչողական Թաղեր  
կամ բաժիններ (1) կորոշուին : Իւրաքանչիւր  
Թաղին կազմութեանը մէջ կմտնէ կամ գաւառին  
մէկ մասը, կամ ամբողջ գաւառը :

68. Այն քաղաքներուն մէջ՝ որոց բնակիչները  
տասը հազար էրիկմարդէն պակաս չեն՝ առան-  
ձին Թաղեր կկազմուին : Եթէ տեղական բնակիչ-  
ները ցանկան, հրաման կլինի առանձին Թաղեր  
կազմելու նաեւ այնպիսի քաղաքաց մէջ՝ որոց  
բնակիչները այնքան բազմամիւ չեն, միայն Թէ  
անոնց մէջ ալ հինգ հազար էրիկմարդէն պակաս  
բնակիչ չգտնուի :

69. Լիֆլանտիոյ եւ Քուռլանտիոյ կուսակալու-  
ծեանց մէջ Թաղեր կազմելու ժամանակ՝ իբրեւ  
գաւառ (2) կառնուի, առաջնոյն մէջ *Օոսկուրկի-  
կեոիերի* շրջանակը (3), եւ երկրորդին մէջ  
*հուսիքանսակսն* դատարանի շրջանակը (4) :

(1) призывный участок.— (2) уезд.— (3) округ  
ордунгсгерихта.— (4) округ гаушманскаго суда.



70. Տոնի Խազախաց նահանգին շրջանակները, ղուրս հանելով Միուսի ու Տոնեցի շրջանակները, նմանապէս Ուրայի, Քուպանի ու Թերքի նահանգներուն գաւառները, ամէն մէկը մէկ կոչողական Թաղ կկազմեն: Աժտէրխանի եւ Օրէնպուրկի Խազախ զօրաց երկիրները կմիացուին Աժտէրխանի, Սարաթովի եւ Օրէնպուրկի կուսակալութեանց մերձաւոր գաւառներուն: Կոչողական Թաղերուն հետ: Այս կանոններէս խտորելու հրամաններ կրնան տրուիլ՝ նահանգական կառավարութեանց առաջարկութեամբը՝ Պատերազմի Ոստիկանէն, համաձայնութեամբ Ոստիկանին ներքին Գործոց:

71. Կոչողական Թաղին չափը այս կերպով կսահմանուի. գիւղականաց կամ քաղաքէ եւ գեղերէ խառն բնակիչներուն Թաղը՝ ութէն մինչեւ քսան հազարը. իսկ միայն քաղաքի բնակիչներուն Թաղին չափը՝ հինկէն մինչեւ քառասուն հազար էրիկմարդ: Այն քաղաքները որ քառասուն հազար էրիկմարդէն աւելի բնակիչ ունին՝ կրնան քանի մը Թաղեր բաժնուիլ:

72. Կոչողական Թաղերու կազմութեան ժամանակը կպահիուին նաեւ հետագայ կանոնները.

1) *Վոյսքները* (այսինքն գեղապետութիւնները) ոչ երբէք մանր կըտորներ կբաժնուին:

2) Տոնի զօրաց նահանգին մէջ գտնուած բնակիչները, որ ընդհանուր զինուորական պարտաւորութեան ներքեւ կգտնուին, եւ կբնակին *սրսկի-ցաներու* սեպկականուած երկիրներուն վրայ, այս պարտաւորութիւնը գործադրելու ժամանակ՝ կհամրուին իրենց մերձաւոր գեղապետութեանց հետ ի միասին: Այս բանիս համար սմանիցաներուն բաժանմունքը կկատարէ նահանգական կառավարութիւնը՝ համաձայնութեամբ այն ատեանին Տոնի զօրաց՝ որ կկառավարէ ստրկաց գործերը (1):

3) Սիպիրի մէջ գեղերուն կոչողական Թաղերը կկազմուին կամ զատ զատ գեղապետութիւններէ, եւ կամ մինչեւ երեք գեղապետութիւն միայն ի միասին: Գեղապետութեանց մէջ կըհամրուին զինուորական պարտաւորութիւնը կատարելու համար՝ մօտ տեղերու առանձին գիւղական հասարակութիւնները, եւ գործարանները (2) իրենց բնակիչներովը, նմանապէս այն անձինքը որ ընդհանուր զինուոր-

(1) крестьянскія дѣла. — (2) заводъ.



րական պարտաւորութեան ներքեւ կգտնուին ու կընակին Տէրութեան երկիրներուն կամ Խազախաց եւ կամ մասնաւորաց երկիրներուն վրայ : Այն քաղաքներուն մօտ գտնուող գեղապետութիւնները՝ որոց մէջ հինգ հազար էրիկմարդէն քիչ կգտնուի, կմիանան անոնց հետ ու մէկ Թաղ կկազմեն : Այս կանոններէս հարկաւոր երեւցած բացառութիւնները կորոշուին տեղական ընդհանուր կուսակալներէն :

73. Իւրաքանչիւր կոչողական Թաղի մէջ տեղ մը կորոշուի որ հոն կանչուին եւ ընդունուին զինուորական պարտաւորութեան տակ գտնուող անձինքը :

74. Թաղին կոչողական տեղէն անոր խիստ հեռաւոր գեղերուն հեռաւորութեան միջոցը ընդհանրապէս *չիսուն* վերստէն աւելի պիտի չլինի :

75. Եւթէ Թաղին սահմանացը մէջ չգտնուի յարմար բնակարան մը՝ կանչուածները հոն տեղաւորելու, կոչման տեղ կարելի է ընտրել Թաղին ամենէն աւելի մօտիկ եղած քաղաքը կամ գեղը, պահելով յայսմ մասին 74 յօդուածին մէջի կանոնը հեռաւորութեան վրայ :

76. Գաւառները այլ եւ այլ Թաղեր բաժնետու կանոնները շարադրելը, եւ կոչողական տեղեր

որոշելը հետագայ պաշտօնատեղեաց պարտքն է .

ա) Այն կուսակալութեանց մէջ՝ ուր որ երկրական կառավարութիւն (1) հաստատուած է, — գաւառին երկրական ժողովները (2) .

բ) Այն կուսակալութեանց մէջ՝ ուր որ երկրական կառավարութիւններ չեն մտած, — առանձին յանձնաժողովներ կազմուած կլինին ազնուականաց գաւառական պարագլխէն (3), քաղաքագլխէն (4), *խախալնիքն* եւ հաշտարարական միջնորդէն (5) ըստ ընտրութեան հաշտարարաց ժողովոյն ,

գ) Պալմիական ծովեզերքը եղած կուսակալութեանց մէջ — յանձնաժողովներ որ կկազմուին ազնուականութեան գաւառական պարագլխէն (կամ անոր տեղը բռնող անձէ), գաւառական քաղաքին *պարկովիսորէն* (կամ անոր տեղը բռնող անձէն), եւ հետագայ անձանցմէ՝ որ են, Լիֆլանտիոյ կուսակալութեան մէջ՝ *Օրսնուկսոնիքեր*, եւ ծխական դատարանաց ան-

(<sup>1</sup>) земскія учрежденія.— (<sup>2</sup>) уѣздныя земскія собранія.— (<sup>3</sup>) уѣздный предводитель дворянства.— (<sup>4</sup>) городской голова.— (<sup>5</sup>) мировою посредникъ.



դամներ (իւրաքանչիւրէն մէկ մէկ հատ), Էսթլանտիոյ մէջ *հաֆհեռիհրեռներ* եւ բարեկարգական դատարանաց անդամներ (իւրաքանչիւրէն մէկ մէկ հատ), եւ Քուռլանտիոյ մէջ *հաւփրուսե* եւ ստրկաց գաւառական դատարանին անդամը.

դ) Տոնի զինուորաց նահանգին Միուս եւ Տոնեց գետոց շրջանակներուն մէջ— այն նահանգին նահանգական կառավարութիւնը: Աժտէրխանի եւ Օրէնպուրկի Խազախ զօրաց երկիրները կկարգադրուին Սարաթովի, Աժտէրխանի եւ Օրէնպուրկի մերձաւոր գաւառաց կոչողական Թաղերուն համեմատ՝ երկրական ժողովներէն կամ յանձնաժողովներէն, որպէս զի այն գաւառները Թաղ Թաղ բաժնուին ըստ պատշաճի, եւ այս գործողութեան մասնակից պիտի լինին պատգամաւորներ (1) վերոյիշեալ Խազախ զօրաց կառավարութիւններէն.

ե) Սիպիրի մէջ — յանձնաժողովներ, որ պիտի կազմուին շրջանակին զինուորական պարտաւորութեան հա-

(1) депутатъ.

մար սահմանուած պաշտօնարանին (1) նախագահէն (յօդ. 85, պարբ. զ), շըրջանակին իսպրավնիքէն, քաղաքագրելիւն եւ հաշտարարական միջնորդէն (Ալթայ լեւանց շրջանակին մէջ):

77. Քաղաքները Թաղ Թաղ բաժնելու համար կանոններ շարադրելը պարտք է քաղաքական կառավարութեանց. իսկ ուր որ քաղաքական կառավարութիւններ չկան՝ Խորհրդարաններուն (տուժաներուն) կամ անոնց տեղը բռնող ատեաններու:

78. Վերոյիշեալ սկզբունքներով կոչողական Թաղերու վրայ շարադրուած կանոնները (յօդ. 76 եւ 77) կառաջարկուին ի հաստատութիւն կուսակալին կամ նահանգապետին:

79. Եթէ տեղական յատկութեանց նայելով՝ դժուարութիւն ելնէ կոչողական Թաղեր կազմելու այն չափերով՝ որ սահմանուած են 71, 74 եւ 75 յօդուածներուն մէջ, Թաղեր կազմելու վրայ եղած առաջարկութիւնները՝ հանդերձ փոփոխմամբ արդէն նշանակեալ սահմանաց, կառաջարկուին ներքին Գործոց եւ Պատերազմի Ոստիկաններուն որոշմանը: Նոյն Ոստիկաններուն որոշ-

(1) присутствие по воинской повинности.



մանը պէտք է ձգուին նաեւ այն առաջարկութիւնները՝ որ կվերաբերին արդէն ձեւացած թաղերուն փոփոխութեանցը:

80. Նախընթաց յօդուածներուն հիմանը վրայ ձեւացած կոչողական թաղերուն տեղեկութիւնները՝ հանդերձ մանրամասն ցուցակաւ զանոնք կազմող մասանց, եւ կոչման համար ընտրուած տեղեաց (յօդ. 73—75), կառաջարկուին կուսակալին կամ նահանգապետին ձեռքովը ներքին Գործոց եւ Պատերազմի Ոստիկաններուն: Ներքին Գործոց Ոստիկանարանը կձանուցանէ՝ ի տեղեկութիւն հասարակաց՝ կոչողական թաղերուն ցուցակները եւ անոնց մէջ եղած փոփոխութիւնները:

---

### Գ Լ Ո Ւ Խ Ը.

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ԳՈՐԾԱԳՐԵԼՈՒ ՊԱՇՏՕՆԱՏԵՂԵՐ (1).

81. Իւրաքանչիւր կուսակալութեան ու նահանգի մէջ, դուրս հանելով վարը 83 յօդուածին մէջ նշանակուածները, կգտնուի նահանգական ատեան կամ պաշտօնարան զինուորական պար-

(1) учреждение.

տաւորութեան, որոյ նախագահը կուսակալը կամ նահանգապետն է, եւ անդամք՝ կուսակալութեան ազնուականաց պարագլուխը, կուսակալութեան երկրական կառավարութեան նախագահը, եւ անոր մէկ անդամք՝ ըստ ընտրութեան նոյն կառավարութեան, կուսակալութեան զինուորական գլուխը կամ նորա տեղը բռնող անձը, եւ շրջանակի դատարանին *իրոֆուորը* կամ նորա օգնականը:

82. Հետագայ կուսակալութեանց եւ նահանգաց մէջ զինուորական պարտաւորութեան կուսակալական պաշտօնարանին կազմութիւնը կփոփոխուի առաջիկայ կերպով.

ա) Այն կուսակալութեանց մէջ՝ ուր որ երկրական կառավարութիւններ չեն մտած, կուսակալութեան երկրական կառավարութեան նախագահին ու անդամին տեղը, պաշտօնարան կազմելու համար կնշանակուին երկու անդամք՝ ստրկաց գործերուն համար դրուած կուսակալութեան պաշտօնատեղէն:

բ) Այն կուսակալութեանց մէջ ուր որ չեն գործադրուիր դատատանական նոր կարգերը, շրջանակի դատարանին փրօքուորին տեղը կը



բունէ կուսակալութեան փրոքուորը կամ փրոքուորական իշխանութիւն ունեցող ուրիշ անձ մը .

գ) Պալմիական ծովեզերեայ կուսակալութեանց մէջ, Լեհաստանի թագաւորութեան եւ Սիպիրի կուսակալութեանց մէջ, երկրական կառավարութեան նախագահին ու անդամին տեղը կնշանակուին, Պալմիական կուսակալութեանց մէջ՝ առանձին անդամ մը Տէրութեան կողմանէ, եւ ստրկաց գործերուն համար դրուած յանձնաժողովոյն մէկ անդամը . Լեհաստանի թագաւորութեան կուսակալութեանցը մէջ՝ ստրկաց գործերուն համար դրուած պաշտօնարանին անփոփոխ անդամը, եւ ստրկաց գործերուն համար կարգեալ գաւառական պաշտօնէից *sołtysownik* մէկը . Սիպիրի մէջ՝ կուսակալութեան կամ նահանգի կառավարութեան Խորհրդարանը .

դ) Ազմոյինսք եւ Սեմիփալաթինսք նահանգներուն մէջ (բաց ի այն փոփոխութենէն որ նշանակուած է *g* պարբերութեանը մէջ՝ պաշտօնարանին կազմութեանը համար) կնշա-

նակուի կուսակալութեան զինսւորական գլխաւորին տեղը *շրայ-ափիցեռ* մը՝ ըստ որոշման նահանգին զօրացը գլխաւորին :

83. Տոնի զօրաց, Բուպանի, Թերքի եւ Ուրալի նահանգներուն մէջ զինուորական պարտաւորութեան պաշտօնարանի պարտքերը նահանգական կառավարութեան վրայ դրուած են :

84. Իւրաքանչիւր գաւառի կամ շրջանակի մէջ կգտնուի գաւառական կամ շրջանակային պաշտօնարան (1) զինուորական պարտաւորութեան, որոյ նախագահ է ազնուականաց գաւառական պարագլուխը, եւ անդամը՝ հետագայ անձինքը . *ափիցեռ* մը՝ զինուորական իշխանաւորէն նշանակուած, գաւառական *խափաղնիք* կամ նորա պաշտօնին համեմատ իշխանութիւն ունեցող մը, եւ երկրական կառավարութեան անդամ մը՝ ըստ ընտրութեան նոյն կառավարութեան : Այն միջոցին որ կոչողական թաղին մէջ պաշտօնարանը իւր գործողութիւնը կատարելու հետ է, եւ թաղին կազմութեանը մէջ քաղաքի բնակիչներ կգրտնուին, պաշտօնարանին անձանցը թիւը կլեցընէ քաղաքական կառավարութեան մէկ անդամը՝ ըստ նշանակելոյ նոյն կառավարութեան . իսկ

(\*) окружное присутствие.



ուր որ քաղաքական կառավարութիւն չկայ, քաղաքին հասարակութենէն ընտրուած անդամ մը: Բաց յայնմանէ, երբոր կոչողական պաշտօնարանը իւր գործերը կատարելու հետ է կոչողական տեղեր, անոր կազմութեանը համար պէտք եղած անձանց պակասը կլեցընէ Թաղին բնակիչներէն մէկը՝ որ երեք տարուան համար կընտրուի գաւառին երկրական ժողովէն:

85. Վարը նշանակուած տեղերուն մէջ գաւառական կամ շրջանակային պաշտօնարանի կազմութիւնը կ'իժովոյնուի առաջիկայ կերպով.

ա) Այն կուսակալութեանց մէջ՝ ուր որ երկրական կառավարութեան եղանակ չէ մտած, պաշտօնարանին նախագահ կ'ընշանակուի տեղւոյն պաշտօնատէր անձանց մէկը՝ ըստ ընտրութեան կուսակալին: Իսկ երկրական կառավարութեան անդամին տեղը պաշտօնարանին կազմութիւնը ձեւացընելու համար՝ հաշտարարական ժողովը կընտրէ հաշտարար միջնորդներէն մէկը. առանձին անդամ հարկաւոր չհամարուիր կոչողական տեղերու պաշտօնարանին գործ կատարած ժամանակը:

բ) Պալմիական ծովեզերեայ կուսակալութիւններուն մէջ գաւառական

պաշտօնարաններուն կազմութիւնը պիտի լինի այս կերպով. նախագահ տեղւոյն պաշտօնատէր անձանց մէկը՝ ըստ ընտրութեան կուսակալին. անդամը, 1) *ազիցեո* մը՝ գինուորական իշխանութենէ նշանակուած. 2) տեղւոյն աստիճանաւորներէն մէկը՝ ըստ ընտրութեան կուսակալին. 3) *orslunկըսիսիքեո*՝ Լիֆլանտիոյ կուսակալութեան մէջ, *հաֆեռիսիքեո* (իւր Թաղին մէջ) ի կուսակալութեան քստլանտիոյ, *հաւփրմսն*՝ ի կուսակալութեան Բուլանտիոյ. եւ 4) անդամ մը գաւառին գեղապետական ծերերէն (1)՝ երեք տարուան համար ընտրուած: Կոչողական պաշտօնարանները երբոր գործ կէտարեն այն Թաղերուն մէջ՝ յորս քաղաքի բնակիչներ կ'մտնեն, անոնց պակասը կլեցընէ *պուրկովսքո* կամ նորա տեղը բռնող անձ մը:

գ) Լեհաստանի Թագաւորութեան կուսակալութեանցը մէջ գաւառական պաշտօնարաններուն կազմութիւնը այս կերպով է. նախագահ՝ գաւառապետը, անդամք՝ գաւառապետին օգ-

(\*) волостные старшины уезда.



նականը՝ ըստ գործոց բարեկարգա-  
րանի. գործակատար մը՝ ըստ գործոց  
ստրկաց, երկու անդամք՝ տեղւոյն  
բնակիչներէն՝ ըստ նշանակելոյ կու-  
սակալին՝ երեք տարուան համար, եւ  
այն կրիւնիս վոյրը, կամ այն քաղա-  
քին պուրկովիսութիւնը, ուսկից որ կառ-  
նուին մարդիկը:

դ) Մինչեւ որ Տոնի գօրականաց  
նահանգին մէջ երկրական կառավա-  
րութեան եղանակները մտնեն, գա-  
ւառական պաշտօնարանի պարտակա-  
նութիւնները կկատարեն առանձին  
պաշտօնարաններ՝ որ այս կերպով  
պիտի կազմուին. նախագահ՝ ազ-  
նուականաց պարագլուխը. անդամք  
սփիցեռ մը՝ ըստ նշանակելոյ ածա-  
մանին Խազախաց. շրջանակային իշ-  
խանաւորը, եւ մէկ կամ երկու հաշ-  
տարար միջնորդներ: Չերքասքի շըր-  
ջանակին մէջ պաշտօնարանին կազ-  
մութեան պակասը կլեցընէ անդամ  
մը՝ նովոչերքասք քաղաքին այն բնա-  
նակիչներէն ընտրուած՝ որ Խազախաց  
վիճակէն չեն: Այս պաշտօնարանաց  
միւր եւ իւրաքանչիւրին իշխանու-

Թեան տարածութիւնը պիտի որոշուին  
նահանգական կառավարութենէն.

ե) Քուպանի, Թերքի եւ Ուրալի  
նահանգներուն մէջ պաշտօնարաններ  
կազմողները սոքա են. նախագահ,  
գաւառապետը. անդամք՝ նահանգա-  
պետէն նշանակուած աստիճանաւոր  
մը, եւ կոչումը ո՛ր քաղաքին մէջ որ  
կլինի՝ այն քաղաքէն ընտրուած անձ  
մը: Եթէ Թերքի ստար, Վլատիկակաս,  
Եյսք, Ղզլար եւ Ուրալսք քաղաքներուն  
մէջ պաշտօնարաններուն կազմութեա-  
նը կմտնեն նաեւ նոյն քաղաքաց բա-  
րեկարգապետները (1): Եթէ Քուպանի,  
Թերքի եւ Ուրալի նահանգաց նահան-  
գապետները, իւրաքանչիւրը ըստ իւ-  
րում պատշաճի, տեղական առանձին  
հանգամանաց նայելով՝ աւելի օգտա-  
կար ճանչնան զատ պաշտօնարան  
չբանալ իւրաքանչիւր գաւառի մէջ,  
անոր տեղը մէկ պաշտօնարանի մը  
գործողութեանց շրջանը տարածելով  
երկու կամ երեք գաւառներու վրայ,  
այս բանս կարելի է Թոյլ տալ՝ վճռով  
Պատերազմի Ոստիկանին, յետ նախըն-

(1) поименно.



Թաց համաձայնութեան՝ Քուսանի եւ  
Թերքի նահանգաց վերաբերեալ խըն-  
դրոյն կողմանէ՝ ընդ Կովկասեան Փո-  
խարքային .

զ) Սիպիւրի կուսակալութեանց  
եւ Զապայքալեան եւ Եագութեան նա-  
հանգաց մէջ պաշտօնարանները այս  
կերպով կկազմուին . նախագահ՝ պաշ-  
տօնատէր մը՝ ընդհանուր կուսակալէն  
նշանակուած . անդամք՝ աֆիցէն մը  
զինուորական իշխանութենէ նշանա-  
կուած . աստիճանաւոր մը՝ կուսակա-  
լէն կամ նահանգապետէն դրուած .  
շրջանակային իսփրավնիքը (իսկ Աւ-  
թայ լեռանց շրջանակին մէջ նաեւ  
հաշտարար միջնորդը), եւ այն գեղա-  
պետութեան գեղապետը՝ ուսկից որ  
մարդիկ պիտի առնուին : Երբոր պաշ-  
տօնարան մը գործ կկատարէ այնպի-  
սի Թաղեր՝ որոց սահմանին մէջ քա-  
ղաքի բնակիչներ կգտնուին, անոր  
կազմութիւնը կամբողջանայ՝ քաղա-  
քական կառավարութեան մէկ անդա-  
մովը : Իսկ Սգմովիսքի եւ Սեմիփալա-  
թիսքի գաւառական պաշտօնարան-  
ները այս կերպով կձեւանան . նախա-  
գահ՝ գաւառապետը . անդամք՝ զի-

նուորական իշխանութենէ նշանա-  
կուած աֆիցէն մը, քաղաքագլուխը,  
եւ քաղաքական կառավարութեան մէկ  
անդամը :

86. Գաւառական կամ շրջանակային պաշտօ-  
նարանը իւր իշխանութեանը ներքեւ գտնուած  
կոչողական Թաղերուն մէջ գործ կկատարէ կար-  
գաւ (հերթով) :

87. Փեթերպուրկ, Մոսկուա, Օտեսսա, Րիկա,  
Խազան, Խարքով, Քիեվ, Սարաթով, Վիլնա,  
Քիշնեւ, Քոնոշթատ, Նիքոլայեվ ու Սեւասթոփոլ  
քաղաքներուն մէջ կգտնուին զինուորական պար-  
տաւորութեան համար զատ զատ քաղաքական  
պաշտօնարաններ, որոց նախագահ է քաղաքա-  
գլուխը, եւ անդամք՝ զինուորական իշխանու-  
թենէ որոշուած աֆիցէն մը, բարեկարգարանի  
գլխաւորէն նշանակուած աստիճանաւոր մը, եւ  
քաղաքի հասարակաց կառավարութենէն ըն-  
տրուած երկու անդամներ . Վարչաւ քաղաքին  
մէջ ալ կգտնուի առանձին քաղաքական պաշ-  
տօնարան՝ այս կերպով կազմուած . նախագահ՝  
քաղաքին գահերէցը . անդամք՝ զինուորական  
իշխանութենէն նշանակուած աֆիցէն մը, բա-  
րեկարգարանի աստիճանաւոր մը, եւ տեղական  
բնակիչներէն երկու անդամ՝ Փոխարքայէն նշա-  
նակուած :



88. Քաղաքական պաշտօնարանները (յօդ. 87), գործ կատարեն միայն իրենց քաղաքին թաղերուն մէջ:

89. Կուսակալութեան կամ նահանգի զինուորական պարտաւորութեան պաշտօնարանին պարտքն է,

1) Բոլոր կուսակալութեան կամ նահանգին մէջ ընդհանուր հսկողութիւն անել՝ որ կանոնաւոր կերպով կատարուի զինուորական պարտաւորութեան տակ ընկնող անձանց կոչումը եւ ընդունուիլը.

2) Այլ եւ այլ թաղերու վրայ բաժնելը նորընտիր զինուորներուն (1) այն թիւը՝ որ նշանակուած է կուսակալութեանը կամ նահանգին համար.

3) Զինուորական պարտաւորութեան տակ գտնուող անձանց վկայականները ստուգել ու նորէն վկայել, այս կարգադրութեամբ սահմանեալ դէպքերուն մէջ.

4) Գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարաններուն վրայ եղած գանգատները քննել.

5) Գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանաց հաշիւները քննել, եւ ընդհանուր հաշիւ կազմել՝ կուսակալութեան կամ նահանգին իւրաքանչիւր կոչմանը ամբողջանալուն վրայ. եւ

6) Հարկ եղած ժամանակը վրձնել եւ ներկայացընել ի վերազննութիւն բարձրագոյն իշխանութեանց այն ատարակոյսները՝ որ կրնան ելլել գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանաց մէջ:

90. Գաւառական կամ շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանաց պարտքն է,

1) Առանձին կոչողական ցուցակներ կազմել այն անձանց՝ որ նշանակուած են 95 յօդուածին մէջ.

2) Կոչողական ցուցակները ստուգել.

3) Ոստիկանարանաց՝ ըստ պատկանելոյն՝ (յօդ. 130) ներկայացընել տեղեկութիւններ՝ թէ իրենց պաշտօնարանին թաղերուն մէջ ո՛րքան մարդկայ՝ զինուորական պարտաւորութիւնը կատարելու կոչման տակ ընկնող.

(<sup>1</sup>) новобранецъ.



4) Զինուորական պարտաւորութեան տակ ընկնող անձինքը կոչու այս բանիս համար նշանակուած տեղերը (յօդ. 134).

5) Իւրաքանչիւր զինուորական պարտաւորութեան կանչուած անձին իրաւունքները սահմանել.

6) Սահմանել՝ թէ կոչուածներէն ո՛վ եւ ի՛նչ կարգաւ կնշանակուի ի ծառայութիւն .

7) Զինուորական պարտաւորութեան տակ գտնուող անձանց անոր պիտանի կամ անյարմար լինելուն վկայութիւն տալ՝ թէ՛ կոչման ժամանակը եւ թէ՛ կոչմանէն ետքը .

8) Նորընտիր զինուորականներն ընդունիլ, եւ

9) Կոչողական Թաղերուն մէջ գործողութիւնները աւարտելէն ետեւ մանրամասն հաշիւ ներկայացրնել կուսակալութեան կամ նահանգին զինուորական պարտաւորութեան պաշտօնարանին՝ թէ ի՛նչ կերպով կատարուեր է ի ծառայութիւն կոչելը եւ ընդունիլը :

91. Զինուորական ծառայութեան տակ ընկնող անձանց համար վկայական տալու կամ զանոնք

ընդունելու համար՝ գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարաններու մէջ կնշանակուին երկերկու բժիշկներ, մէկը քաղաքական՝ միւսը զինուորական կառավարութենէ, եւ զինուորական ընդունող (1) մը (ի կողմանէ ցամաքային կամ ծովային զօրաց իշխանութեան՝ ըստ պատկանելոյն). իսկ կուսակալութեան կամ նահանգի պաշտօնարաններուն մէջ՝ վկայականները վերազննելու համար՝ նոյնպէս երկերկու բժիշկ նոյն սկզբանց վրայ : Պաշտօնարանին գործողը մէջ բժիշկներուն մասնակցութիւնը այսչափ է միայն՝ որ իրենց կարծիքը տան զինուորական ծառայութեան ընդունուելու անձին պիտանութեանը վրայ . իսկ զինուորական ընդունողաց պարտականութիւնները կսահմանուին առանձին հրահանգով՝ Պատերազմի եւ ծովային Ոստիկանաց կողմանէ :

*Մակօրոշիւն.* Սիպիի մէջ՝ այս յօդուածովս բացատրուած կանոններէն առաջիկայ բացառութիւնները կ'ծոյլատրուին . նախ՝ պաշտօնարանին կազմութեանը մէջ կըրնայ նշանակուիլ միայն մէկ բժիշկ (համաձայնութեամբ կուսակալութեան զինուորական իշխանաւորին հետ), եւ երկրորդ՝ զինուորական ընդունողին պարտականութիւնները կրնան դրուիլ այն ափիցէն վրայ՝ որ անգամ է պաշտօնարանին :

(1) приемщикъ.



92. Զինուորական պարտաւորութեան պաշտօնարաններուն մէջ գործ կատարելու կարգը, նմանապէս այս գործողութեանց վերաբերեալ ձեւերը կսահմանուին ներքին Գործոց Ոստիկանէն հաստատուած հրահանգով, համաձայնութեամբ Պատերազմի Ոստիկանին :

93. Զինուորական ծառայութեան կոչման եւ ընդունելութեան գործողութիւնները կատարելու համար, եւ այս նիւթերուս կողմանէ մասնաւոր անձանց՝ Տէրութեան տեղերուն եւ անձանցը հետ ամէն տեսակ յարաբերութեանցը համար կգործադրուի հասարակ (այսինքն ոչ դրուագաւոր (1) թուղթ :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

ԿՈՉՈՂԱԿԱՆ ԹԱՂԵՐՈՒ ՄԷՋ ԳՐՈՒԻՂԸ, ԵՒ ԿՈՉՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ .

Ա. *Կոչողական քաղերու մեջ գրուելու, եւ կոչողական վկայականաց վրայ :*

94. Աշխարհագրի ցուցակներուն (2) մէջ գրուած անձինքը, նմանապէս աշխարհագրէն

(<sup>1</sup>) не гербовая. — (<sup>2</sup>) ревизскія сказки.

ետեւ այլ եւ այլ հասարակութեանց մէջ գրուողները կհամարուին այն կոչողական թաղերուն մէջ՝ ուր որ կգտնուին այն անձանց գրուած քաղաքները եւ գեղապետութիւնները :

95. Այն անձինքը որ տասներորդ աշխարհահամարէն (1) դուրս թողուած են, նմանապէս աշխարհագրէն ետեւ հարկատու վիճակէ ելած են, պարտական են՝ զինուորական պարտաւորութիւնը կատարելէն ետեւ՝ կամ այն գաւառին կոչողական թաղերէն մէկուն մէջ գրուելու, ուր կգտնուի իրենց կամ ծնողացը սեպիական անշարժ կայքը, կամ այն թաղին մէջ՝ ուր որ բնակած կգտնուին կամ կգտնուէին վերջի ժամանակը՝ երբոր այն տեղէն ելան (յօդ. 4) :

96. Թաղի մը մէջ գրուելու գործողութիւնը կկատարուի յայտարարութեամբ մը զոր պարտական է տալու գրուողը, աւելցնելով անոր վրայ մետրիքական (արձանագրական) վկայականը, կամ անոր տեղը բռնող վկայագիր մը, այն գաւառական շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը՝ որոյ իշխանութեան ներքեւը կգտնուի նորա գրուելու համար ընտրած թաղը :

97. Ամենայն արական սեռի անձինք, դուրս հանելով միայն գիւղական հարկատու վիճակի

(<sup>1</sup>) перепись.



քնակիչները, պարտական են, երբոր 16 տարեկան հասակին կհասնին, եւ Դեկտեմբերի մինչեւ 31-ը այն տարւոյն՝ յորում կըրանայ իրենց քսան տարեկան հասակը, ընդունիլ վկայական՝ թէ գրուած են կոչողական թաղին մէջ (յօդ. 94, 95):

98. Կոչողական թաղերուն մէջ գրուած լինելու վկայականներ կտրբուին այն անձանց՝ որ նշանակուած են 95 յօդուածին մէջ՝ զինուորական պարտաւորութեան զաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարաններէն. իսկ այն անձանց որ գրուած են աշխարհագրի ցուցակներուն մէջ, կամ թէ աշխարհագրէն ետեւ այլ եւ այլ հասարակութեանց անդամ գրուած են, քաղաքական կառավարութիւններէն:

99. Այն վկայականներուն մէջ՝ որ կտրբուին այս կամ այն թաղին գրուողներուն, կնշանակուի, ա) գրուողին անունը, հայրանունը եւ ազգանունը կամ մականունը. բ) անոր ծննդեան տարին, ամիսը եւ օրը. գ) դաւանանքը. դ) վիճակը. ե) պարապմունքը, ձեռագործը կամ արհեստը. զ) կարգաւ գրել գիտնալը կամ չգիտնալը, եւ թէ ո՛ր ուսումնարանին մէջ աւարտել է ուսումը կամ դեռ ուսում կառնու. եւ է) ո՛ր անձէն ո՛ր ժամանակ (տարին, ամիսը եւ ամսամիւր) եւ ի՛նչ թուահամարով տրուած է վկայականը:

100. Այն անձինքն որ նշանակուած են 97 յօդուածին մէջ, երբոր պակուելու լինին, եւ եր-

բոր տէրութեան կամ հասարակութեան պաշտօնի մէջ մտնելու լինին, պարտական են ներկայացընելու այն վկայականները՝ որ առած են կոչողական թաղին մէջ գրուածներուն համար:

101. Նախընթաց յօդուածներուն մէջ (94—100) բացատրուած կանոնները չեն տարածուիր Լեհաստանի թագաւորութեան կուսակալութեանցը վրայ, ուր այս բանիս կողմանէ առանձին կարգ կպահուի (տես յօդ. 102, ծանօթ. 1, եւ յօդ. 115):

*Բ. Կոչողական ցուցակները կազմելու վրայ.*

102. Իւրաքանչիւր տարւոյ սկիզբը զինուորական պարտաւորութիւնը կատարելու կոչման համար կկազմուին *մասնաւոր կոչողական ցուցակներ* (1) գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարաններէն այն անձանց՝ որ նշանակուած են 95 յօդուածին մէջ (իւրաքանչիւր թաղին առանձին ցուցակ). քաղաքական կառավարութիւններէն ու գեղապետական տեսչութիւններէն այն անձանց՝ որ աշխարհագրի ցուցակներուն մէջ անցած են կամ պէտք է անցնին:

*Ծանօթութիւն 1.* Լեհաստանի թագաւորութեան մէջ կոչողական ցուցակները կկազմուին, Վարշահին մէջ՝ բարեկարգարանի փրիսթավներէն, միւս կուսակալութեանց եւ գաւառական քաղաքաց մէջ՝ զահերէցներէն եւ պուրկովիսներէն. կմիններուն (2) մէջ՝ անոնց վոյժերէն (3):

(1) частные призывные списки. — (2) гминь. — (3) войтъ.



*Ծանօթութիւն 2.* Ուրախի, Քուպանի եւ Թերքի նահանգներուն մէջ ընդհանուր զինուորական պարտաւորութեան տակ ընկնող անձանց կոչողական ցուցակները կկազմուին՝ գաւառին կամ շրջանակին բարեկարգարանի կառավարութիւններէն :

103. Կոչողական ցուցակներու մէջ կանցնին նոքա ամէնքը՝ որ կոչման տարւոյն նախընթացին մէջ իրենց քսան տարեկան հասակին եկեր են, դուրս հանելով զանոնք որ ինքնակամ մտեր են ի զինուորութիւն, որոց համար իւրաքանչիւր թաղի մէջ առանձին հաշիւ կբռնուի՝ նոցա վրայ առնուած տեղեկութիւններուն համեմատ : Այն տեղեկութիւնները կհաղորդեն զինուորական իշխանաւորները անմիջապէս ինքնակամ գրուողները ընդունելէն ետեւ այն քաղաքական, գաւառական եւ շրջանակային պաշտօնարանաց զինուորական պարտաւորութեան, որոց որ կպատշաճին . իսկ սոքա այն ինքնակամ զինուոր գրուող անձանց ընդունելութեան տեղեկութիւնները, որոց կոչողական ցուցակները շարադրողները ուրիշ ատեաններ կամ պաշտօնատէրներ են, կուտան հետ զհետէ, քանի որ ընդունին, այն ատեաններուն կամ անձանցը՝ ըստ պատկանելոյն :

104. Կոչողական ցուցակներուն մէջ կնշանակուին 99 յօդուածին մէջ դրուած տեղեկութիւնները, եւ բաց յայնմանէ՝ իւրաքանչիւր կոչեցելոյն բնակութեան տեղը, եւ նորա ընտանեկան

եւ ստացուածական դրութեանը վրայ այն տեղեկութիւնները՝ որ կրնան իրաւունք տալ արտօնութիւններու (յօդ. 45 եւ 52) :

105. Կոչողական ցուցակները կազմելու հիմունքը սոքա են . ա) մետրիքական քաղուածներ, բ) այն անձանց համար՝ որ պէտք էր տասներորդ աշխարհահամարին մէջ անցած լինէին՝ աշխարհագրի ցուցակներ . գ) տեղեկութիւնք աշխարհագրի մէջ անցնող եւ աշխարհագրէն հանուող անձանց վրայ, եւ ամէն տեսակ ցուցակներ՝ որովք աշխարհագրի ցուցակները կամբողջանան . դ) վկայականներ՝ որ կոչողական թաղերուն մէջ գրուած են, եւ անձնական յայտարարութիւններ : Լեհաստանի թագաւորութեան մէջ կոչողական ցուցակները կկազմուին այն մատեաններուն հիմանը վրայ՝ որոց մէջ գրուած են հաստատուն եւ անհաստատ բնակիչները :

106. Մետրիքական քաղուածները կազմելը պարտք է, ա) ուղղափառ (Ռուսաց) եւ ուրիշ քրիստոնեայ դաւանութեանց համար—ծխական քահանայից, ժողովրդապետաց եւ փասթօներու ըստ պատկանելոյն . բ) մտիմետականաց համար՝ մահիմետական հոգեւոր ժողովոց . գ) հրէից եւ ուրիշ դաւանութիւններէ անձանց համար—քաղաքական իշխանութեան մէջ Տէրութեան կողմանէ դրուած այն տեղերուն՝ ուր որ ըստ օրինի կբը-



րուին կամ կպահուին այն դաւանութեանց եւ վարդապետութեանց մետրիքական գրքերը :

107. Մետրիքական քաղուածին մէջ պիտի գտնուի ցուցակը ամենայն այն հասակի էրիկմարդոց՝ որոց կարգը կամ հերթն է զինուորական պարտաւորութիւնը կատարել : Քաղուածներուն մէջ կշանակուի կոչման տակ ընկնողին անունը, ծննդեան ամիսն ու օրը, նմանապէս հօրը անունը, հայրանունը եւ մականունը . իսկ ապօրինաւոր ծննդոց՝ անունը եւ մօրը հայրանունն ու մականունը : Կոչման տակ ընկնողներէն մեռածներուն անունները կգրուին քաղուածին մէջ, եւ իւրաքանչիւրին առջեւը վախճանածին ամիսն ու օրը : Քաղուածները կկազմուին զատ զատ ըստ ամենայն քաղաքաց եւ ըստ իւրաքանչիւր գեղապետութեան, եւ կյուզարկուին այն պաշտօնարանները՝ ուր որ կկազմուին կոչողական ցուցակները (յօդ. 102, եւ ծանօթ. 2), ըստ պատկանելոյն : Քաղուածները պէտք է հասցընեն անոնց՝ եթէ ուշ՝ յունուարի 15-ին :

108. Կոչողական թաղի մը գրուածին վկայականներուն մէջ եւ կոչողական ցուցակներուն մէջ տարիքը կցուցուի մետրիքական վկայականներէն ու մետրիքական քաղուածներէն, աշխարհագրի ցուցակներէն եւ ուրիշ *sofroukhnerk*, այսինքն գրաւոր ապացոյցներէ, որ ըստ օրինաց՝ մետրիքական վկայականներուն տեղը կըռնեն :

109. Եթէ մէկը պարտական լինելով վկայական ընդունիլ կոչողական թաղի մը գրուած լինելուն (յօդ. 97), այն վկայականը պահանջած ժամանակը չներկայացընէր նախընթաց յօդուածին մէջ յիշուած տօքումէններէն եւ ոչ մէկը, եւ կցուցունէ թէ ինքը տասնըինը տարեկանէն վեր չէ, անոր վկայական կտրուի՝ նշանակելով մէջը տարիքը՝ նորա ասածին համաձայն . իսկ եթէ մէկը ցուցընէ թէ ինքը տասնըինը տարեկանէն վեր է, այն ատեն առժամանակեայ վկայական մը կտրուի իրեն կոչողական թաղի մը գրուածին՝ առանց տարիքը նշանակելու, եւ այնուհետեւ տարիքը կգրուի վկայականին մէջ՝ դրսի տեսքին նայելով՝ գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանէն զինուորական պարտաւորութեան, ըստ 137 եւ 138 յօդուածոց Կարգադրութեանս :

110. Երբոր տարիքին վրայ զանազանութիւն երեւնայ՝ մետրիքական քաղուածին կամ մետրիքական վկայականին եւ աշխարհագրի ցուցակին կամ ուրիշ տօքումէնի մէջ, տարիքը կսահմանուի՝ քրիստոնէից համար՝ մետրիքականին համեմատ, իսկ ոչ քրիստոնէից համար՝ աշխարհագրի ցուցակին համեմատ, եթէ այն ցուցակին շտկութեանը վրայ երկբայութիւն չենէ :

111. Տարիքը որոշելու համար պէտք եղած տօքումէնին շտկութեանը վրայ երկբայութիւն



կրնան հանել կա՛մ այն պաշտօնարանները (յօդ. 102 եւ ծանօթ. 2) որոց պարտքն է կոչողական ցուցակները կազմել եւ կոչողական թաղերու գըրուած լինելուն վկայականներ տալ, եւ կամ մասնաւոր անձինք:

112. Դրսի տեսքին նայելով տարիքը կսահմանուի,

1) Այն ամենայն դէպքերուն մէջ, յորս ամենեւին օրինաւոր տօքումէն մը մը չկայ տարիքներուն վրայ.

2) Քրիստոնեայ անձանց համար՝ այն ատեն՝ երբոր տարիքը ցուցուած է միայն աշխարհագրի ցուցակէն, եւ տարակոյս հանուած է այն ցուցմունքին շտկութեանը վրայ. եւ

3) Ոչ քրիստոնեայ անձանց համար՝ այն ամենայն դէպքերու մէջ՝ յորս տարիքին վրայ եղած տօքումէններուն շտկութեանը վրայ տարակոյս կեղնէ, անոնց մէջ հաշուելով նաեւ մետրիքները. բայց թէ որ մետրիքային ու աշխարհագրի ցուցակին մէջ տարիքին համար տարբերութիւն չկայ, այնպիսի ժամանակ թէպէտ եւ տարակոյս հանուած լինի անոնց շտկութեանը վրայ, տարիքը կսահմանուի այն տօքումէններուն համեմատ, եւ ոչ թէ դրսի տեսքին նայելով:

113. Այն պաշտօնարանները եւ պաշտօնատէր անձինքը՝ որոց պարտքն է կոչողական ցուցակները կազմել (յօդ. 102 եւ ծանօթ.) առանձին ցուցակներ կշինեն այն անձանց՝ որոց տարիքը պիտի սահմանուի դրսի տեսքին նայելով (յօդ. 112), բացատրելով ցուցակին մէջ թէ ինչո՞ւ համար կարելի չեղաւ տարիքը սահմանել՝ այդ բանին համար որոշուած տօքումէններու զօրութեամբ: Այնպիսի անձանց մէջէն նոքա՝ որ իրենց տարիքին վրայ եղած որպիսի եւ իցէ տօքումէնութիւ մը կրնան առաջիկայ զօրաժողովին կոչմանը տակ ընկնիլ, նոյնպէս կոչողական ցուցակը կգըրուին:

114. Այն անձինքը՝ որոց տարիքը պիտի սահմանուի նոցա դրսի տեսքին նայելով, այս բանիս համար կներկայանան իրենց թաղին կոչման տեղը՝ ի ծառայութիւն կոչուելու խիստ մօտ ժամանակին:

115. Մասնաւոր կոչողական ցուցակներու կազմութիւնը (յօդ. 102) պէտք է վերջանայ մինչեւ Ապրիլի 1-ը: Այնուհետեւ ցուցակները հրապարակական տեղ մը կդրուին, կամ կկախուին երկու շաբաթ՝ գաւառական շրջանակային ու քաղաքական պաշտօնարաններուն մէջ, քաղաքական կառավարութեանց եւ գեղապետական տեսչութեանց մէջ, ըստ պատկանելոյն. իսկ այս կամ այն գիւղական հասարակութեան վերաբերեալ



ցուցակները կկարգացուին գեղացւոց ժողովներուն մէջ:

116. Ամէն մարդու հրաման տրուած է ցուցակները գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանները տրուելէն երկու շաբաթ առաջ (յօդ. 118) յայտարարութիւն անելու ցուցակներուն մէջ պակաս կամ սխալ բան եղածին վրայ: Յայտարարութիւնները պիտի անցուին առանձին գրքի մէջ, պիտի ստուգուին եօթը օրուան մէջ՝ առձեռն գտնուած տօքումէնմներուն համեմատ հարցմունքներով կամ ուրիշ միջոցներով, եւ ցուցակներուն մէջ երեւցած սխալները պիտի շտկուին: Այն պակասներուն ու սխալներուն համար՝ որ մասնաւոր կոչողական ցուցակներուն մէջ եղած են գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարաններէն (յօդ. 102), յայտարարութիւն կլինի անմիջապէս այն պաշտօնարաններուն այս յօդուածովս որոշուած երկու շաբթուան միջոցին:

117. Այն անձանց որ անցուցեր են 116 յօդուածին մէջ դրուած ժամադրութիւնը՝ հրաման կտրուի որ եղած պակասներուն կամ սխալներուն վրայ յայտարարութիւն տան գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանները միայն այն ժամանակ՝ երբոր կրնան ապացոյցներ տալ թէ իրենց ժամադրութիւնը անցուցածին պատճառ եղած են մասնաւոր եւ ամենայն

յարգանաց արժանի պարագաներ: Այսպիսի ապացոյցներուն արժէքը քննելը նոյն պաշտօնարաններուն գործն է:

118. Կոչողական ցուցակներ կազմող պաշտօնարանները եւ պաշտօնատէր անձինքը (յօդ. 102 եւ ծանօթ.), ամենէն ուշ մայիսի 1-ին կներկայացընեն զանոնք. նմանապէս այն անձանց ցուցակները՝ որոց տարիքը պիտի սահմանուի՝ նոցա դրսի տեսքին նայելով, պիտի ներկայացընեն գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանները՝ ըստ պատկանելոյն:

*Գ. Մեկ կոչողական քաղե մը ելնելով՝ ուրիշ քաղե մեջ գրուելու վրայ.*

119. Զինուորական պարտաւորութեան տակ գտնուող ամենայն անձանց իրաւունք կտրուի կոչման ներկայանալու՝ կամ այն թաղերուն մէջ յորս գրուած են, կամ անոնց մէջ՝ յորս իրենք կամ նոցա ծնողքը անշարժ կայք ունին, կամ թէ յորս բնակածները՝ երեք ամիսէն պակաս չէ մինչեւ այն օրը՝ յորում ընտրած են իրենց գրուելու եւ ներկայանալու թաղը (յօդ. 120):

120. Որոնք որ կցանկան զինուորական պարտաւորութիւնը կատարել ոչ թէ այն թաղին մէջ՝ ուր որ գրուած են, հապա ուրիշի մէջ, կպարտաւորին ծանուցանել զայն (ներկայացընելով իրենց ունեցած իրաւունքին վկայական՝ զօրու



Թեամբ նախընթաց 119 յօդուածին) ամենէն ուշ՝ ի 15 յունուարի այն տարւոյն՝ յորում պարտական են կոչուելու՝ աշխարհագրի ցուցակներուն մէջ անցնողները, ու անոնց մէջ անցնելու պարտական եղողները — Թէ՛ իրենց ընտրած նոր Թաղին եւ Թէ՛ այն Թաղին՝ յորում արդէն գրուած են՝ գեղապետական տեսչութեանը կամ քաղաքական կառավարութեանը. ուրիշ անձինք պիտի ծանուցանեն այն պաշտօնատեղեաց՝ որոց գործն է կատարել կոչման վերաբերեալ խնդիրները Թէ՛ այն եւ Թէ՛ միւս Թաղին մէջ: Նշանակեալ ժամադրութենէն ետքը ծանուցմունքները կընդունուին միայն այն ատեն՝ երբոր յարգելու արժանի պատճառներ բերուին ուշանալուն:

121. Երբոր մէկ կոչողական Թաղէ մը մէկալը անցնին այնպիսի անձինք որ պարտական են վկայականներ ունենալու իրենց գրուած եղածին (յօդ. 97), այն Թաղէ Թաղ անցնող անձին վկայականին վրայ մակագրութիւն կանէ նոյն իմաստով այն պաշտօնարանը՝ որոյ կոչողական Թաղին մէջ կգրուի անձը:

122. Թաղէ Թաղ անցնողներուն ամենուն վրայ առանձին տեղեկագիր կշինուի, եւ այն տեղեկագիրը մասնաւոր կոչողական ցուցակին հետ կգրուի: Կոչողական ցուցակներուն մէջ՝ ընտրուած Թաղին նայելով՝ այնպիսի անձինք առանձին բաժնի մէջ կտեղաւորուին:

**Դ. Զինուորական պարստորութիւնը կասարեշու աւսեն՝ արսուորսիւններ ընդունելու համար լիներու ծանուցման վրայ.**

123. Այն անձինքը որ կցանկան յետածգութիւն (ժամանակ) (1) առնուլ իրենց ուսումը աւարտելու համար, կծանուցանեն այս բանս իրենց գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանին զինուորական պարտաւորութեան, ներկայացընելով վկայական իրենց ուսումը շարունակածներուն համար այն ուսումնարանին գլխաւորէն՝ յորում իրենք ուսում կառնուն, եւ կբացատրեն Թէ կցանկան արդեօք զինուորական պարտաւորութիւնը կատարել վիճակ հանելով՝ Թէ իբրեւ ինքնակամ գնացող ի զինուորութիւն:

124. Երբոր մէկը ծանուցանէ Թէ կցանկայ յետածգութիւն ընդունիլ այն պատճառաւ՝ որ դաշնադրութեան մը զօրութեամբ կգրտնուի Ռուսաց առեւտրական նաւատորմի վրայ իբրեւ նաւաստի, մեքենագործ կամ կրակ վառող, պիտի ներկայացընէ գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանին զինուորական

(1) отсрочка.



պարտաւորութեան՝ դաշնադրութեան ընագիւրը կամ անոր վաւերացեալ պատճէնը :

125. Այն անձինքն որ նշանակուած են 123 եւ 124 յօդուածներուն մէջ, նմանապէս անոնք որ կցանկան վայելել ստացուածական դրութեան (1) պատճառաւ տրուելու արտօնութիւնը ; պարտական են ծանուցանել զայն պատկանեալ պաշտօնարանին՝ զինուորական պարտաւորութեան կոչման հասնելէն երկու ամիս առաջ, եւ ոչ աւելի ուշ : Այն ժամադրութենէն ետեւ եղած ծանուցմունքը կընդունուին միայն այնպիսի ժամանակ՝ երբոր ծանուցանողը յարգելու արժանի պատճառներ բերէ ուշացընելուն :

126. Զինուորական պարտաւորութենէ ընդհանրապէս՝ եւ կամ միայն խաղաղութեան ժամանակ զինուորական ծառայութենէ ազատ մընալու իրաւունք ունեցողները, նմանապէս անոնք որ իրաւունք ունին ներգործական ծառայութեան ժամանակաց համառօտուելուն, կներկայացընեն իրենց գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանին, *սուսջիւնները*՝ պէտք եղած վկայական մը այն վիճակին կամ պարագմունքին որ իրաւունք կուտայ սղատ մնալու զինուորական պարտաւորութենէ, կամ խաղա-

(1) Имущественное положение.

ղութեան ժամանակ զինուորական ծառայութենէ. իսկ *միւսները՝ սիփյօւ* կամ *սքքէսքսք* ուսումնական կամ դասառական աստիճանին, կամ թէ վկայական ուսումնարանի գլխաւորէն՝ ուսման ընթացքը աւարտելուն, կամ անոր համեմատ հարցաքննութիւն բռնածին համար :

Գ Լ Ո Ւ Ժ.

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՉՈՒԻԼ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՈՒԻԼԸ.

Ա. Կոչման համար շինելու նախապատրաստակաւ կարգադրուքեանց վրայ :

127. Գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանները մասնաւոր կոչողական ցուցակները (յօդ. 118) ընդունելէն ետեւ՝ կըստուգեն անոնց կանոնադրութիւնը, եւ ի՛նչ պակասութիւններ որ տեսնուին՝ կշտկեն, կամ անմիջապէս եւ կամ պէտք եղած պաշտօնատեղեաց հետ խորհրդակցելով :



128. Գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանները երբոր իրենց ընդունած ծանուցմունքները (յօդ. 123—126) կըաղղատեն կոչողական ցուցակաց մէջ եղած տեղեկութեանց հետ (յօդ. 104), թէ՛ այն ցուցակներուն մէջ եւ թէ՛ մասնաւոր կոչողական ցուցակի մէջ այն անձանց վրայ որ նշանակուած են 95 յօդուածին մէջ՝ ծանօթութիւններ կանեն, թէ՛ ցուցակներուն մէջ գրուողներէն ո՛վ եւ ի՛նչ տեսակ արտօնութեան իրաւունք ունի զինուորական պարտաւորութիւնը կատարելուն պատճառաւ:

129. Գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանները մասնաւոր կոչողական ցուցակները ստուգելու ատեն՝ կ՛միացնեն զանոնք հանրական թաղական ցուցակներուն հետ, իւրաքանչիւր կոչողական թաղինը զատ զատ, եւ ամէն մէկուն վրայ կաւեցընեն երեք առանձին ցուցակներ. մէկը Ա — այն անձանց որ այն թաղին մէջ՝ ըստ 158, 217 եւ 218 յօդուածոց կարգադրութեանս՝ զինուորական ծառայութեան տակ կընկնին առանց վիճակ հանելու. երկրորդը Բ — այն անձանց որ իրենց վիճակը հանած են թաղին մէջ՝ նախընթաց կոչումներու ժամանակը, եւ յետածգութիւն ընդունած են մինչեւ առաջիկայ կոչումը. եւ երրորդը՝ Գ — այն անձանց որ կոչողական հասակ ունեցող են թաղին մէջ, եւ ի ծառայութեան կգտնուին իբրեւ ինքնակամ

գրուողներ. եւ ուսումնարաններու մէջ գտնուողներէն անոնց որ ցանկութիւն յայտներ են զինուորական պարտաւորութիւնը կատարելու իբրեւ ինքնակամ զինուորներ (յօդ. 54):

130. Գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանները թաղական ցուցակները կազմէին ետեւ կներկայացընեն՝ մինչեւ յուլիսի 1-ը՝ կուսակալութեան կամ նահանգի զինուորական պարտաւորութեան պաշտօնարաններուն ձեռքովը Պատերազմի եւ ներքին Գործոց Ոստիկանարանաց տեղեկութիւններ՝ թէ՛ քանի հոգի գրուեր են իւրաքանչիւր թաղի կոչողական ցուցակներուն, եւ ընդհանուր գումարով՝ գաւառին ցուցակներուն մէջ, այն թուոյն մէջը չառնելով ոչ ուրիշ թաղեր անցած անձինքը, եւ ոչ զանոնք որ անցուած են ամբողջացընող Բ եւ Գ ցուցակներուն մէջ (յօդ. 129), նմանապէս այն անձինքը որ ըստ 62 յօդուածին՝ իրաւունք ունին ազատ մնալու զինուորական ծառայութենէ:

*Բ. Տարեկան կոչմանք գրուած զինուորականաց քաշխմանը վրայ.*

131. Պատերազմի Ոստիկանարանը նախընթաց յօդուածներուն մէջ յիշուած տեղեկութիւնները ընդունելէն ետեւ՝ կըաշխէ կամ կտրամադրէ ընդհանուր տարեկան կոչումը կուսակալութեանց



եւ նախանգաց մէջ, անոնց իւրաքանչիւրին կոչողական ցուցակներէն երեւցած մարդկանց որքանութեանը նայելով: Իւրաքանչիւր կուսակալութեանց եւ նախանգաց տարեկան կոչման ցուցակը կհաղորդուի զինուորական պարտաւորութեան պաշտօնարանաց կուսակալութեանց եւ նախանգաց, եւ կհրատարակուի ի տեղեկութիւն հասարակաց:

132. Տարեկան զօրաժողովոյն բաշխուիլը իւրաքանչիւր կուսակալութեան եւ նախանգի կոչողական թաղերուն վրայ՝ կլինի կուսակալութեան կամ նախանգի զինուորական պարտաւորութեան պաշտօնարանին ձեռքովը, նայելով այն անձանց որքանութեանը՝ որ թաղական կոչողական ցուցակներուն մէջ անցած են (յօդ. 130): Այսպիսի ատեն կոտորակները (1) դուրս կձգուին. իսկ մարդկանց պակաս եկած թիւը կբաժնուի այն թաղերուն վրայ (իւրաքանչիւր թաղին մէկ հոգի եւ ոչ աւելի), որոց մէջ կոչման ենթակայ անձինքը աւելի են. իսկ երբոր այն կողմանէ հաւասարութիւն տեսնուի, — անոնց վրայ՝ ուր որ աւելի կոտորակներ մնացած են:

133. Կուսակալութեան կամ նախանգի պաշտօնարանին կոչողական թաղերուն մէջ ըրած բաշխումը (յօդ. 132) կհաղորդուի գաւառական, շրը-

(1) дробь.

ջանակային եւ քաղաքական պաշտօնարանաց եւ կհրատարակուի տեղական պաշտօնական լրբագրաց մէջ:

Գ. Կոչման (1) վրայ.

134. Կոչման ժամանակը հասնելու մօտ, գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանները իւրաքանչիւր թաղի համար կոչման օրեր կնշանակեն, եւ կկարգադրեն որ իւրաքանչիւր թաղին կոչման տեղը՝ այն որոշեալ օրը՝ կանչուին թէ՛ անոնք որ նշանակուած են կոչողական եւ ամբողջացուցիչ Ա եւ Բ ցուցակներուն մէջ (յօդ. 129) (դուրս հանելով հետագայ 135 յօդուածին մէջ նշանակուածները), եւ թէ՛ զանոնք՝ որոց տարիքը պիտի սահմանուի՝ նոցա դրսի տեսքին նայելով:

135. Թաղին մէջ ներկայանալու ջնն կանչուիլը, այն անձինքը որ կոչողական ցուցակին մէջ անցնելէն ետեւ՝ սրբազան աստիճան ընդունած են ըստ ուղղափառ (Ռուսաց) եւ այլ քրիստոնեայ դաւանութեանց. նմանապէս ուղղափառ (Ռուս) սաղմոսասացները (2) դպիրները. Բ) այն ուսումնարանաց մէջ ուսանողները՝ որոց ժամանակ կտրրուի իրենց ուսումը աւարտելու. եւ Գ) այն

(1) призывъ. — (2) псаломщикъ.



անձինքը՝ որ յետածգուծիւն ընդունած են՝ իրենց առեւտրական նաւերու վրայ ի ծառայութեան՝ դաշնադրութեան զօրութեամբ գտնուելուն պատճառաւ :

136. Կոչուելէն ետեւ չներկայանալու օրինակոր պատճառ կրնայ համարուիլ վտանգաւոր կամ ծանր հիւանդութիւն եւ ուրիշ անյաղթելի արգելքներ՝ եթէ ըստ պատշաճի ապացուցուին : Հիւանդութեան ապացոյց կհամարուի բժշկին ու բարեկարգարանին վկայականը, եւ կամ եթէ հիւանդին եղած տեղը բժիշկ չգըտնուի՝ տեղական քահանային եւ հաշտարար դատաւորին կամ գեղապետութեան ծերին վկայագիրը :

*Դ. Դրսի տեսիլն նայելով սարիք որոշելու վրայ .*

137. Գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը թաղին մէջ տեղաւորուելէն ետեւ՝ կսկսի գործ կատարել, ու դրսի տեսքին նայելով տարիք սահմանել այն անձանց՝ որոց տարիքը կարելի չէ եղած որոշել այն բանին համար դրուած տօքումէններով (յօդ. 109, 111 եւ 112) :

138. Դրսի տեսքին նայելով տարիքը կորոշէ գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը՝ երբ անոր կազմութիւնը ամբողջ է՝ առաւելութեամբ ձայնից կամ բուէից : Եթէ

անհամաձայնութիւն պատահի, եղած որսշմունքը կմատուցուին ի քննութիւն եւ ի հաստատութիւն կուսակալութեան կամ նահանգի պաշտօնարանին, որ կարող է կրկին վկայութիւն տալ ենթակայ անձին համար՝ եթէ անպատճառ հարկաւոր ճանչնայ զայն անելը :

139. Կոչողական ցուցակի մէջ չանցած այն անձինքը՝ որ իրենց յատուկ պաշտօնարաններէն (յօդ. 138) ճանչցուին զինուորութեան պահանջած տարիքը ունեցող, նոյն ցուցակին բաժանմանցը մէջ կգըրուին :

*Ե. Կոչողական ցուցակները վսխանակալն կերպով ստուգելու վրայ, եւ վիճակ հասկերու պարսակակն եղող անձանց վրայ .*

140. Կոչողական ցուցակը ամբողջացընելէն ետեւ, գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը՝ նայելով անոր եւ ամբողջացուցիչ Ա եւ Բ ցուցակներուն՝ կստուգէ կանչուած ու եկած անձինքը, կարգաւով ի լուր ամենեցուն՝ թէ՛ այն ցուցակները եւ թէ՛ ամբողջացուցիչ Գ ցուցակը, նմանապէս կոչողական ցուցակին վրայ նշանակուած ամենայն ծանօթութիւնները՝ թէ՛ կանչուածներէն որո՛ւն ի՛նչ տեսակ արտօնութիւն կտըրուի եւ ի՛նչ պատճառաւ : Ամենայն կանչուած եւ օտար անձինք իրաւունք



ունին այն ծանօթութեանց ճուղիները դէմ բողբելու. եւ եթէ պաշտօնարանը այն բողբները իրաւացի ճանչնայ, ցուցակին մէջ պետք եղած սրբագրութիւնները կանէ: Յետ այնորիկ վիճակ կհանուի. այն վիճակ հանելու պարտքը ունին ամենայն անձինք՝ որ Թաղին կոչողական ցուցակին մէջ գրուած են, դուրս հանելով միայն ուղղափառ (Ռուս) եւ ուրիշ քրիստոնեայ դաւանանքներու սրբազան աստիճան ունեցողները: Ամբողջացուցիչ ցուցակներու մէջ գրուած անձինք վիճակ հանելու պարտական չեն:

**2. Վիճակի քուսնաւարները հսկելու կարգին վրայ.**

141. Վիճակ հանելու սկսելէն առաջ՝ նախագահը կբաղբատէ պատրաստուած Թուագրուած պիղքերը, այսինքն տոմսակները, կոչողական ցուցակներուն մէջ գրուած անձանց Թուոյն հետ, եւ իւրաքանչիւր պիլեթին վրայ որպիսի եւ իցէ նշան մը կդնէ: Յետոյ նախագահին աչքին առջեւ պիլեթները կգորեն (կծալեն), կխառնեն եւ կլեցընեն առանձին սափորի (1) կամ անուոյ (2) մէջ: Վիճակ հանելու կանչուածներուն հրաման կտրբուի որ ծալուած պիլեթները սափորին կամ անուին մէջ լեցընելէն առաջ՝ նորէն համրելու եւ խառնելու համար ընտրեն իրենց մէջէն հաւատարիմ անձ մը:

(1) ящикъ. — (2) колесо.

142. Վիճակ հանելու համար նախ եւ առաջ կորոշուի՝ նոյնպէս վիճակով՝ Թէ ինչ կարգով պիտի հանեն վիճակը կոչողական Թաղին կազմութեանը մէջ մտնողները, քաղաքական եւ գիւղական հասարակութիւնները եւ միանգամայն նորա ամէնքը՝ որ անմիջապէս Թաղին մէջ կհամարուին (յօդ. 95): Այնուհետեւ մարդիկը կկանչուին ետեւէ ետեւ այն կարգով՝ ինչ կարգով որ նշանակուած են մասնաւոր կոչողական ցուցակներուն մէջ: Իւրաքանչիւր կանչուող անձը կհանէ իրեն համար վիճակաւ Թիւ մը. իսկ հոն չգտնուողներուն համար Թիւերը կհանեն կամ նոցա հոն գտնուող ազգականները, կամ պաշտօնարանին նախագահը. կամ քաղաքական կառավարութեանց անդամները, եւ կամ գեղապետութեանց ճերերը: Թուահամարը կկարդայ ի լուր ամենեցուն պաշտօնարանին անդամներէն մէկը, եւ անոր հետ մարդուն անունը եւ կոչողական ցուցակին մէջի անոր Թիւը, եւ կուտայ պաշտօնարանին անդամներուն որ ստուգեն եւ նշան դնեն՝ Թէ՛ նոյն պիլեթին վրայ եւ Թէ՛ կոչողական ցուցակին մէջ: Նոյն միջոցին վիճակը թանողին անունը եւ նորա Թուահամարը ըստ կոչողական ցուցակին՝ կգրբուին վիճակի ցուցակին մէջ: Յետ այնորիկ պիլեթը հանդերձ Թուահամարով կյանձնուի այն վիճակը հանողին, եւ այլ եւս ետ չառնուի:



143. Թաղին մէջ վիճակի Թուահամարները հանելու գործողութիւնը կվերջանայ ըստ կարի մէկ օրուան մէջ. իսկ եթէ կարելի չլինի՝ կշարունակուի միւս օրերն ալ, մինչեւ որ վերջանայ. ասոր համար հետագայ կանոնները կպահուին.

1) Սափորը կամ անիւը կդրուի աչքի երեւցող տեղ:

2) Վիճակին Թուահամարները կհանուին սափորէն կամ անիւէն հրապարակաւ:

3) Վիճակ հանողը պարտական է ձեռքը սափորին կամ անիւին մէջ խոթելէն առաջ՝ սօթտել Թեւը մինչեւ արմուկը (*shruklyr*) եւ բաց ցուցընել հոն գտնուողներուն:

4) Բաց ի վիճակ հանողէն ոչ ոք պիտի մօտենայ սափորին կամ անիւին:

5) Ամէն մարդ մէկ անգամ միայն վիճակ կհանէ: Ով որ վիճակը հանեց, զինուորական պարտաւորութիւնը կրկատարէ՝ իրեն ելած Թուահամարին գօրութեամբը, Թէպէտ եւ՝ ի՛նչ եւ իցէ սխալ հասկըցողութեամբ՝ կարգը դեռ իրեն չեկած հանած լինի վիճակը:

6) Եթէ վիճակ հանելը չվերջանայ մէկ օրուան մէջ, սափորը կամ անիւը՝ անոր մէջ մնացած Թուահա-

մարներով կըրգուի մինչեւ միւս օրը. բայց անպատճառ պէտք է պաշտօնարանին անդամները իրենց կնիքները զարնեն վրան եւ յանձնեն զայն ի պահպանութիւն՝ իրենցմէ նշանակուած յատուկ պահպանին:

Է. *Զինուորական ծառայութեան մեկնողները զրկուելու (1) եւ ընդունելու վրայ.*

144. Վիճակները հանուելէն ետեւ՝ գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը կսկսի զննել զինուորական պարտաւորութիւնը կատարելու կանչուած անձինքը, եւ անոր պիտանի երեւցածներն ընդունելու: Զրկուութեան ժամանակ, որ կկատարուի 43 յօդուածին մէջ նշանակուած կանոններուն համեմատ, կրնան գտնուիլ նաեւ օտար անձինք, եթէ պատշաճ տեսնէ պաշտօնարանին նախագահը:

145. Զննութենէ ազատ կմնան նոքա որ Տէրութեան ծառայութեանը մէջ գտնուող բժշկէ մը վկայական կներկայացընեն՝ Թէ ոչ իրենց մարմնոյն կազմութեանը եւ ոչ առողջութեանը կողմանէ այնպիսի պակասութիւններ չունին՝ որ արգելք լինին զինուորական ծառայութեան ընդունուելու:

(1) осмотръ, освидѣтельствоваііе.



146. Չննուծեան տակ կընկնին ամենէն առաջ այն անձինքը՝ որ գրուած են ամբողջացուցիչ Ա եւ Բ ցուցակներուն մէջ (յօդ. 129), եւ յետոյ յաջորդական կարգաւ թուահամարաց վիճակի ցուցակին մէջ՝ նորա որ իրաւունք չունին արտօնութիւն մը առնելու՝ ընտանեկան հանգամանաց պատճառաւ: Եթէ այնպիսի անձինքը չբաւեն ամբողջացընելու թաղին մէջէն առնուելու նորընտիր զինուորաց թիւը, զննուծեան տակ կձեռնարկին նոյն կարգաւ այն անձինքը՝ որ իրաւունք ունին արտօնութեան ըստ երրորդ կարգի ընտանեկան հանգամանաց, յետոյ ըստ երկրորդ կարգի, եւ հուսկ յետոյ առաջին կարգի հանգամանաց, մինչեւ որ նորընտիր զինուորաց այն թաղէն պահանջուած բոլոր թիւը ամբողջանայ:

147. Վիճակ հանելու մասնակից եղող այն անձինքը՝ որ դատաքննութեան կամ դատաստանի տակ են՝ զննուծեան տակ կընկնին եւ ծառայութեան մտնելու կորոշուին, առաջինները՝ անմիջապէս դատաքննութեան վերջանալէն ետեւ, եթէ դատաստանական պատժապարտութեան ենթակայ չլինին, իսկ միւսները՝ դատաստանական վճռոյն նոցա վրայ կատարուելէն ետեւ, եթէ այն վճիռը չգրկեր զիրենք վիճակի ամենայն իրաւունքներէն, եւ կամ ամենայն մասնաւոր իրաւունքներէ եւ արտօնութիւններէ որ սեպհական են նոցա անձին կամ վիճակին:

148. Եթէ մէկը զննուծեան ժամանակ ծանուցանէ՝ թէ ինքը ենթակայ է վերնտուծեան (*բուքարիս*) (1) կամ ուրիշ ծածուկ հիւանդութեան մը որ արգելք կլինի զինուորական ծառայութեան, երբոր կասկած չին թէ նորա խօսքը սուտ է, պաշտօնարանը կորկէ զինքը մերձաւոր *կօսիիրարը* կամ հիւանդանոցը՝ որ փորձուի թէ արդեօք յարմար է զինուորական ծառայութեան թէ ոչ: Նոյն կերպով կվարուի պաշտօնարանը նաեւ այն ատեն՝ երբոր բժշկաց դատողութեանը նայելով՝ կարելի է ենթադրել թէ այն հիւանդութիւնը, որոյ պատճառաւ կարելի է ծառայութեան ընդունիլ, պատճառուած է ու կշարունակուի շինծու հնարքով: Հիւանդանոց զրկուածներուն ապրուստը՝ անոնց փորձին ժամանակը Տէրութեան գանձէն կհոգացուի, եթէ իրենք չցանկան ապրիլ հիւանդանոցին մէջ իրենց սեպհական ծախքովը:

149. Պաշտօնարանները զննուող անձինքը զինուորութեան ընդունակ կամ անընդունակ ձանձնալու կողմանէ պարտական չեն զննութիւնը անող բժշկաց կարծիքին հնազանդելու: Այն անձինքը՝ որ զննութեան ներկայ կգտնուին (յօդ. 144) իրաւունք ունին բողոքելու անձի մը զինուորական ծառայութեան անընդունակ համա-

(1) парухар.



րուածին դէմ: Այսպիսի բողոքները կանցուին գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանին օրագրութեանը (1) մէջ. իսկ կուսակալութեան կամ նահանգի պաշտօնարանին տրուած է իշխանութիւն՝ այս դէպքերուս մէջ նորէ նոր զննութեան ու վկայութեան տակ ձգել նաեւ այն անձինքը՝ որոց համար միաձայն վկայութեամբ որոշում եղած է զննութիւնը անող պաշտօնարանին կողմանէ:

150. Իւրաքանչիւր թաղի վրայ բաշխուած անելով՝ մարդկանց թիւը ամբողջացընելը, փոխանակ, 1) անընդունակ ձանչցուածներուն, 2) նորէն զննութեան ու վկայութեան տակ ընկնողներուն, 3) փորձի համար հիւանդանոցները դըրկուածներուն, 4) կոչման ջներկայացողներուն, եւ 5) դատաքննութեան կամ դատաստանի տակ գտնուողներուն, ամբողջացումը կլինի վիճակի թուահամարներուն կարգաւ եւ աստիճանաբար, ինչպէս որ ասուած է 146 յօդուածին մէջ:

151. Նախընթաց յօդուածին 2, 3 եւ 4 պարբերութեանցը մէջ յիշուած անձինքը զինուորական ծառայութեան կառնուին՝ եթէ անոր պիտանի ձանչցուին անմիջապէս վերազննութենէն ետեւ, կամ փորձը վերջանալէն ետքը, եւ կամ երբոր բռնուին կամ ներկայանան: Իսկ նոցա

(1) журналъ.

տեղը ընդունուած անձինքը, նմանապէս նախընթաց յօդուածին հինգերորդ պարբերութեանը մէջ յիշատակուած անձանց տեղը առնուողները, իրաւունք ունին փոխադարձ կարգաւ իրենց թուահամարներուն՝ ըստ ցուցակին վիճակաց, արձրկուելու ի զինուորութենէ, եւ ազատագորաց կարգը դրուելու, եթէ այն անձինքը՝ որոց տեղն որ ընդունուած են իրենք՝ յետոյ մտնեն ի զինուորական ծառայութիւն:

152. Այն անձինքը որ պիտանի ձանչցուած են զինուորական ծառայութետն, եւ մտած են թաղին մէջէն պահանջուած նորընտիր զօրաց թրւոյն մէջ, կհամարուին ի ծառայութիւն ընդունուած, եւ իսկոյն կգրուին ընդունելոց ցուցակին մէջ: Բայց նոքա որ իրաւունք ունին արտօնութեան՝ ընտանեկան հանգամանաց պատճառաւ ըստ առաջին կարգի, ընդունելութեան ցուցակին մէջ կանցուին միայն այն ատեն՝ երբ որ զանոնք զօրաց կարգը առնելու համար առանձին վճիռ կլինի Կայսերական Խորհրդարանէն, ըստ առաջարկութեան Պատերազմի Ոստիկանին՝ բարձրագոյնս հաստատուած:

153. Ընդունելութեան ցուցակին մէջ կանցուին ընդունուած մարդուն անուանը եւ ազգանունին կամ մականունին հետ՝ այն ամենայն տեղեկու-



Թիւնները որ անպատճառ հարկաւոր են նորա ծառայութեան ցուցակը (1) կազմելու :

154. Երբոր վերջանայ մարդիկ ընդունելը ի ծառայութիւն հաստատուն զօրաց մէջ, գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը ազատազօրաց կարգը կանցընէ՝ ըստ վիճակաց ցուցակին՝ միւս ամենայն անձինքը որ կանչուած են զինուորական պարտաւորութիւնը կատարելու, դուրս ձգելով զանոնք՝ որ իրենց դրսի տեսքին նայելով՝ ընդունակ չեն երեւնար զէնք բանեցընելու :

155. Գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանին գործը այս է՝ Թաղերուն մէջ կոչում եւ ընդունելութիւն արած ժամանակը, որ ի լուր ամենեցուն պիտի կարդացուի ի զինուորութիւն ի կարգի հաստատուն զօրաց ընդունուածներուն ցուցակը, եւ զանոնք պիտի երդուրնուի : Հաստատուն զօրաց մէջ ընդունուած մարդիկը կրնան արձրկուիլ եւ իրենց տները երթալ՝ ըստ կարգադրութեան կուսակալութեան կամ նահանգի պաշտօնարանին, որ այս բանիս մէջ կվարուի այն հրահանգներով՝ որ տրուած կլինին իրեն՝ համաձայնութեամբ Պատերազմի եւ ներքին Գործոց Ոստիկաններէն : Արձրկուած նորընտիր զինուորներուն կճանու-

(1) *послужной списокъ.*

ցուի Թէ ո՛ր ժամանակ պիտի մտնեն ի ծառայութիւն, եւ այն կուսակալութեան՝ յորում գրուած են՝ ո՛ր տեղը պիտի գտնուին :

156. Երդմանէ (յօդ. 155) ազատ են այն անձինքը՝ որոնք իրենց դաւանանքին զօրութեամբը հրաման չունին երդում անելու. այնպիսի անձանց իւրաքանչիւրին վրայ ընդունելութեան ցուցակին մէջ նշան կդրուի :

157. Մենոնիթները կրնան նշանակուիլ՝ միայն շարքէ դուրս պաշտօններու, հիւանդանոցներու կամ ցամաքային եւ կամ ծովային զօրաց արուեստանոցներուն եւ անոնց նման գործատուններու մէջ, որով ազատ կլինին զէնք բանեցընելէն : Բայց այս կանոնը այն Մենոնիթներուն չտարածուի՝ որոնք որ յետոյ կմիանան նոցա ազանդին հետ, եւ կամ դրսի երկիրներէ կուգան Կայսերութեան մէջ բնակելու՝ այս Կարգադրութեանս հրատարակուելէն ետքը :

*Ը. Կոչողական ցուցակներուն մէջ չգրուած անձանց վրայ :*

158. Ի զինուորութիւն կանչուելու տարիքին հասնողներէն (յօդ. 11) ով որ կոչողական ցուցակին մէջ գրուած չլինի, եւ այս բանը չիմացընէ մինչեւ այն օրը՝ յորում նորա հասակակիցները վիճակ կհանեն (յօդ. 142), այնպիսին կզրուի վիճակ հանելու իրաւունքէն. եւ Եթէ զի-



Նուորական ծառայութեան յարմար տեսնուի՝ կմրտնէ ի ծառայութիւն. բայց այս կանոնիս տակը չեն ընկնիր այն անձինքը՝ որ կներկայացրնեն այնպիսի ապացոյցներ, որ յարգելի են՝ ըստ կարծեաց գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանին, թէ իրենց կոչողական ցուցակին մէջ չգրուելուն պատճառը ամենեւին իրենց կողմանէ եղած զանցառութիւն մը չէ: Այնպիսի անձանց, եթէ զինուորական ծառայութեան պիտանի տեսնուին, պաշտօնարանը վիճակ հանել կուտայ առանձին (յօդ. 159):

159. Այն անձին կամ անձանց համար՝ որոց առանձին վիճակ հանել կտրրուի, սափորին կամ անիւին մէջ այնքան պիլէթ կղբրուի՝ որքան որ նոցա կոչողական թաղին մէջ որոշուած էր իրենց քոլոր տարեկիցներուն համար (յօդ. 141): Ով որ այնպիսի թիւ մը հանէ որ հաւասար կամ փոքր է քան զայն թիւը՝ որով որոշուեցաւ հաստատուն զօրաց մէջ ընդունուիլը (յօդ. 146), այնպիսին կգրրուի հաստատուն զօրաց. իսկ ով որ վերոյիշեալ թուահամարէն ուելի մեծ թիւ կհանէ, կգրրուի ազատագօրաց մէջ (յօդ. 154): Ի՞նչ կերպով եւ իցէ վիճակ հանողին անունը եւ վիճակին թիւը կգրուին վիճակաց ցուցակին վերջը, իսկ պիլէթին վրայ այսպէս կգրրուի. «Ամբողջացուցիչ վիճակ (1)»:

(1) жеребий дополнительный.

**Թ. Զինուորական պարտաւորութիւնը կասարելոյ համար տուած վիսյակիւնաց վրայ.**

160. Ով որ վիճակ հանած լինի, բայց հաստատուն զօրաց ծառայութեանը չմտնէ, անոր վկայական կտրրուի՝ թէ կատարեր է զինուորական պարտաւորութեան ներկայանալու պարտքը. եւ յանուանէ,

1) Անոր որ բոլորովին անընդունակ ճանչցուած է ծառայութեան, — ծառայութենէ իսպառ ազատ լինելուն անսահման վկայական (1).

2) Ազատագօրաց ռաթնիքներուն կարգը անցնողին, — այն բանին համար անսահման վկայական, նշանակելով նորա հանած վիճակին թուահամարը. եւ

3) Այն անձանց որ ծառայութեան մէջ մտնելու համար յետաձգութիւն ընդունած են, նմանապէս անոնց որ վերազննութեան տակ կընկնին, կամ բժշկական տեղեր յուղարկուած են փորձուելու համար, կամ դատա-

(1) безсрочное свидетельство.



քննութեան եւ դատաստանի տակ են,  
— կտրրուին առժամանակեայ վկայա-  
կաններ, եւ անոնց մէջ Տիշը կերպով  
կնշանակուի՝ թէ ի՞նչ պայմաններով  
կվերջանայ վկայականին զօրութեան  
ժամադրութիւնը :

161. Ո՛ր անձինքն որ պարտական են վկայա-  
կան ունենալու՝ թէ գրուած են կոչողական  
Թաղի մը մէջ (յօդ. 97), երբոր զինուորական  
պարտաւորութիւնը կատարելու կներկայանան,  
անոնց վկայականին վրայ պէտք եղած մակա-  
գրութիւնը կլինի :

162. Առժամանակեայ վկայական ընդունողը  
(յօդ. 160, պարբ. 3) պարտական է անոր ժա-  
մադրութիւնը անցնելէն ետեւ ծանուցանել զայն  
գաւառական, շրջանակային կամ քաղաքական  
պաշտօնարանին, որպէս զի ընդունի անկից տե-  
ղեկութիւն՝ թէ ո՛ր ժամանակ եւ ո՛ր տեղ պէտք  
է ներկայանայ վկայական առնելու, եւ զինուո-  
րական ծառայութեան ընդունուելու :

163. Այն վկայականները՝ որ կտրրուին մէկուն՝  
թէ ներկայացեր է զինուորական պարտաւորու-  
թիւնը կատարելու (յօդ. 160), նմանապէս մէ-  
կուն մէկ Թաղի մը գրուածին վկայականը՝ հան-  
դերձ անոր պէտք եղած ծանօթութեամբը, (յօդ.  
161), առաջ կբերուին այն անձինքներէն՝ որոց

կոչողական տարիքը անցած է, 100 յօդուածին  
մէջ նշանակուած ամէն տեսակ դէպքերու ժա-  
մանակ :

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՌՅՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՉԵԼՈՒ ԵՒ ԸՆ-  
ԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱԽԲԵՐԸ.

164. Զինուորական ծառայութեան կոչելու եւ  
ընդունելու համար եղած ծախքերէն՝ Տէրութեան  
գանձին վրայ կհաշուին առաջիկայ ծախքերը .

1) ձանապարհի, բնակարանի  
եւ կերակրոյ բաժնի (1) ծախք զինուո-  
րական աֆիցէտին, բժշկաց (թէ՛ զի-  
նուորականին եւ թէ՛ քաղաքականին)  
եւ զինուորական ընդունողին .

2) Այն նիւթոց պատրաստութեան  
ծախքերը՝ որ հարկաւոր են ընդու-  
նելու՝ անձանց հասակը չափելու եւ  
առողջութիւնը քննելու համար . եւ

3) Գաւառական, շրջանակային  
եւ քաղաքական պաշտօնարանաց դի-

(\*) порціонное довольствие.



ւանի ծախքերը, նմանապէս վիճակները, եւ սափորները կամ անիւները պատրաստելու, եւ գեղապետական տեսչութեանց տրուելու տպագրուած թերթերունը՝ կոչողական ցուցակներու համար:

165. Նախընթաց յօդուածին 3 պարբերութեանը մէջ նշանակուած ծախքերուն համար ընդհանուր հաշուով կհամարուի՝ իւրաքանչիւր նորընտիւր զինուորի համար՝ մէկ մէկ ըուպի: Այս կանոնով թագաւորական զանձէն առնուելու որոշուած ընդհանուր գումարը կտրամադրուի, ըստ չափու իրական հարկաւորութեան, կուսակալութեանց եւ նահանգաց մէջ—Գանձուց Ոստիկանէն՝ համաձայնութեամբ ներքին Գործոց Ոստիկանին. իսկ գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանաց մէջ—կուսակալութեան եւ նահանգի զինուորական պարտաւորութեան պաշտօնարաններէն:

166. ձանապարհի ու բնակարանի այն ծախքերը՝ որ պաշտօնարանաց նախագահներուն եւ անդամներուն համար կանէ երկրական կառավարութիւնը (իսկ ո՛ր կուսակալութեանց մէջ որ չեն հաստատուած երկրական կառավարութիւններ—պաշտօնարանին նախագահը եւ հաշտարար միջնորդը) կվերաբերին կուսակալութեան ընդհանուր երկրական տուրքերուն: Այն ծախքերուն

չափը որոշելը, նմանապէս գաւառական, շրջանակային եւ քաղաքական պաշտօնարանաց տրուելու՝ դիւանական ծախքերու համար ամբողջացուցիչ գումարը, եթէ այնպիսի գումար հարկաւոր Ֆանչցուի, կտնօրինուին ըստ դատողութեան երկրական ժողովոց կուսակալութեանց. իսկ ուր որ երկրական կառավարութիւններ չեն դրուած—ըստ այնմ կարգի՝ որ սահմանուած է կուսակալութեանց երկրական տուրքերուն ծախքերը որոշելու համար:

167. Գաւառական, շրջանակային եւ քաղաքական զինուորական պարտաւորութեան պաշտօնարաններուն համար տեղ կտրուի Տէրութեան կամ հասարակաց շինուածքներու մէջ: Եթէ այն շինուածքներուն մէջ ազատ կամ յարմար տեղ չգտնուի, ուրիշ տեղ վարձելու, նմանապէս կահ կարասի պատրաստելու, վառելիքի ու ձրագի ծախքը՝ կուսակալութեան մէջի երկրական տուրքերուն վրայ կգարնուին:

168. Լեհաստանի թագաւորութեան կուսակալութեանցը մէջ՝ նախընթաց 166 եւ 167 յօդուածներուն մէջ նշանակուած ծախքերը Տէրութեան զանձէն կլինին:

169. Այն անձինքը որ զինուորական պարտաւորութիւնը կատարելու կկանչուին՝ պարտական են իրենց թաղերուն կոչման տեղերը ներկայանալ կոկ հագուստով ու մաքուր ոտքի ամաններ



րով, եւ մինչեւ որ ի ծառայութիւն ընդունուին՝ իրենց ապրուստը իրենք կհոգան :

170. Հաստատուն զօրաց ծառայութեանը մէջ ընդունուածներուն Տէրութեան կողմանէ տրուելու ծախքը կհամրուի այն օրէն՝ յորում նոքա ժողովի տեղերը՝ կներկայանան (յօդ. 155). բայց նորընտիր զինուորներուն որ կոչման տեղէն կղըրկուին ծառայութեան տեղը, այն ծախքը կհամարուի ծառայութեան ընդունուած օրէն :

Գ. ԼՈՒԻ ՔԲ.

ԻՆՔԻՍԱԿԱՍ Ի ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՒՈՂՆԵՐԸ (1).

*Ա. Ինքնակալ ցանախային զօրաց մեջ գրուողներուն վրայ.*

171. Ով որ ցանկայ ինքնակամ յօժարութեամբ ցամաքային զօրաց մէջ գրուիլ, պարտական է հետագայ պայմանները կատարել. այսինքն

1) Տասնըեօթը տարեկան հասակէն պակաս չունենալ, եւ եթէ անչա-

(1) вольноопределяющийся.

փահաս է՝ վկայական ներկայացրնել՝ թէ իւր ծնողքը կամ հոգաբարձունբը (1) եւ կամ խնամակալները (2) յօժար են նորա ինքնակամ զինուոր գրուելուն .

2) Առողջութեան եւ մարմնոյ կազմութեան կողմանէ ունենալ այն պայմանները՝ որ որոշուած են ի զինուորական ծառայութիւն ընդունուելու համար . եւ

3) ներկայացրնել պէտք եղած վկայականը՝ թէ բռներ է հարցաքննութիւն ամբողջ ընթացից ուսման առաջին երկու կարգի ուսումնարանաց մէջ որ յիշատակուած են 53 յօդուածին Յաւելուածին մէջ, կամ թէ կիմնագիտներուն եւ ուրիշ *ռեպլի* դըպրոցներուն վեց դասարաններուն ընթացքէն, կամ թէ հոգեւոր Սեմինարիաներուն երկրորդ դասարանէն, կամ թէ այս բանիս վրայ՝ թէ առանձին հարցաքննութիւն բռնած են այն ուսումնական նախագծին համեմատ՝ որ սահմանուած է համաձայնութեամբ Ոստիկանաց Պատերազմի եւ Ազգային Լուսաւորութեան :

(1) опекунъ. — (2) попечитель.



172. Ինքնակամ զինուոր գրուելու հրաման չեն ունենար, ա) գըլխապարտութեան դատաստանի կամ դատաքննութեան տակ գտնուողները. 7<sup>2</sup>) դատաստանական վճռով այնպիսի պատժոյ տակ ընկածները՝ որով կզբրկուին Տէրութեան ծառայութեանը մէջ մտնելու իրաւունքէն. եւ 4) դատաստանով գող կամ խաբեբայ ճանչցուածները: Այս արատաւորիչ պարագաները չունեցածներուն՝ ինքնակամի զինուորութիւն գրուողներէն կպահանջուի վկայութեան համար ստորագրութիւն:

173. Ինքնակամ զինուոր գրուողները երեք կարգ կբաժնուին՝ իրենց առած ուսումնական կրթութեանը համեմատ, եւ պարտական են ծառայելու ներգործական զօրաց մէջ,

1) նոքա որ հարցաքննուած են առաջին կարգի ուսումնարանաց ընթացքէն—*երեխ, ախիս*.

2) նոքա որ երկրորդ կարգի ուսումնարանաց ընթացքէն հարցաքննութիւն բռնած են՝ այն չափով որ վերը յիշուած է (յօդ. 171, պարբ. 3) — *վեց ախիս*, եւ

3) նոքա որ հարցաքննութիւն բռնած են այն առանձին նախագծին համեմատ՝ որ սահմանուած է՝ համա-

ձայնութեամբ Ոստիկանաց Պատերազմի եւ Ազգային լուսաւորութեան — *երկու տարի*:

Այս ժամանակներով զինուորական ծառայութիւնը կատարելէն ետեւ ինքնակամ զինուոր գրուողները, թէ՛ ստորին կարգի մէջ եղողները եւ թէ՛ աֆիցեռութեան աստիճան առնողները կարող են խաղաղութեան ժամանակ կամ շարունակել ներգործական ծառայութիւնը, եւ կամ պահեստի զօրաց կարգը համրուիլ, յորում կմընան *յևը տարի*: Իսկ պատերազմի ժամանակ ծառայութիւնը շարունակելու կողմանէ՝ ինքնակամ զինուոր գրուողներն ալ այն կանոնին տակը կընկնին՝ որ դրուած է 20-րդ յօդուածին մէջ:

174. Ինքնակամ զինուոր գրուողները կընդունուին ի ծառայութիւն բոլոր տարւոյն ընթացքին մէջ: Ծառայութեան համար սահմանեալ ժամանակները կհամրուին զինուորութեան մտած ժամանակէն ետեւ եկող ամսոյն առաջին օրէն:

175. Ինքնակամ զինուոր գրուողները ի ծառայութիւն կընդունուին ամէն տեսակ զօրաց շարքի պաշտօններուն մէջ, ինչ պաշտօններու համար որ ինքնակամ գրուողները սահմանեալ են: Զօրաց այս կամ այն մասին ընտրութիւնը նոցա կամքին թողուած է, միայն այսու պայմանաւ՝ որ իւրաքանչիւր մասին ինքնակամ գրուողներուն թիւը աւելի չլինի քան զայն չափը՝ որ



սահմանուած է Պատերազմի Ոստիկանէն: Պատերազմի ժամանակ ինքնակամ զինուոր գրուողները իսկզբան տեղական զօրաց մէջ կմտնեն:

*Ծանօթութիւն.* Բժշկի օգնականներէն, այսինքն *Ֆէրո-շէրկերէն* ինքնակամ զինուոր գրուողներուն իրաւունք կտրուի ծառայելու Ֆէլաշէրի պաշտօնով:

176. Այն ինքնակամ զինուորները՝ որ մտած են թիկնապահ զօրաց (*կիսոսիա*) (1) կամ հեծելազօրաց (*ֆալաշոիա*) մէջ, իրենց սեպհական ծախքովը կապրին. իսկ ուրիշ զօրաց մէջ կրնդունուին նորա Տէրութեան ծախքով ապրելու, եթէ չցանկան իրենց սեպհական ծախքովը ապրիլ:

177. Այն ինքնակամ զինուորները՝ որ իրենց ծախքովը կծառայեն, իրաւունք կունենան բնակելու վրանաբնակ գումարմանց (2) միջոցէն դուրս, ազատ բնակարաններու մէջ, բայց որոշեալ մասանց զօրապետներուն դատողութեանը համեմատ՝ այն իրաւունքէն կրնան զրկուիլ այն ինքնակամ զինուորները՝ որոց վարքը առանձին հսկողութեան կարօտ կերեւնայ:

178. Ինքնակամ զինուորները ծառայութեան մէջ կմտնեն իբրեւ հասարակ զինուոր, եւ կկատարեն այն ծառայութիւնը՝ ստորին կարգի զինուորացի հաւասար որ կօչմամբ մտած են. միայն իրենց մէկ քանի թեթեւութիւններ կլինին՝ որ պիտի որոշուին Պատերազմի Ոստիկաններէն:

179. Ինքնակամ զինուորները որպէս զի զանազանութիւն կօչմամբ ի ծառայութիւն մտած ստորին կարգի զօրքերէն, առանձին դրսի նշան մը կունենան իրենց հագուստին վրայ. միայն թէ այն նշանին զօրութեամբը ամենեւին կարգէ դուրս արտօնութիւն մը չեն ունենար:

180. Ինքնակամ զինուորները սահմանեալ հարցաքննութիւնները բռնելէն ետեւ, եթէ մերձաւոր իշխանաւորաց դատողութեամբը արժանաւոր երեւան, կլինին, 1) *ուկր-ափիցեո* (1) — հասարակ զինուորի պաշտօն կատարելէն ետեւ՝ իբրեւ ինքնակամ զինուոր—զօրութեամբ 173 յօդուածին առաջին կարգի մէջ համրուող՝ *երկու ալիս*, իբրեւ երկրորդ կարգի՝ *չորս ալիս*. եւ իբրեւ երրորդ կարգի՝ *մեկ սարի*: 2) *ափիցեո*, յետ ծառայելոյ ստորին կօչման մէջ՝ իբրեւ ինքնակամ զինուոր առաջին կարգի՝ *երեք ալիս*. իբրեւ երկրորդ կարգի՝ *վեց ալիս*. եւ իբրեւ երրորդ կարգի՝ *երեք սարի*: Ափիցեո վնեղը համար բաց յայնմանէ կպահանջուի որ ամենայն ինքնակամ զինուորութեան գրուողներ, եւս եւ առաջին կարգի անձինքը, ծառայած լինին զօրաց մէջ գոնէ մէկ վրանաբնակ գումարման ժամանակ:

(1) гвардія. — (2) лагерные сборы.

(1) унтеръ-офицеръ.



181. Ինքնակամ զինուորներէն *աֆիցեռ* եղողներուն մէջ անոնք որ ըստ 173 յօդուածին՝ երկրորդ կարգին կվերաբերին, այսինքն հարցաքննութիւն բռնած են ըստ առանձին նախագծի: ուսմանց (յօդ. 173, պարբ. 3), կընդունին *աֆիցեռի* աստիճանին հետ կապուած իրաւունքները ըստ վիճակի եւ ըստ քաղաքական ծառայութեան միայն այն ատեն՝ երբոր *աֆիցեռի* կոչման մէջ գտնէ երեք տարի ծառայած են ի կարգի զօրաց:

182. Ինքնակամ զինուորները կարող են արձակուրդ ընդունիլ մինչեւ չորս ամիս: Այն ժամանակը որ կանցընեն արձակուրդի միջոցին, դուրս կձգրուի թէ՛ ներգործական ծառայութեան ժամանակէն, եւ թէ՛ այն ժամանակներէն որ սահմանուած են *ռևիր-աֆիցեռ* եւ *աֆիցեռ* ինելու համար:

183 ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ *իստերու* ուսումնարանին (1) եւ զինուորական դպրոցաց այսինքն հետեւակազօրաց, Նիկողայոսեան հեծելազօրաց, Նիկողայոսեան զինուորական ճարտարապետաց, Միքայէլեան Թնդանօթածիֆ զօրաց եւ զինուորական տեղագրութեան առանձին դասարանաց աշակերտները, զինուորական պարտաւորութիւնը կատարելու կողմանէ ինքնակամ զինուոր գրուած կհամրուին, եւ նոցա ծառայու-

(1) пажескій корпусъ.

Թեան ժամանակը հաշուելու ատեն՝ այն կանոնը կպահուի՝ որ դրուած է 103 յօդուածով: Այն ուսումնարանաց աշակերտները երբոր ի ծառայութիւն կընդունուին՝ թէ՛ իբրեւ *աֆիցեռ* եւ թէ՛ իբրեւ ստորին կարգի զինուոր, իրաւունք կուսենան որ նոցա ծառայութեան ընդհանուր ժամանակին մէջ հաշուի դրուի նաեւ այն ժամանակը յորում ուսում առած են վերոյիշեալ ուսումնարանաց եւ փաժերու զինուորական դպրոցին առանձին դասարաններուն մէջ. իսկ ի ներգործական ծառայութեան պարտական են նորա մնալ *սարի ու կես* իւրաքանչիւր ուսումնական տարւոյն համար՝ զոր անցուցեր են ուսումնարանին մէջ: Ծառայութեան ժամանակները այսպէս կհամրուին, ընդհանուրը նոցա ուսումնարան մտած ատենէն ետեւ եկող ամսոյն առաջին օրէն, իսկ ներգործական ծառայութեանը— ուսումնարանէն արձրկուելէն ետեւ եկող ամսոյն առաջին օրէն:

184. Նախընթաց 183 յօդուածին մէջ յիշատակուած ուսումնարանաց այն աշակերտները՝ որ ո՛ր եւ իցէ դասարանի ամբողջ ընթացքը չաւարտած արձրկուել եւ պարտական են մնալ ներգործական ծառայութեան մէջ նոյնպէս մէկ ու կէս տարի՝ իւրաքանչիւր ուսումնական տարւոյն համար զոր անցուցած են ուսումնարանին մէջ:



Իսկ *ափիցեռ* այն ժամանակը միայն կրնան լինել՝ երբոր ամբողջ մէկ տարի զօրաց շարքին մէջ ծառայեն :

185. Քաղաքական տեսչութեան ներքեւ գրտնող ուսումնարանաց մէջ Տէրութեան ծախքով ուսում առած անձանց արգելք չկայ զինուորական ծառայութիւնը կատարելու իբրեւ ինքնակամ զինուորներ : Այնու ամենայնիւ նորա ըստ քաղաքական տեսչութեան զիրենք պարտաւորող ծառայութիւնը ա՛յն ատեն կկատարեն՝ երբոր արդէն վերջացընեն այս կարգադրութեան մէջ ներգործական ծառայութեան համար որոշուած ժամանակները :

**Բ. Ծովային զօրաց մեջ ինֆանտրի գրտողներուն վրայ .**

186. Որոնք որ ինքնակամ զինուոր կուզեն գրուել ծովային զօրաց մէջ, բաց ի 171 եւ 172 յօդուածներուն մեջ նշանակուած պայմաններէն կպահանջուի անոնցմէ՝ որ հարցաքննութիւն բռնած լինին ծովային իշխանութեան դրած կարգովը, եւ ուսմանց այն նախագիծներուն համեմատ՝ որ կպահանջուին ծովային զօրաց այս կամ այն տեսակ ծառայութեանը մտնողներէն՝ որուն որ ինքնակամ գրուողը կուզէ ծառայել :

187. Ծովային զօրաց մէջ ինքնակամ գրուողները պարտական են մնալ ի ներգործական ծառայութեան երկու տարի, եւ ի պահեստի հինգ տարի :

188. Ինքնակամ գրուողները կընդունուին ի ծառայութիւն ծովային զօրաց բոլոր տարուան ընթացքին մէջ : Նոցա ծառայութեան ժամանակները կհամրուին ըստ 174 յօդուածին :

189. Ինքնակամ գրուողները կմտնեն ի ծառայութիւն թէ՛ յատկապէս ծովային զօրաց մէջ, եւ թէ՛ անոր առանձին մասերուն մէջ իբրեւ *եռնիկ* (1) : Այս կամ այն մասին ընտրութիւնը ինքնակամ գրուողներուն կամքին կձգուի, բայց այս պայմանաւ՝ որ նոցա թիւը իւրաքանչիւր մասին մէջ աւելի չլինի քան զայն չափը՝ որ դրուած է Ծովային Ոստիկանարանէն :

190. Որպէս զի ինքնակամ գրուողները *կարսկ-մառիկ* (ծովային անձնապահ) (2) եւ *ֆոլսմֆօռ* (ուղեցոյց) (3) լինին, պարտական են սահմանեալ հարցաքննութիւնը բռնելու, եւ գոնէ մէկ վեց ամսական արշաւանք անելու : Առաջին աֆիցէրի աստիճան առնելու երիցութիւնը կամ առաջնութիւնը (4) յայնմ աստիճանի կտրրուի այն օրէն՝ յորում կատարած կլինին այս բանիս

(1) юнкеръ. — (2) гардемарины. — (3) кондукторъ. — (4) старшане 180.



համար ծովային զորաց իշխանութենէն դրուած պայմանները . եւ այն ատեն *կարսկեստիս* եւ *ֆոլսուսթրոն* ասուելու կոչման մէջ մնալու ժամանակը կհամարուի այն օրէն՝ յորում կատարած կլինին ներգործական ծառայութեան ժամանակները՝ որ դրուած են 173 յօդուածին մէջ : Իսկ եթէ աֆիցէնի աստիճան առնելու համար վախճանական հարցաքննութիւնը չբռնէ մէկը յիւրում ժամանակի՝ նոյն իսկ ինքնակամ գրուողին պակասութեամբը, այն ատեն աֆիցէնական աստիճանին մէջ երիցութիւնը կտրուի անոր միայն հարցաքննութիւնը բռնած օրէն :

191. Ինքնակամ գրուողները որպէս զի *կարսկեստիս* կամ *ֆոլսուսթրոն* լինին ի պահեստ գրուած ժամանակը, այս կոչմանց համար սահմանեալ հարցաքննութեան տակ կձգուին :

192. Ինքնակամ գրուողները ի ծովային զինուորութիւն՝ եթէ երկու տարի ծառայելէն ետեւ՝ 190 յօդուածին մէջ նշանակուած հարցաքննութիւնը չբռնեն, պահեստի զօրաց կարգը կհամարուին *ուսթր-աֆիցէնի* աստիճանով, 173 յօդուածով սահմանեալ ժամադրութեամբ, դուրս հանելով ծովային զօրաց մէջ արած ծառայութեան ժամանակը : Այնպիսի անձանց արգելք չլինիր շարունակել ներգործական ծառայութիւնը *ուսթր-աֆիցէնի* աստիճանով նաեւ ծովային զօրաց մէջ, եթէ իրենք ցանկան, եւ իշխանու-

թիւնը օգտակար ճանչնայ զանոնք ծառայութեան . ապա եթէ ոչ՝ արգելք չլինիր նոցա շարունակելու ներգործական ծառայութիւնը հասարակ զօրաց մէջ՝ այն ընդհանուր կանոններուն համեմատ՝ որ դրուած են ցամաքային զօրաց մէջ ինքնակամ գրուողներուն համար :

193. Ծովային զօրաց մէջ ինքնակամ գրուողները հրաման ունին ազատ բնակարաններու մէջ ապրելու : Նաւերու վրայ ճամբորդութիւն անելու ժամանակ նոքա կվայելեն ծովային սնունդը (1) ըստ կանոնի, եւ մինչեւ որ *կարսկեստիս* կամ *ֆոլսուսթրոն* դառնան՝ Տէրութենէն կընդունին իրենց հագուստը :

194. Բաց ի վերոյիշեալ կանոններէն (յօդ. 186 եւ հետ.) ինքնակամ ծովային զօրաց մէջ գրուողներուն վրայ կզօրեն նաեւ 20, 181 եւ 182 յօդուածներուն կանոնները :

195. Ծովային դպրոցին, ծովային իշխանութեան արուեստական դպրոցին եւ Նիքոլայեվի մէջ ետնքերեան դասարաններուն աշակերտները, նմանապէս վարժողական նաւերուն ու դպրոցներուն համբակները (2), զինուորական պարտաւորութիւնը կատարելու կողմանէ կհամարուին ծովային զօրաց մէջ ինքնակամ գրուողներ :

(1) морское довольствие. — (2) юнги учебныхъ кораблей.



եւ անոնց ծառայութեան ժամանակը համբերու  
ատեն կպահուի 103 յօդուածին մէջ նշանակուած  
կանոնը :

196. 195 յօդուածին մէջ նշանակուած դպրոց-  
ներուն աշակերտները, նմանապէս այն ինքնա-  
կամ զինուոր գրուողները՝ որ նոյն դպրոցներուն  
դասարաններէն կամ նիքոլայեվի եունքերեան  
դասարաններէն անցած են, եւ ընդհանրապէս  
այն ամենայն ինքնակամ գրուողները՝ որ մաս-  
նաւոր ծովային ուսմանց կրթութիւն առած են՝  
Թագաւորական գանձէն նպաստ ընդունելով,  
երբոր *կարսկեստիև* կամ *folismfpon* դառնան՝  
պարտական են մնալ ներգործական ծառայու-  
թեան մէջ *մկկ ու կիս սարի* դպրոցին մէջ անցու-  
ցած իւրաքանչիւր ուսումնական տարւոյն հա-  
մար : Իսկ համբալկները (1) ներգործական ծա-  
ռայութեան մէջ կմնան *սաւր սարի*, եւ այն վեր-  
ջացնելէն ետեւ ուղղակի ազատագորաց կարգը  
կանցնին : Այն ժամադրութիւնը կհամբուի, ու-  
սումնարաններէն տասնըտօթը տարեկան դեռ  
չեղած արձրկուող համբալկներուն համար՝ այս  
հասակէն . իսկ այն համբալկներուն համար որ  
տասնըտօթը տարեկան լինելէն ետեւ արձրկուած  
են՝ իրենց արձակման օրէն :

(1) ЮНГЪ.

### ԳՒՈՒԽ ԺԳ.

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՅ  
ՎՐԱՅ ՊՍՏԱՀԱԾ ԳԱՆԳԱՏՆԵՐ.

197. Ձինուորական պարտաւորութեան համար  
որոշուած պաշտօնատեղեաց գործողութիւննե-  
րուն ու կարգադրութիւններուն վրայ կարելի է  
զանգատ ընել՝ Թէ՛ խօսքով եւ Թէ՛ գրով՝ քանի  
որ չեն անցած վարը յիշուած ժամանակները  
(յօդ. 201, 205 եւ 211) :

198. Խօսքով եղած զանգատները իւրաքան-  
չիւր պաշտօնարան առանձին գրքերու մէջ կան-  
ցնէ : Գանգատներուն հետ մէկտեղ կրնան ներ-  
կայացուիլ՝ անոնց շտկութիւնը հաստատող ո՛ր  
եւ իցէ տօքումէնմներ :

199. Գանգատ տուողին պէտք է տրուի, եթէ  
պահանջէ, ձեռագիր մը Թէ՛ նորա զանգատը  
ընդունուած է :

200. Գանգատներուն առանց վճռուելու մնա-  
ցածին պատճառաւ չեն կրնար դադրիլ զինուո-  
րական պարտաւորութեան պաշտօնարաններուն  
գործողութիւնները՝ երբ կվերաբերին ի ծառայ-  
ութիւն կանչելու եւ ընդունելու :



201. Այն գանգատները որ կլինին այն պաշտօնատեղեաց եւ պաշտօնատէր անձանց դէմ՝ որ մասնաւոր կոչողական ցուցակները կկազմեն, ասելով թէ ցուցակներուն մէջ անկանոնութիւններ եղած են, կրնան տրուիլ *երկու շաբաթուան* մէջ, հաշուելով այն օրէն՝ որ 118 յօդուածով որոշուած է իբրեւ վերջին ժամադրութիւն՝ մասնաւոր կոչողական ցուցակները ներկայացընելու:

202. Նախընթաց 201 յօդուածին մէջ նշանակուած գանգատները կրնան տրուիլ կամ անմիջապէս գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը զինուորական պարտաւորութեան, կամ թէ մասնաւոր կոչողական ցուցակները շարադրող պաշտօնատեղեաց կամ անձանց (յօդ. 102 եւ ծանօթ.), որոնք պարտական են անյապաղ ներկայացընել ուր ոք հարկն է:

203. Գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը՝ կըքննէ գանգատները՝ սնունց մատուցուած կարգովը՝ իւր առաջին գումարման ատենը: Եթէ հարկաւոր երեւնայ՝ գանգատին խօսքերուն նայելով՝ տեղեկութիւններ հետաքել բուն տեղը, կյուղարկուի այս բանին համար պաշտօնարանին անդամներէն մէկը:

204. Գանգատի մը վրայ լինելու վճիռը պէտք է տրուի *երկու շաբաթուան* մէջ, պաշտօնարանին մէջ գանգատի՝ լուծած օրէն հաշուելով, եւ գանգատը տուողին պիտի յայտնուի *երեք օրուան*

մէջ: Գանգատը տուողին խնդրանօքը կտրուի անոր արձանագրութեան (1) պատճէնը:

205. Գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանաց տուած վճռոյն դէմ գանգատները՝ թէ կոչողական ցուցակներուն ծառայութեանցը վերաբերութեամբ, եւ թէ արտօնութեանց որոշման, դրսի տեսքին նայելով տարիք որոշելու եւ զինուորական ծառայութեան պիտանի լինելու վրայ՝ կարբուին կուսակալութեանը կամ նահանգին զինուորական պարտաւորութեան պաշտօնարանը *յոս շաբաթուան* ժամադրութեամբ՝ վճռոյն յայտարարութեան օրէն:

206. Կուսակալութեան կամ նահանգին զինուորական պարտաւորութեան պաշտօնարանին տրուելու գանգատները կտրբուին այն գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանը՝ որոյ դէմ են գանգատները: Այն պաշտօնարանները պարտական են գանգատը ընդունելէն ետեւ՝ *եօրը օրուան* մէջ յուղարկել զայն հարկ եղած տեղը, հետը դնելով գանգատի նիւթին վերաբերեալ՝ պաշտօնարանին արձանագրութեան պատճէնը, եւ հարկաւոր տեղեկութիւններն ու բացատրութիւնները:

207. Եթէ կուսակալութեան կամ նահանգի զինուորական պարտաւորութեան պաշտօնարանը

(1) протоколъ.



Ֆանչնայ՝ Թէ կոչողական ցուցակին մէջ դրուած բաներուն ծառայութեանը դէմ եղած գանգատները ընդունուելու արժանի են, այս բանիս վերայ տեղեկութիւն կուտայ գաւառական, շրջանակային կամ քաղաքական պաշտօնարանին, որպէս զի կոչողական ցուցակագրին մէջ պէտք եղած փոփոխութիւնները լինին:

208. Կուսակալութեան կամ նահանգի գինուորական պարտաւորութեան պաշտօնարանը պարտական է՝ նորէն քննելով ստուգելու ո՛րք եւ իցէ անձ որ գանգատ տուած է՝ իրեն համար թուու վկայութիւն տրուածին վրայ՝ գինուորական, ծառայութեան պիտանի լինելուն, կամ դրսի աեսքին նայելով տարիքը որոշուելուն: Եթէ գանգատ տուողները ուրիշ անձինք են, վերաքննութիւնը ա՛յն ատեն միայն կլինի՝ երբոր պաշտօնարանը անպատճառ հարկաւոր Ֆանչնայ:

209. Կուսակալութեան կամ նահանգի գինուորական պարտաւորութեան պաշտօնարանին իրեն վրայ տրուած գանգատին համար արած վճիռները կճանուցուին գանգատները՝ տուողներուն *կորը օրուան* մէջ՝ վճռոյն տրուած յօրէն հաշուելով:

210. Կուսակալութեան կամ նահանգի պաշտօնարանին տուած վճիռները այն գանգատներուն համար՝ որ եղած են կոչողական ցուցակներուն մէջի ճռութեանը, եւ կամ դրսիչտեսքին

նայելով տարիք որոշուելուն դէմ, վախճանական կիսամարուին, եւ կարելի չէ անոնց դէմ նորէն գանգատ տալ:

211. Երբոր կուսակալութեան կամ նահանգի պաշտօնարանը վճիռ մը տայ այն գանգատներուն համար՝ որ կլինին արտօնութեանց անկանոնութեանը կամ մէկուն տրուած վկայականին դէմ՝ գինուորական ծառայութեան յարմար լինելուն, այն վճիռներուն դէմ հրաման կայ գանգատ տալու Կառավարիչ Սենատին (առաջին տեփարթամենին) *երկու ամսուան* ժամադրութեամբ՝ վճռոյն ճանուցուած օրէն: Այնպիսի գանգատները կտրբուին վճիռը տուող պաշտօնարանին, եւ նա պարտական է մատուցանել գանոնք Սենատին՝ հանդերձ իրեն արձանագրութեամբը եւ հարկաւոր տեղեկութիւններով եւ բացատրութիւններով *կորը օրուան* մէջ՝ յետ գանգատը ընդունելուն:

Գ. Լ. ՈՒԻ Ս. Գ.

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆՍՅ ԶԱՆՑԱՌՈՒԹԵԱՆԸ ԳԷՄ ՊԱՏԻՃՆԵՐ.

212. Եթէ կոչողական Թաղերու մէջ գրուած անձինքը (յօդ. 95 եւ 97) չկատարեն այս իրենց պարտաւորութիւնը մինչեւ այն տարւոյն վերջը՝



յորում իրենց 20 տարեկան հասակը լման կլինի, անոնց պատիժն է, դրամական տուգանք (շրոսֆ)՝ մինչեւ հարիւր ըուսլի:

213. Որոնք որ իրենց յատուկ յանցանքովը կոչողական ցուցակին մէջ չեն գրուած, եւ այն պատճառաւ՝ ըստ 158 յօդուածին՝ պարտական են զինուորական ծառայութեան գրուելու՝ զըրկուելով վիճակ հանելու իրաւունքէն, բայց անյարմար երեւցած են ծառայութեան, եւ այն ոչ կամաւոր կրճատութեամբ անդամոց (յօդ. 218), անոնց պատիժն է,

բանտ դրուիլ քաղաքական իշխանութեան ներքեւ՝ երկուսէն մինչեւ չորս ամիս ժամանակով, կամ կալանաւորութիւն (1) ոչ աւելի քան երեք ամիս:

214. Նորա որ իրենց հանած վիճակին թուահամարին ուժովը պարտական են հաստատուն զօրաց կարգը անցնիլ, եթէ չներկայանան՝ առանց յարգելի պատճառներու, մինչեւ այն ատեն՝ յորում զինուորական պարտաւորութիւնը կատարելու կոչուածները պիտի քննուին (յօդ. 144), ոչ միայն զինուորական ծառայութեան կդրուին՝ եթէ պիտանի են առ այն, այլ եւ նոցա պատիժն է,

կալանաւորութիւն՝ ոչ աւելի քան երեք ամիս:

(1) арестъ.

215. Նորա որ զնուութեան ատենը կիմացընեն թէ այնպիսի ծածուկ հիւանդութիւն մը ունին որ արգելք է զինուորական ծառայութեան, եթէ հիւանդանոցի մէջ փորձուելէն ետեւ տեսնուի որ նոցա ասածը սուտ է, ոչ միայն ծառայութեան կառնուին, այլ եւ նոցա պատիժն է

բարեկարգութեան պատուհաս մը (1) ըստ դատողութեան զինուորական գըլխաւորին:

216. Հաստատուն զօրաց կարգը ընդունուողները (յօդ. 155) կամ թէ ընդունուելու պարտական եղողները, իրենց հանած վիճակին թուոյն ուժովը, եթէ որոշուած ժամանակին չներկայանան՝ առանց յարգելի պատճառներու, նոցա կտրուին

այն պատիժները՝ որ սահմանուած են ծառայութեան չներկայացողներուն՝ ըստ 146 յօդուածի ձինուորական կարգադրութեան յաղագս պատժոց:

217. Եթէ մէկը զինուորական պարտաւորութենէ փախչելու մտքով, կամ զայն կատարելու ատեն՝ այնպիսի արտօնութիւններ վայելելու համար՝ որ իրեն չեն պատշաճիր՝ ո՛ր եւ իցէ խաբէական միջոցներ բանեցընէ, այնպիսին ոչ

(1) дисциплинарное взыскание.



Վիայն կառնուի զինուորական ծառայութեան, այլ եւ նորա պատիժն է,

առանձին բանտարկութիւն զինուորական բանտի մէջ՝ չորս ամսէն ու երկու շաբաթէն մինչեւ վեց ամիս ժամանակով:

218. Նախընթաց յօդուածին մէջ սահմանեալ պատիժը կառնուն՝ նոյնպէս զինուորական ծառայութեան առնուելէն ետեւ՝ նաեւ նոքա որ զինուորութենէ փախչելու մտքով՝ իրենք իրենց մէ կամ ուրիշներու գործակցութեամբը իրենց մէկ կամ միւս անդամը կկտրեն, իրենց վրայ վերք կբանան, կամ ուրիշ ո՛ր եւ իցէ կերպով կվնասեն իրենց առողջութեանը:

219. Այն անձինքն որ սահմանեալ ժամանակին չեն ներկայացած (յօդ. 216), ուստի եւ զօրաց մէջ ընդունուած են իրենց տարեկիցներուն համար նշանակուած ժամանակէն ուշ (յօդ. 155), նոցա ծառայութեան ժամանակները կհամրուին, — առաջին վեց ամսուան ընթացքին մէջ ընդունուածներուն համար՝ այն տարւոյն յուլիսի 1-էն, իսկ երկրորդ վեց ամսուան մէջ ընդունուածներուն համար՝ նոցա զօրաց մէջ մտած տարիէն ետքը եկող յունուարի 1-էն:

220. Այն անձինքը որ նշանակուած են 216 եւ 217 յօդուածներուն մէջ, եթէ անընդունակ լինին զինուորական ծառայութեան, եւ կամ ձեռք

ընկնին միայն այն ատեն՝ երբ երեսուն չորս տարեկան եղած են, նոցա պատիժն է,

քաղաքական բանտ դրուիլ, ա) այն անձանց՝ որ նշանակուած են 216 յօդուածին մէջ—չորսէն մինչեւ ութը ամիս ժամանակով, եւ բ) այն անձանց՝ որ նշանակուած են 217 յօդուածին մէջ—ութը ամսէն մինչեւ մէկ տարի ու չորս ամիս:

221. Որոնք որ կամաւորապէս պատճառ եղած են ուրիշին անդամատուութեանը (1) անոր կամօքը կամ անոր հաւանութեամբը, որպէս զի արգելք լինին նորա զինուորական ծառայութեան մըտնելուն, եւ ընդհանրապէս նոքա որ ի՛նչ եւ իցէ կերպով օգնած են անդամոց վնաս հասցնելու, անոնց պատիժն է,

քաղաքական բանտարկութիւն՝ ութը ամսէն մինչեւ մէկ տարի ու չորս ամիս ժամանակով:

Երբոր մէկը ուրիշի մէկ կամ միւս անդամը կտրէ կամ վնասէ կամաւորապէս, բայց առանց նորա կամքին կամ հաւանութեանը, անոր կտրըուին այն պատիժները որ Գլխապարտութեան օրինաց մէջ նշանակուած են անոնց՝ որ կամաւ եւ գիտութեամբ ուրիշի

(1) изувѣченіе.



մէկ տեղը կկտրեն, կամ զուրիշը կվի-  
րաւորեն, կամ ուրիշ կերպով մը մարմ-  
նական վնաս կհասցընեն մէկուն:

222. Ուրիշներուն անդամատուութեանը պատ-  
ճառ եղողներուն դատաստանը կքննուի՝ նաեւ  
առանց նայելու այն անձանց գանգատներուն՝  
որոց վրայ եղած է անդամատուութիւնը, կամ ու-  
րիշ կերպով առողջութեան վնաս հասցընելը:

223. Նոքա որ խրատ կուտան ուրիշի՝ այս  
Կարգադրութեանս մէջ դրուած պարտականու-  
թիւններէն փախչելու, նմանապէս անոնք որ  
կօզնեն փախչողներուն կամ կպահեն զանոնք  
որ զինուորութեան չերթան, նոցա կտրուին

այն պատիժները որ ընդհանուր  
կանոններով որոշուած են յանցանքի  
գործակիցներուն, նոցա վրայ գործա-  
դրելով անպատճառ վերոյիշեալ պա-  
տիժներէն զանոնք՝ որ կապուած չեն  
զինուորական ծառայութեան տրուե-  
լուն հետ:

224. Զինուորական պարտաւորութենէ փախ-  
չողներուն վրայ եւս կտարածուին այն ամենայն  
ընդհանուր կանոնները՝ որ դրուած են վաղնջա-  
կանութեան վրայ (1):

*Ստորագրեաց, Նախագահ Կայսերական Խոր-  
հրդարանին ԿՈՍՏԱՆԴԻՆ.*

(1) ДАВНОСТЬ.

(Զինուորական պարտաւորու-  
թեան Կարգադրութեանը 53  
յօդուածին վրայ Յաւելուած):

*Ի ընտրքին դրուած է, ԻՆՔՆԱԿԱԼ  
ԿԱՅՍՐՆ Հաճեցաւ անքէ անցընել,  
Ի Ս. Փեթերպուրկ,  
Ի 1 Յունուարի 1874.*

Ստորագրեաց, Կայսերական Ատենադպիր Տ. Սոյւքի.

ՅՈՒՑԱԿ ԿԱՐԳ ԿԱՐԳ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ  
ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՍԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ.

*Ս. կարգ, — Բարձրագոյն Ուսումնարաններ.*

ա) ՈՒՂԱՓԱՌ (ՌՈՒՍԱՅ) ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍ-  
ՉՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ.

Հոգեւոր ձեմարան. Духовная академія.

բ) ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՈՍԻԿԱՆԱՐԱՆԻ ԻԵՒԱՆՈՒ-  
ԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ.

Համալսարաններ:  
Կայսերական պատմա-  
կան եւ բանասիրա-  
կան Ուսումնարան ի  
Փեթերպուրկ:

Университеты.  
Императорскій историко-  
филологическій инсти-  
тутъ въ С. Петер-  
бургѣ.



Լիկեոններ, Նիկոլ ԱՅ-  
ՈՍ ԿՈՅՍՏՆՈՒՊՈՅՆ  
լիկեոն ի Սոսկուս  
(համալսարանական  
ընթացքի առաջնորդ-  
ուն համար), Տեմի-  
սովեան լիկեոն իրա-  
ւարանութեան՝ Եա-  
րուսլաւի մէջ, և Պեդ-  
պոռնսօ ի յիսանին լի-  
կեոնը ի Նեմին :

Լազարեան նեմարան ա-  
րեւելեան լեզուաց ի  
Սոսկուս (առանձին  
դասարաններուն մէջ  
ուսում առածները) :

Գիւղական ճնշում-  
քեան և անտառազի-  
տութեան ուսումնա-  
րան ի Նորն Աղե-  
սանդրիա :

Անասնաբուժութեան ու-  
սումնարաններ ի Խա-  
զան, ի Խարնով և  
ի Տերփթ :

Գ) ԿՈՅՍՏՆՈՒՊՈՅՆ ՊԱՍՏԻՆ ՈՍԵՒՎՈՒՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԵՆԻԸ  
ՆԵՐԵՆԻԸ.

ԿՈՅՍՏՆՈՒՊՈՅՆ Նեմարան  
գեղարուեստից (անոնց  
համար որ արժանա-

Лицей : ЦЕСАРЕВИЧА  
НИКОЛАЯ въ Москвѣ  
(для воспитанниковъ  
университетскаго кур-  
са), Демидовскій ю-  
ридическій въ Яро-  
славѣ и князя Без-  
бородко въ Нѣжинѣ.

Лазаревскій институтъ  
восточныхъ языковъ  
въ Москвѣ (для про-  
шедшихъ специальныя  
классы).

Институтъ сельскаго хо-  
зяйства и лѣсоводства  
въ Новой-Александрин

Ветеринарныя институты  
въ Казани, Харьковѣ  
и Дерптѣ.

ИМПЕРАТОРСКАЯ ака-  
демія художествъ (для  
достоенныхъ званія

ցած ևն կոչուելու դա-  
սական արուեստագիտ-  
1 և 2 աստիճանի ըս-  
տեմնայն մասանց զե-  
ղարուեստին) :

классныхъ художни-  
ковъ 1 и 2 степени  
по всемъ отраслямъ  
искусства).

Գ) ԱՐՏԱՐԵՆ ԳՈՐԾՈՅ ՈՍԵՒՎՈՒՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԵՆԻԸ.

Արտարին գործոց ասիա-  
կան տեղարքամերին  
մէջ՝ Աւսումնական  
համին արեւելեան լե-  
զուաց :

Учебное отдѣленіе во-  
сточныхъ языковъ при  
Азіатскомъ Департа-  
ментѣ Министрства  
Иностранныхъ Дѣлъ.

Ե) ԵՂԵՐՍԵՆ ՈՍԵՒՎՈՒՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԵՆԻԸ.

Էլեմնային ուսումնարան  
Փերերպուրկի Գործնա-  
կան և արուեստական  
ուսումնարան :

Горный институтъ.  
С. Петербургскій прак-  
тический технологиче-  
скій институтъ.

Րիկայի բազմարուես-  
տեան դպրոց :

Рижское политехническое  
училище.

Գ) ՊԱՏԵՐՍԲՈՒՐԻ ՈՍԵՒՎՈՒՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԵՆԻԸ.

ԿՈՅՍՏՆՈՒՊՈՅՆ Բժշկական  
և վիրաբուժական նե-  
մարան ի Փերերպուրկ  
(ամեն բաժիններուն  
համար) :

ИМПЕРАТОРСКАЯ ме-  
диико-хирургическая ака-  
демія въ С. Петер-  
бургѣ (по всемъ от-  
дѣленіямъ).



Զինուորական իրաւագի-  
տական դպրոց ի Փե-  
րեբուրկ :

Военно-юридическое учи-  
лище въ С. Петербургѣ

է) ՆԵՐԲԻՆ ԳՈՐԾՈՅ ՈՍՏԻՎԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԲԵՒՐԿ :

Շինողութեան դպրոց ի  
Փերեբուրկ :

Строительное училище въ  
С. Петербургѣ.

Հոգեւոր նեմարան Հռով-  
մեական կաթոլիկաց  
ի Փերեբուրկ :

Римско-католическая ду-  
ховная академія въ С.  
Петербургѣ.

Կոնսերւաց ԿՍՅՍԵՐՍԿԱՆ  
Երաժշտական ընկերու-  
թեան Ռուսաց (սիւի-  
լովի արժանացածնե-  
րուն համար) :

Консерваторія ИМПЕРА-  
ТОРСКАГО Русскаго  
музыкальнаго общества  
(для удостоенныхъ дип-  
ломовъ).

ը) ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՈՍՏԻՎԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԲԵՒՐԿ :

ԿՍՅՍԵՐՍԿԱՆ դպրոց ի-  
րաւագիտութեան ի Փե-  
րեբուրկ :

ИМПЕРАТОРСКОЕ учи-  
лище правовѣдѣнія въ  
С. Петербургѣ.

Կոստանդինեան զէտնա-  
շարական Ուսումնա-  
րան :

Константиновскій меже-  
вой институтъ.

Թ) ԱՐԳՈՒՆԻ ՍՍՅՈՒԱԾՈՅ ՈՍՏԻՎԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԲԵՒՐԿ :

Պետրոսեան Երկրագոր-  
ծական եւ անտառային  
նեմարան մերձ ի Մոս-  
կուա :

Петровская земледѣльче-  
ская и лѣсная акаде-  
мія близъ Москвы.

Երկրագործական Ուսում-  
նարան Փերեբուրկի :

С. Петербургскій земле-  
дѣльческій институтъ.

ժ) ՃԱՆՏԱՐԱՐԱՆ ԶԱՂՈՐԻԱՅՈՒԹԵԱՆ ՈՍՏԻՎԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՍ-  
ՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԲԵՒՐԿ :

Ուսումնարան հարսարա-  
պէտաց հանապարհաց  
կցորդութեան :

Институтъ инженеровъ  
путей сообщенія.

լա) ՄՍՐԻՍՄՈՒ ԿՍՅՐՈՒՀՈՅՆ ՌՈՍՈՒՄԵԱՐԱՆԱՅ ՏԵՍ-  
ՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԲԵՒՐԿ :

ԿՍՅՍԵՐՍԿԱՆ Աղիտան-  
դրեան լիկեոն ի Փե-  
րեբուրկ :

ИМПЕРАТОРСКІЙ Алек-  
сандровскій лицей въ  
С. Петербургѣ.

ԿՍՅՍԵՐՍԿԱՆ Արուես-  
տական դպրոց ի Մոս-  
կուա (առանձնական  
ընթացքը աւարտողնե-  
րուն համար) :

ИМПЕРАТОРСКОЕ Мо-  
сковское техническое  
училище (для прошед-  
шихъ — специальный  
курсъ).

Բ կարգ, — Միջին ուսումնարաններ.

ա) ՈՂՂԱՓԱՌ (ՌՈՒՍԱՅ) ԴԱՌԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՉՈՒ-  
ԹԵԱՆ ՆԵՐԲԵՒՐԿ :

Հոգեւոր Սեմինարիաներ  
(զոնե երկրորդ դասա-  
րանին ընթացքը ա-  
ւարտողներուն համար) :

Духовныя семинаріи (для  
прошедшихъ курсъ не  
ниже втораго класса).



բ) ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՈՍԻԿԱՆԱԲԱՆԻՆ ՏԵՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԲԵՒՐ.

Կիմնագիաներ, որոց կարգին մեջ ԿՕՅՍԵՐՍ.ԿՕՆ մարդասիրական ընկերութեան կիմնագիանը (գրեւէ վեցերորդ դասարանին ընթացքը աւարտողներուն համար):

Նիժեկոռոսի Ա.դեփանդեան ուսումնարանը: Լազարեան հեմարանը արեւելեան լեզուաց (հասարակաց դասարանները աւարտողներուն համար):

Ռեվելի մեջ ասպետական դպրոց:

Քիւմի մեջ Պօղոս Կալականի վարժարանը:

Այլադաւան եկեղեցեաց հով գեմուող դպրոցները, ի Փերեպոլսկի Ս. Պետրոս եկեղեցւոյն, Ս. Աննա եկեղեցւոյն եւ Ռեժոռմարներուն եկեղեցւոյն հով, եւ Մոսկուայի մեջ Լուսեականաց Ս. Պետրոս եւ Պօղոս եկեղեցւոյն հով:

Гимназія, въ томъ числѣ гимназія ИМПЕРАТОРСКАГО человѣколюбиваго общества (для прошедшихъ курсъ не ниже шестаго класса).

Нижегородскій Александровскій институтъ. Лазаревскій институтъ восточныхъ языковъ (для прошедшихъ общіе классы).

Рыцарское Домское училище въ Ревелѣ.

Коллегія Павла Галагана въ Кіевѣ.

Училища при церквахъ иностранныхъ исповѣданій, въ С. Петербургѣ при церкви Св. Петра, при церкви Св. Анны и при реформатской церкви, и въ Москвѣ при лютеранской церкви Св. Петра и Павла.

Լիկեոն Կայսրոդոլոյն Նիկոլայուսի ի Մուկուա (կիմնագիական ընթացքի աւակերեւներուն համար):

Մասնաւոր կիմնագիաներ:

Ռեալնի կամ արդիւնական դպրոցներ, թէ եօրր դասարան ունեցողները եւ թէ վեց դասարան ունեցողները:

Բարձրագոյն ձեռագործական դպրոց ի Լոնի: Առեւտրական դպրոց յՕսեսայ:

Վարժապետական ուսումնարաններ որ հիմնուած են 1872 Մայիսի 31-ին հրատարակուած կանոններով ֆալսիֆական դպրոցաց վարժապետներ պատասխելու համար:

Лицей Цесаревича Николая въ Москвѣ (для воспитанниковъ гимназическаго курса).

Частныя гимназіи.

Реальныя училища, какъ семиклассныя, такъ и шестиклассныя.

Высшее ремесленное училище въ Лодзи. Коммерческое училище въ Одессѣ.

Учительскіе институты, образованные на основаніи положенія 31-го Мая 1872 года для приготовленія учителей городскихъ училищъ.

Գ) ԿՕՅՍԵՐՍ.ԿՕՆ ՊԱԼԱՏԻ ՈՍԻԿԱՆԱԲԱՆԻՆ ՏԵՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԲԵՒՐ.

ԿՕՅՍԵՐՍ.ԿՕՆ հեմարան գեղարուեստից (անունը համար որ արժանա-

ИМПЕРАТОРСКАЯ академія художествъ (для удостоенныхъ званія



ցած են կոչուելու Գասական նարսարք երոզող աստիճանի, և դասարաններէ դուրս սովորող նարսարաց համար ըստ ամենայն բաժնից արուեստին):

Դպրոց նկարչութեան, քանդակագործութեան և նարսարպետութեան, Մոսկուայի գեղարուեստական ընկերութեան ձեռքը:

դ) ԳԱՆՁՈՒՅ ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՅՁՈՒԹԵԱՆ ՆԵՐԳԵՒՐԸ.

Գործնական նեմարան առեւտրական ուսմանց ի Մոսկուա:

Ուրալեան լեռնային դպրոց յԵկաթէրինպուրի:

Շովպոզնացական դասարանք Բ և Գ կարգի բացելալ կարգադրութեամբ որ ի 27 Յունիսի 1867:

ե) ՊԱՏԵՐԲՈՒՐԻ ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՅՁՈՒԹԵԱՆ ՆԵՐԳԵՒՐԸ.

Ջիմուռական դպրոց Փաժից ՆՈՐԻՆ ԿԱՅ.

классныхъ художниковъ 3-й степени и некласныхъ художниковъ по всемъ отраслямъ искусства).

Училище живописи, ваяния и зодчества, состоящее при Московскомъ художественномъ обществѣ.

Московская практическая академія коммерческихъ наукъ.

Уральское горное училище въ Екатеринбургѣ

Мореходные классы 2-го и 3-го разрядовъ, учрежденные на основаніи положенія 27-го Іюня 1867 г.

Пажескій ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕ-

ՍԵՐԱԿԱՆ ՄԵՇՈՒԹԵԱՆ (հասարակ դասարանները աւարտողներուն համար):

Ֆինլանդեան Գասերներու դպրոց (հասարակաց դասարանները աւարտողներուն համար):

Ջիմուռական կիմնազիա (գոնէ վեցերորդ դասարանի ընթացքը աւարտողներուն համար):

Վարժապետական սեմինարիա ի Մոսկուա:

Ստանձին դպրոցք ըրնդանորաձից զիմուռականաց, որ են հրարուեստականը և արուեստականը:

զ) ՇՈՎՊՈՅԻ ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՅՁՈՒԹԵԱՆ ՆԵՐԳԵՒՐԸ.

Շովպին դպրոց ի Փերերպուրի (հասարակաց դասարանները աւարտողներուն համար):

Շովպին արուեստական դպրոց ի Քոնցերպս (հասարակաց ընթացքը աւարտողներուն համար):

СТВА корпусъ (для прошедшихъ общіе классы).

Финляндскій кадетскій корпусъ (для прошедшихъ общіе классы).

Восенняя гимназія (для прошедшихъ курсъ не ниже шестаго класса).

Учительская семинарія въ Москвѣ.

Спеціальныя школы артиллерійскаго вѣдомства: пиротехническая и техническая.

Морское училище въ С. Петербургѣ (для прошедшихъ общіе классы)

Морское техническое училище въ Кронштадтѣ (для прошедшихъ общій курсъ).



է) ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՐԸ.

Հոգեւոր սեմինարիաներ  
Հռովմեական Կարո-  
լիկաց եւ Լուսաւոր-  
չական Հայոց :

Духовныя семинаріи: рим-  
ско-католическія и ар-  
мяно-григоріанскія.

Կրթարանք ԿՍՅՍԵՐԱԿԱՆ  
Երաժշտական ընկերու-  
թեան Ռուսաց (վկայա-  
կանի արժանի ելող-  
ներուն համար):

Консерваторія ИМПЕРА-  
торскаго Русскаго му-  
зыкальнаго общества  
(для удостоенных ат-  
тестатовъ).

բ) ԱՐԻՄԱՐԻԹԵԱՆ ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՐԸ.

Գլխոյն զեկնաչափ սե-  
ղագրաց :

Школа межевых топогра-  
фовъ.

Թ) ԿԱՅՐՈՒՀԻՈՅՆ ՄԱՐԻՍՄՈՒՆ ՈՐՈՒՄՆԱՐԱՆԱՅ ԻՏՈՒ-  
ՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՐԸ.

Նիկողայրոսեան վարժա-  
րան որոց ի Կաթինա:  
Առեւտրական դպրոցներ  
ի Փերեգրուրկ եւ ի  
Մոսկուա :

Гатчинскій Николаевскій  
сиротскій институтъ.  
Коммерческія училища:  
С. Петербургское и  
Московское.

Գ Կարգ, — Ստորին Ուսումնարաններ.

ա) ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆԻՆ ԻՏՈՒՆՈՒ-  
ԹԵԱՆ ՆԵՐՔԵՐԸ.

Քաղաքական դպրոցներ:  
Գաւառական դպրոցներ  
եւ անոնց հաւասար  
դպրատներ Տոնի գո-  
րականաց եկեղիս մէջ:

Городскія училища.

Уездныя училища и рав-  
ныя съ ними училища  
въ землѣ войска Дон-  
скаго.

Վարժապետական սեմի-  
նարիաներ, սկզբնա-  
կան ժողովրդական  
դպրոցներու համար  
վարժապետներ պա-  
րաստելու ու Տերու-  
թեան ծախսով կիս-  
նավարուն, ի թիւ  
որոց եւ Վարժապետ  
Տերիքի ուսումնական  
ցրանակներուն մե-  
ջինները, նմանապիս  
Թարսրաց վարժապե-  
տական դպրոցները Ու-  
ժա եւ Սիմֆերոպոլ  
կաղաքներուն մէջ:

Учительскія семинаріи для  
приготовленія учителей  
начальных народныхъ  
училищъ, содержимыя  
правительствомъ, въ  
томъ числѣ и въ Вар-  
шавскомъ и въ Дерпт-  
скомъ учебныхъ окру-  
гахъ, а также Татар-  
скія учительскія школы  
въ Уфѣ и Симферополѣ.

Կասարիներան վարժապե-  
տական ուսումնարան  
ի Թամպով:

Екатерининскій учитель-  
скій институтъ въ Там-  
бовѣ.

Երկրական վարժապետա-  
կան սեմինարիաներ

Земскія учительскія се-  
минаріи и школы, и-



ու դպրոցներ, որոց ուսումնական ընթացքը նոյն է տեղաբնակ վարժապետական սեփականներուն և քաղցին հետ, և վերջիններուն բանի մը իրաւունքները կըլայելեն :

Յեկերկու դասարան ունեցող քաղաքական դպրոցներ՝ Քիեվի, Փոսոլիայի ու Վոլիցիայի կուսակալութեանցը մէջ :

Յեկերկու դասարանով գիւղական դպրոցներ որ ազգային լուսաւորութեան Ոստիկանարանը բացած է քաղաքական գաւառներու աւելի բազմամարդ և կեդրոնական գեղերուն մէջ :

բ) ЧУВСТВУЮЩИЕ ПУБЛИЧНЫЕ УЧИЛИЩА

Պալատական մասունքներէցողաց :  
Թատերական դպրոցներ ի Փերերպուրկ և ի Մոսկուա :

мьющая одинаковый учебный курсъ съ правительственными учительскими семинаріями и пользующіяся нѣкоторыми правами по слѣдующимъ.

Двухклассныя городскія училища въ губерніяхъ Кіевской, Подольской и Волинской.

Двухклассныя сельскія училища, учреждаемыя Министерствомъ Народнаго Просвѣщенія въ наиболѣе многочисленныхъ и центральныя селахъ различныхъ уѣздовъ.

Придворная пѣвческая капелла.

Театральныя училища : С. Петербургское и Московское.

գ) СЛѢДУЮЩИЕ ПУБЛИЧНЫЕ УЧИЛИЩА

Սրոկանովեան դպրոց արուեստական նկարչութեան ի Մոսկուա :  
Փորձաւական դպրոց ի Փերերպուրկ :

Աղեհանդրեան արուեստական դպրոց ի Չեռնիովեց :

Շրէյկերեան դպրոց ի Լիւսիանս :

Շրջանային լեռնական դպրոց գործարանաց յեւաբերինպուրկ, ի Ջլաբոուսը և Քուելիներ, Պոկոուովսի ու Վորքինսի գործարաններուն մէջ :

Մովազնացական դասարան և կարգի :

Նաւորական դասարան Լիպաի փրոկիմնագիային մէջ :

Նաւապետական դպրոցներ ի Քեմի և յԱ. ֆանկելա :

դ) ЧУВСТВУЮЩИЕ ПУБЛИЧНЫЕ УЧИЛИЩА

Չիմուրական փոօկիմնագիաներ :

Строгановское училище технического рисования въ Москвѣ.

С. Петербургское пробирное училище.

Александровское техническое училище въ Череповцѣ.

Штейгерская школа въ Лисичанскѣ.

Окружныя горно-заводскія училища въ Екатеринбургѣ, въ Златоустѣ и на заводахъ: Кушвинскомъ, Богословскомъ и Воткинскомъ.

Мореходныя классы 1-го разряда.

Навигационный классъ при Либавской прогимназіи.

Шкиперскія школы въ Кемі и Архангельскѣ.

Военныя прогимназіи.



Ջինագործական դպրոցներ ի Թուլյա և յԻժեվ:  
Ջինուորական Ֆելժերներու դպրոցներ:

Оружейныя школы: Тульская и Ижевская.  
Военно-фельдшерскія школы.

Ե) ԾՈՎԱՅԻՆ ՈՍՏԻՎՈՆԱՐԱՆԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՆԸ.

Ֆելժերներու դպրոցներ:  Фельдшерскія школы.

Գ) ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՈՍՏԻՎՈՆԱՐԱՆԻՆ ՏԵՅՂՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՆԸ.

Քոլինիի աւետարանական լուսեականաց սեմինարիա Կարչինոյի մօտ, Ֆինլանդիոյ ծխական դպրոցներուն վարժապետներ պատասխելու համար:

Колпинская евангелическо-лютеранская семинарія близъ Гатчино, для приготовления учителей Финскихъ приходскихъ школъ.

Ե) ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՍՏԱՅՈՒՄՈՑ ՏԵՅՂՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՆԸ.

Ներագործական դպրոցներ, Կորիկոբեցի, Խարտովայի, Խազանի, և Մարիամեանը:  
Մոսկուայի գրեզական ցնեստութեան ընկերութեան երկրագործական դպրոցը:

Земледельческія училища: Горьгорьцкое, Харьковское, Казанское и Маринское.  
Земледельческая школа Московскаго общества сельскаго хозяйства.

Կորիկոբեցեան դպրոցին մէջ Երկրաշինական և գնահատական դասարանները:

Землестро - таксаторскіе классы при Горьгорьцкомъ училищѣ.

Ումանի դպրոցը պարտիզպանութեան և երկրագործութեան:

Уманское училище садоводства и земледѣлія.

Փենզայի և Պեսաարայի Բ կարգի պարտիզպանութեան դպրոցները:

Училища садоводства 2-го разряда: Пензенское и Бессарабское.

Նիժնիայի դպրոցը պարտիզպանութեան և այգեգործութեան:

Никитское училище садоводства и виноделия.

Լիսիցինի անտառային դպրոցը:

Лисицинское лѣсное училище.

Լիբեցիի քրտոյութեան դպրոցը (որ պիտի փակուի ըստ ԿՈՅՈՒՐՈՒ ԿՈՆ ճրամանին որ ի 10 ապրիլի 1872):

Липецкое егерское училище (подлежащее закрытію на основаніи ВЫСОЧАЙШАГО повелѣнія 10-го Апрѣля 1872 г).

Ը) ՀԱՆՍԱԳԱՐՀԱՅ ԿՅՈՐԴՈՒԹԵԱՆ ՈՍՏԻՎՈՆԱՐԱՆԻՆ ՏԵՅՂՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՆԸ.

Ուղեցոյցներու (ֆոսուֆրոններու) դպրոցները:  
Տիվիկեան երկաթուղեաց դպրոց ի Մոսկուա:

Кондукторскія школы.  
Дельвиговское желѣзнодорожное училище въ Москвѣ.



Ալեքսանդրեան ձեռագործական դպրոց երկարուղեաց յեղ :

Александровское ремесленное железо-дорожное училище въ Ельцѣ.

Արուեստական դպրոցներ երկարուղեաց :

Техническія железо-дорожныя школы.

В) ԿՈՅՄԱՐՈՒՋԻՈՅՆ ՄՍԲԵՍՄՈՒ ՌԻՍՈՒՄԵՆԱԿԱՆ ՏԵՉՈՒԹԵԱՆ ԵՆԲԵՆԵՐ.

Բոմիսարովեան արուեստական դպրոց ի Մոսկուա :

Комисаровская техническая школа въ Москвѣ.

Վարժապետական սեմինարիա Խասխարակուրեան սանր մեջ ի Փերեպուրկ :

Учительская семинарія при С. Петербургскомъ воспитательномъ домѣ.

Ֆելժերեան դպրոցներ Մոսկուայի Դասխարակուրեան սանր. Մոսկուայի Կարիգինեան հիւանդանոցիներ, եւ Փերեպուրկի Օպուխովեան ֆաղափական հիւանդանոցիներ :

Фельдшерскія школы: Московскаго воспитательнаго дома, при Московской Голицынской больницы и при С. Петербургской Обуховской городской больницѣ.



Դ կարգ, — Սկզբնական դպրոցներ

ա) ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՆՈՐՈՒԹԵԱՆ ՏԵՉՈՒԹԵԱՆ ԵՆԲԵՆԵՐ.

Սկզբնական ժողովրդական դպրոցներ որ գաւնազան անուններով կրեւորին, այսինքն ֆաղափական եւ գիւղական՝ մէկ դասարանով դպրոցներ, ծխական դպրոցներ, ծխական կէղեցական դպրոցներ, զօրականաց դպրոցներ :

Начальныя народныя училища подъ разными наименованіями: ошноклассныхъ городскихъ и сельскихъ, приходскихъ училищъ, церковно-приходскихъ школъ, войсковыхъ школъ.

բ) ԿՈՅՄԵՐՈՎԱՆ ՊԱԼԱՏԻ ՈՍԻԿԱՆԱԿԱՆԵՆ ՏԵՉՈՒԹԵԱՆ ԵՆԲԵՆԵՐ.

Ռուսդարեան դպրոց.

Егерская школа.

գ) ԵԼԵԻՄՏԻՆ ՈՍԻԿԱՆԱԿԱՆԵՆ ՏԵՉՈՒԹԵԱՆ ԵՆԲԵՆԵՐ.

Սկզբնական դպրոցներ գործարաններու հետագայ լեռնային շրջանակաց մեջ. Եկատեր.

Начальныя училища заводовъ, въ горныхъ округахъ: Екатеринбургскомъ, Гороблаго.



իկնալուրկի, Կորոպլա-  
կոսարսի, Պոկոսոլսի,  
Քամսո-Վորփին-  
սի, Զլարոսլոսի,  
Օլոննեցի, Լուկանսի,  
և Փերմի շրջանակին  
քեղանորի գործարան-  
ներուն մէջ :

датскомъ, Богослов-  
скомъ, Камско-Вотвин-  
скомъ, Златоустов-  
скомъ, Олонецкомъ,  
Луганскомъ и въ ок-  
ругъ Пермскихъ пу-  
шечныхъ заводовъ.

դ) ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՍՏԻՎԱՆԱԲԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՆԸ.

Թիկնապան զինուորնե-  
րուն որդոց համար  
դպրոցներ :

Школы солдатскихъ дѣ-  
тей войскъ гвардіи.

Զինուորական տղայոց  
դպրոց Ծննդեան ի Ռե-  
վի :

Рождественская школа для  
солдатскихъ дѣтей.

Զբիւարժ դպրոց զի-  
նուորական գաւաղաց  
Օխրայի վառօղի գոր-  
ծարանին հով :

Безплатная школа для  
солдатскихъ дѣтей при  
Охтенскомъ порохо-  
вомъ заводѣ.

ե) ԾՈՂԱՅԻՆ ՈՍՏԻՎԱՆԱԲԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՆԸ.

Ուսումնական ծովային  
խումբ և դպրոց գրա-  
գրաց և պահապանաց

Учебный морской эки-  
пажъ и школа писарей  
и содержателей.

զ) ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՈՍՏԻՎԱՆԱԲԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՆԸ.

Նկեղեցական դպրոցներ  
աւեսարանական լու-  
սերականաց և լուսա-  
ւորչական Հայոց :

Церковныя школы : еван-  
гелическо-лютеранскія  
и армяно-григоріанскія

Է) ԿԱՅՐՈՒՆԻՈՅՆ ՄԱՐԻՍՄՈՒՆ ՈՒՍՈՒՄԵԱԲԱՆԻՆ ՏԵՍ-  
ՉՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՆԸ.

Գիւղական դպրոցներ՝  
դաստիարակութեան քը-  
ներու շրջանակացը մէջ :

Сельскія школы въ ок-  
ругахъ воспитательныхъ  
домовъ.

ը) ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ՄՏԱՅՈՒԱԾՈՑ ՈՍՏԻՎԱՆԱԲԱՆԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ  
ՆԵՐՔԵՆԸ.

Զեռագրական դպրոց՝  
Կարիկորեցի եկեղազը-  
ձական դպրոցին հով :

Ремесленное училище при  
Горыгорѣцкомъ земле-  
дѣльческомъ училищѣ.

*Ստորագրեաց, Նախագան Կաշտեռական Խոր-  
հրդարանին ԿՈՍՏԱՆԴԻՆ.*



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆԵՐԱ. Գ. ՅԱՎՈԿԵԱՆՑ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆ

2013

« Ազգային գրադարան



NL0048839

1982





Գինն 60 քով.